


ՀԱՅՈՒԹՅՈՒՆ





Պահօնական պահպան
Հայրագետական սթուդի
Ա. ՏԱՐԵՎՈՅԻՆ



1946

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
1. Բերկրախց օրեր	4
2. Զ. ԹԱԹՈՒԼՅԱՆ.— Ինչ որ երազած էի	8
3. Հ. ՊՈՒԿԱՍՅԱՆ.— Հայրենադարձի օրագրից	10
4. Գ.Ա.ՐԵԳԻՄՆ ԿԱՄՈՂԻԿՈՍՈՒ.— Էջմիածնի և Կիլիկիո արքուները	12
5. Մայր Արռող	14
6. Կարողիկոսական Արռող Սսից էջմիածնին փոխադրելու 500-ամյակի առիթ	16
7. Օտար Եկեղեցի	18
8. Հ.ԵՄԱՐԱՆՆՅԻՆ.— Պողոս առաջյալի կյանքն ու գործունեությունը	19
9. Ս. ՄԱԼԻԱՍԱՅՅԱՆՅ.— Հայերեն և արարերեն Ազարանգեղոսները	24
10. Պրոֆ. Ս. Ա.ԲՐՈՅԱՄՅՅԱՆ.— Դավիթ Բաղիշեցու տարեգրությունը և նրա արժեքը հայ մատենագրության համար	35
11. Ե. ՇԱՀԱԳԻՉ.— Կարապետ Եզյան, Մկրտիչ Սահասարյան, Առն Տիգրանյան	43
12. Ն.— Մանուկ Աբեղյան	54
13. «Հայ տպագրի գրքի ցուցահանդեսը» Երևանի Պետական հանրային գրադարանում	58
14. Վ. ԲԴՈՅԱՆ.— Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարան»-ը	64
15. Օտարեները հայերի և Հայաստանի մասին	68
16. Սովետական Հայաստանում	73
17. Գաղուրահիայ կյանք	81
18. «Էջմիածն» ամսագրում 1946 թվի ընթացքում տպված նյութերի ցանկ	90
19. Նամակ խմբագրության	95

Խ Մ Բ Ե Գ Բ Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն Ը

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ
ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Խ Մ Բ Ե Գ Բ Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն Հ Ա Ս Ց Ե Ն

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՍԾ

Էջմիածն, „Էջմիածն“ ԱՍՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմանական ԽՍՀ, Եղման, Ռեդակցիա յանալու համար՝ Հայաստան

Redaction of the magazine „Echmiadzin“, Armenia, USSR



ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. Գ Ե Ո Ր Գ Ա Յ Զ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲՁՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ




Ա. ՕՀԱՅԱՆ (Հայկ)

Պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն


կազմություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն

կազմություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն

կազմություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն պատրիարքություն



ԲԵՐԿՐԱԼԻՑ ՕՐԵՐ



եր սրտերի համար չկան ա-
վելի շքնաղ, ավելի բերկրալից,
բովանդակալից ու նշանակալից
օրեր, քան նոյեմբերյան ու
դեկտեմբերյան օրերը:

Քսան իննը տարի առաջ, նոյեմբեր-
յան և նրան նախորդող օրերին, ուսաական
լամածավալ օվկիանոսը մեծ երկունքով էր
բռնված՝ Հոյի գալիքի լուսաշող հեռանկար-
ներով. աղեկոծքում, փոթորկվում էր նա
մարդկության պատմության մեջ նախընթա-
ցը չնմեցող մեծ բախումներից:

Ահեղ ու դաժան գոտեմարտեր էին տեղի
ունենում հին ու նոր աշխարհի միջև:

Եվ այդ գոռ մարտերի թեժ բոցերի միջից,
նոյեմբերյան օրերին էր, որ ճնվեց առնա-
կան նոր աշխարհը:

Տեղի ունեցավ Հոկտեմբերյան Մեծ ուսու-
լուցիան:

Ռուսական անծայրածիր արկրի վրա հը-
պարտորեն ծածանվել սկսեց ազատության
ալ կարմիր դրոշը:

Հոկտեմբերյան ուսուլուցիան վեր պարզեց
հանուր մարդկության նոր կյանքի ուղին
լուսավորող մշտավառ ջաջը:

Մարդկության պատմության մեջ նոյեմ-
բերը սկիզբ հանդիսացավ մի նոր, աննա-
խընթաց դարաշրջանի. նորագույն պատմու-
թյան ոսկետառ էջերը սկսվեցին նոյեմբե-
րով:

Խորտակվեց Ելրոպայի ժանդարմը՝ ցա-
րական կառավարությունը:

Ճիմսահատակ ոչնչացվեցին ցարական-
րանափական և կեղեքման ու շահագործ-
ման անարդ կարգերը:

Ընդմիջության կործանվեց ժողովուրդների
բանտ ցարական Ռուսաստանը և նրա փլա-
տակների վրա հազարականորեն վեր խոյացավ
Հոկտեմբերի ծնննդ՝ աշխարհի ամենադե-
մոկրատական սովետական պետությունը,
որը կոփեց ժողովուրդների եղբայրության,

համերաշխի գործակցության անխախտ ու
անսասան դաշինքը:

Հոկտեմբերյան ուսուլուցիան ազատություն
ու երշանկություն բերեց Ռուսաստանի բո-
լոր ժողովրդների համար:

Հոկտեմբերյան ուսուլուցիաի կենսաշող
ճառագայթները հեռավոր հյուսիսից տա-
րածվելով հասան մինչև նոյան տապանի
հանգրվան բիբլիական Արարատը ու ցրեցին
նրա շուրջն իշխող մղձավանջային խավարը:
Այդ կենսարքը ճառագայթների տակ հայ
բազմաշարքար ժողովուրդը, որ մահվան ան-
դրնդի եղրին էր կանգնեցվել, հնարավորու-
թյուն ստացավ իր խորը վերքերը բուժելու,
իր երշանիկ ու նոր կյանքը կոելու:

Հայ ժողովրդի նորագույն պատմության
էջերը փառակորվեցին դարձալ նոյեմբերյան
անդուցական օրերով. նոյեմբերը սկիզբ
հանդիսացավ նաև հայ ժողովրդի վերածն-
ման. նոյեմբերյան օրերին էր, որ սկիզբ
դրվեց հայ ժողովրդի նոր պետականությա-
նը, որը նա կորցրել էր վեց դար առաջ.
այսպիսով նոյեմբերը հայ ժողովրդի համար
կրկնակի թանգ է:

26 տարի առաջ, նոյեմբերին, ոռու մեծ
ժողովրդի եղբայրական օգնությամբ, հայ
ժողովրդը փշրեց նախնիների, արցոնքի
հովիտների տիսրահոչակ «Հերոսներ» դաշ-
նակ-մասուցերիստների զարկելի, անարդ լու-
ծը. դաշնակների, որոնք հայ ժողովրդին
մահվան դժուն էին հասցրել:

Բերկրալից օրեր ապրեց այս տարի նոյ-
եմբերին հայ ժողովուրդը. նա մեծ տգնորու-
թյամբ նշեց այդ երկու պատմական խոշոր
տարեթվերը — Հոկտեմբերյան ուսուլուցիաի
26-րդ և Հայաստանում սովետական կարգեր
հաստատվելու 26-րդ տարեդարձները:

Հայրենական մեծ պատերազմից. հետո
երկրորդ անգամն է, որ սովետական ժողո-

վուրդը նշում է այդ փառապանծ տարեգարձ ները խաղաղության պայմաններում, խաղաղություն, որի հաստատմանը իր բաժինը բերեց նաև հայ ազատամակը ու մարտումակ ժողովուրդը: Եվ այսօր հայ ժողովուրդը վայելում է այդ խաղաղության պատուները:

Մեծ Միության ելլայրական բոլոր ժողովուրդների հետ միասին նաև ձեռք է զարդել ստեղծագործ ու շինարար աշխատանքի:

Ծնորհիվ Հոկտեմբերյան մեծ ուլուցիցի հայաստանը ցարական գաղութից դարձել է սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքի հավասարագոր անդամը:

26 տարվա ընթացքում, վայիկելով եղբայրական ժողովուրդների աջակցությունը, նա աճել, զարգացել, հասակ է բաշել, դառնալով գերզոր Սովետական Միության առաջավոր ուսապուրբիկաներից մեկը. ծաղկել ու բարգավաճել են նրա արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, գիտությունը, մշակույթը, գրականությունն ու արթեստը:

Անցյալ 26 տարվա ընթացքում կառուցվել են հարյուրավոր խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, հիմք են դրվել արդյունաբերական նոր ճյուղերի: Զքնազ Սևանի հիդրոէներգիայի օգտագործմամբ Հայաստանը վերածվել է էլեկտրիֆիկացված երկրի. Զանգվիլ հիդրոէներգիան ները, Հայաստանի ժողովրածներության ալյուրաբախուն սրտերը, օրեօր նոր թափ են հայորդում մեր երկրի տնտեսության զարգացմանն ու ծավալմանը: Անձանաշելիորեն փոխվել է գյուղատնտեսության դեմքը. Հայաստանը ծածկվել է ջրանցքների խիտ ցանցով, բազմապատկվել են ցանքատարածությունները, արմատապես վերափոխվել է Հողի մշակման տեխնիկան՝ մեծ շափերով բարձրացնելով նրա բերքատուլությունը, ընդարձակվել է տեխնիկական կուլտուրաների մշակությունը, զարգացման նոր ու բարձր աստիճանի վրա է դրվել խաղողագործությունը, բարեկարգ ու վայելուց տեսք են ընդունել էլեկտրալույսերով ողողված քաղաքներն ու գյուղերը. 26 տարում ուսապուրբիկան վերածվել է համատարած գրագիտության երկրի, ծածկվել տարրական, միջնակարդ ու բարձրագույն դպրոցների խիտ ցանցով. Հիմնվել է Գիտությունների Ակադեմիան՝ իր գիտա-հետազոտական բազմաթիվ ինստիտուտներով հանդերձ. իրենց նոր ու լուսաշող Ուժեղագործ են ապրում հայ արթեստը, հայ գրականությունը:

Հայաստանի տնտեսականուու կուլուրա-կան բուռն վերելքը և աննախընթաց աճը,

26 փառապանծ տարիներում, նախադրյալներ ստեղծեցին նրա համար իր գուները լայն բաց անկուռ աստանդական հայ ժողովրդի առաջ Ուղիղ մի տարի առաջ, զեկուեմբերի 2-ին հրապարակվեց Սովետական կառավարության, հայ ժողովրդի համար պատմական մեծ նշանակություն ունեցող, որոշումը՝ պատասխանային հայերի հայրենադպության մասին: Եվ եթե նոյեմբերը հանդիսանում է հայ ժողովրդի ազգային վերածնման, նրա դարավոր երազների ու իդեալի իրականացման ամիսը, ապա դեկտեմբերը հանդիսանում է հայ ժողովրդի ազգահարձակման, հայրենի օշակի շուրջը համախմբվերւ կոչի ամիսը: 1945 թվի դեկտեմբերուն հայ ժողովրդի պատմության մեջ մի նոր ու փառավոր էջ բացվեց: Սկյուռքի ողջ հայրենաբարդ հայությունը աննկարագելի խանդավառությամբ ու ցնծությամբ ընդունեց հայրենիք վերադառնալու հրավերը:

Դեռ մի տարի շանցած, արդեն կենսագործված ենք տեսնում պատմական այդ որոշումը. արդեն հայրենիքի հարազատ գիրկն են դաֆձել մի քանի տասնյակ հազար պանդուխտ ու կտարաննիդի հայեր: Բայց դրանք դեռ առաջին ծիծնոնակներն են. դրանց պիտի հետևեն մի քանի հարյուր հազար հայրենադպար հայեր, որոնք այս հայրենիքի կարություն ու սրտեսում ակնդեւտ սպասում են նվիրական հայրենի օշակի շուրջը բոլորվելու իրենց հերթին, որպեսզի հարազատ հողի վրա իրենց երջանիկ կլանքը ու վառվուն ապագան կերտեն:

Հոկտեմբերյան Մեծ ուլուցիցի 29-րդ և Հայատուանում սովետական կարգեր հաստատելու 26-րդ տարեկանության նշանավորվեցին նաև նրանով, որ առաջին անգամ հայրենի Հողի վրա այդ տոռներին մասնակցեց արտասահմանից հայրենի հարկի տակ վերադարձ 51 հազար հայությունը: Օտար հորիզոնների առակ երկար տարիներ դեկտեմբած հայ ժողովրդի կենսունակ գավակները մեծ ոգևորությամբ ու ցնծությամբ մասնակցեցին այդ տոռներին: Համաժողովրդական ցնծության այդ օրերին հուզիչ պահեր ապրեցին նրանցից շատերը: Հոկտեմբերյան ուլուցիցի 29-րդ տարեկանության օրը մայրաքաղաքի հայրեալ հազարավոր աշխատավորների հետ միասին կենդինի հրապարակով՝ կառավարական տրիբունայի առջևից խումբ-խումբ անցան արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթած բազմահաղար հայրենադպարներ, ար-

ժանանալով հանդիսատեսների բուռն ծափահարություններին։ Նրանք, սովորական այդ նոր քաղաքացիները, ամենուրեք չեն մոռանում երախտագիտության շերմ խոսքեր ուղղել նրան, որին երախտագարտ են տարագրությունից ազատագրվելու համար. կառավարական տրիբունայի առջևից անցնելուց, երջանկության ժպիտը հրճվալից դեմքերին, նրանք բացականչում էին.

— Կեցցե՞ մեղ ազատարար հայր Ստավինը! Փառք հայ ժողովրդի մեծ բարեկամ ու մեր ազատարար Մեծ Ստավինին։


Երականացել են նրանց երկար տարիների երազներն ու իղձերը. այժմ նրանք իրենց հայրենիքումն են, շրջապատված հոգատար հարադաշտներով։

Դամասկոսից Նկած մի ծերունի իր կնոջ ու աղջկա. Հետ կանգնած էր կառավարական


տրիբունայի ձախ թևում ու դիտում էր հրապարակով հորդով մարդկային հեղեղը. ծերունու դեմքը ցողված էր ուրախության անզուսպ արցունքներով. նա դառնալով իրեն շրջապատողներին՝ հուզված ասում էր.

— Անհո՛ւն է իմ երջանկությունը, դուք չեք կրնար տակավին հասկնալ իմ ապրուները. ես շատ երկրներ թափառած եմ ու շատ ալ շքերթներ տեսած. բայց ասիկա ուրիշ է, ասիկա մերն է, մե՛րը, ու հարազատ...

Հայ ժողովրդի աստանդական ու տարագիր հատվածի հայրենագարձության սկիզբը դրված է արդեն։ Մեր ժողովրդի նորագույն պատմության տարեգրության այս նշանակալից ու երջանիկ օրերին հայ ժողովուրդը ցնծությամբ ու բերկրանքով է ոտք դնում նոր տարվա շեմքին։



Երևան, Բարեկամության շահումյան հրապարակում:



ԻՆՉ ՈՐ ԵՐԱԶԱՄ Է Ե...



նհավատալի կթվի ինձի այս
բոլորը...

Կապրեինք օտար երկրներու
մեջ, օտար ափերու վրա, հե-
ռու քաղցր հայրենիքին, ուրիշ, ավաղ,
բռնի վտարված էին մեր պապերն ու մեր
հայրերը:

Կապրեինք հայրենազուրկ, բայց հայրե-
նիքի կարուտը մեր մատադ սրտերու խո-
րունկ ծալքերուն մեջ պարուրած...

Ու նստել կվերհչեմ անցյալը մոտիկ...
Հոն, անհարազատ հորդվոններու տակ...

Ու կդիտեմ շուրջս, կտեսնիմ խոստում-
նալից ներկան, զոր ահա փոքր ժամանակն
ի վեր կապրիմ պաշտոնի հայրենիքիս մեջ:

Ճո՞ն էինք մենք, Հոն ծնած ու սնած...
թեև չէինք ճանցած կակիծ ու ցավ, քանի
տակալին պատանիներ էինք անհոգ... բայց
մենք՝ պանդուստ հայրդիներս կանուխ...
շա՛տ կանուխ զդաշցինք ու ըմբռնեցինք, որ
մեզի կպակսեր մարդու համար ամենա-
թանկագինը՝ հայրենիքը, զոր կափեինք կա-
թովին:

Կժապտեինք, թե կլայինք, միշտ կխորհեինք,
թե ունինք հայրենիք մը՝ Սովետական Հա-
յառականը, որ ապրիլ կփափաքեինք մեր
հարազատ եղացյաներու ու քույրերու հետ
քով քովի:

Կհրչեմ... թե ինչպես ծառերու տակ, կա-
նաշներու վրա ընկերներով նստել ու կխո-
սեինք Հայաստանի պատանիներու ապրած
կյանքի մասին, թե ինչպես անոնք բախտա-
վոր են ու երանելի... քանի որ հոն են, ի-
րենց հայրենիքին մեջ կապրին...

Մեզի մեր մեծեր պատմած էին հայրենի-
քի մասին... ու մենք ալ քիչ չեինք կարդա-
ցած անոր մասին գրված գրքեր... կհրշեմ
թե ի՞նչպիսի հափշտակությամբ կդիտեինք
թերթերուն ու գրքերուն մեջ տպված նկար-
ները Հայաստանյան ու ի՞նչպիսի արի
ու հառաջող զանոնք կհամբուրեինք կարու-
տագին...

Կհրշեմ... թե ինչպես ամեն անգամ անձ-
կությամբ կդիտեինք Սովետ Հայաստանն
ամտացված կինոֆիլմերը կաբանչանացինք
դիտելով Մայր Հայաստանի գեղատեսիլ
ընության տեսադանները, լեռները երկնա-
մերձ, քաղաքներն աննման, պողոտաները
ծառազարդ և փողոցները եզերով բարձր ու
Դոյակապ շենքերը...

Կհրշեմ... թե ինչպես ընկերներով հանդի-
սատես եղանք Մուկվայի Կարմիր Հրապա-
րակին վրա կատարված Փիզկուլտուրնիկ-
ներու մարզահանդեսը պատկերով Փիլմին
ցուցադրմանը. անկարով եմ նկարագրել
այն, զոր զգացինք այդ պահուն, երբ Սովետ
հզոր ըմբռանիքին և մեր անուշիկ Հայաստա-
նին մարզիկները կտողանցեին համաշափ
քալիվածքով, կրծքերնին առաջ նեսուած ու
հպարտ...

Հուզված էր ողջ հասարակությունը.
նույնիսկ մեր արաք բարեկամները չհա-
պաղեցան իրենց բերնեն թոցնելու սքանչա-
կան բացականչությունները: Ընկերներուս
ու ինձի վրա թողած տպագրությունը
մեծ էր. երկար ատեն մենք մեզի հհամեմա-
տեինք մեր մեծ հայրենիքի կարտառ ու
կենսասինդ մարզիկներու հետ և կիսորհեինք
թե օբրանկությունը պիտի տանենանք ար-
դյուք մի օր մենք ալ նրանց հետ հարազատ
հայրենիքում տողանցելու հպարտ ու
վեսա... սա խռաքեցը կպոռթեային մեր,
հայրենիքի կարուտեն խանձված, մատադ
սքանչերն...

Երաղ թե իրականություն... կրնացի
արդյոք հավատաւ աշքերուս...

Ես ահա արդեն Սովետական Հայաստա-
նի, երբեմնի բազմաշարշափ հայրենիքիս
հողին վրա կապրիմ այժմ... ոչ մի բառով
չեմ կարող արաւահայտել այն, զոր կփո-
թորիի, վալեկոծի իմ սիրտը... այդ հասկ-
նալու ըմբռնել ու զգալ կարող են միայն
ինձի նման հազարավոր հայրենապարձ պա-
տանիների...

Հայաստանի հայրենակիցներում հարց կուտայի հաճախ, թե ե՞րբ է գալու օրը, որ իմ սովորական եղբայրներում ու բույրերում հետ խիստ շարքերով տողանցինք հպարտորեն... ո՛հ ինչպիսի անձկությամբ կսպասի այդ սովան... կուզեի տեփական աշքերով տեսնելի այն, զոր դիտած էի միայն էկրաններու կտավին վրա... կուզեի հոն, հեռավոր երկրներու մեջ սնուցած երազներեա մեկուն իրականանալը դրավալ...

Հայրենակիցներես իմացած էի, որ Հոկտեմբերյան պանծալի հեղափոխության 29-րդ տարեդարձի օրը Լենինի սքանչելի հրապարակին վրա շքերթ տեղի պիտի ունենար:

Անհամբեր էի, կուզեի, որ շուտ, շատ շուտ գար նոյեմբերի 7-ը, սակայն ան կդանդաղեղ...

Կըզձայի ինքս ալ մասնակից ըլլալ շքերթին... ու անշափ եղավ իմ ուրախությունը, երբ Պետական համալսարանում զիս հայտնեցին, որ ես ալ տռանողության հետ պիտի մասնակցիմ շքերթին:

Սպասված օրը եկավ վերջապես...

Առավոտուն կանուխ արթնցա, հագա մաքուր շորերս ու դրամ թուա...

Քաղաքն արտեն ոտքի վրա էր:

Արևն իր ոսկե ճառապայմեները սփոնեւ էր բարձր, դրոշազարդ շննքերի վրա... Ամենուրեք դրված էին մեր մեծ ու հոգաստագր հայր Ստալինի մեծագիր նկարները: Արտադ կբաւեի ու ամեն անգամ նորա նկարին հանդիպմուց ինքզինք կկրկնեի, «Փառք ու երկար կյանք Զեզի, սիրելի հայր Ստալին, Զեր շնորհիվ մենք հայրենիք ունեցանք...»

Շտապում էի համալսարան... վախենում էի ուշանալ ու զրկվիլ...

Խիստ շարքեր կազմած փողոց ելանք... բարձրախոսներու նվագեն կինդար քաղաքը... նո կվախենայի, անկարող ըլլամ համընթաց քայլելու ընկերներու հետ...

Շարքերը շարժվիլ սկսան... ու հորդ գետու մը նման ողողեցին փողոցներն ու հրապարակները. հազարավոր դրոշներ շարքերու վրային կծածանեին մեղմ ղեփյուռն. փողային նվագախմբերը կինդար շնորհնեին օդը: Հազարավոր հայունակիցներ խոնված մայթերու, պատշպամբներու ու տանիքներու

դրա ուրախ ու զվարթ կդիտեին շքերթը նվանց մեջ էին նաև հայրենադարձ հայորդները, անոնք ալ կդիտեին... բայց արցունքն աշքերին... այդ երջանկության անդուսապ արցունքներ էին, զոր կակսեին նրանց այտերը...

Կքալեմ հապալու ու մտահոգ կնայիմ քուի ընկերներուա... քայլերս շշոթելու համարու Համանք լենինի հրապարակը... կանցնեինք թիթեռնին առջևնեն... հոս առաջին անգամ ես տեսած ընկեր Հարությունյանին ու Սովետ Հայաստանի կառավարության անդամները, որոնց նկարները միայն տեսած էի: Թիթեռնին առջևնեն պետք էր ավելի կանոնավոր քալել, սակայն պահ մը զիս կորուցի ուրախութենք ու քայլերս դարձյալ շփոթեցի...

Թիթեռնի առջևնեն անցանք խրոխտ ու հպարտ քայլերով... ու ես սրտիս ողջ թափով ուռապ գոշեցի անոնց, որոնք մեզի այս օրը բերցին:

Կուզեի նորեն ու նորեն դառնալ ու կրկին անցնել թիթեռնին առջևնեն... բայց ավազ կբրջացած էր շքերթը:

Հրապարակնեն անցնելուց կինո-օպերատորները կնկարահանեին մեզի: Այդ պահուն ես հիշեցի հեռավոր ընկերներուա, որոնք մի օր դիտելով այդ նկարը պիտի նշաբեն ինձի... նախանձին... երանի տան... ու ես ալ մտովի երանի կուտայի ինձի...

Ակամա խմբեա բաժնվելեն ետքը երբ տուն դարձա, երջանկութենք գինովցած էի կարծես... չեի հավատար տակալին, որ վաղեմի երազ երանի իրականության մը փոխված էր...

Նատած տանը կխորհեի... ու հիմա ես տեսած, զպացած էի ամենը, ինչ որ հոն, հայրենի երկրեն հեռու կրնար երազ մնալ ընդմիշտ...

Երջանիկ... անսահման երջանիկ ու հըպարտ կզգայի զինքս... քանի ունեի այն, ինչ թանգ է ամեն մարդու համար... հայրենիք ունեի լուսաշող, որու գիրկը դառնալու բախոն ունեցա...

Ու երեք, երեք շեմ մոռնա այն մեծ մարդում՝ հանճարեղ Ստալինին, որուն հավետ երախոտապարտ եմ իմ ծաղկող հայրենիքում գտնվելու համար... իմ երջանիկ ապագայի հեռանկարներուն համար:



ՀԱՅՐԵՆԱԴՄՐՁԻ ՕՐԱԳՐԻՑ



ուշաբքի մեջ շողում է Սպենդիարյանի անվան կենինի շքանշանակիր օպերայի և բալետի Պետական Թատրոնի հոյակապ շենքը; Բաց չականակառույն պարզեց, կաթնագույն սրբազնություն ու նրանց վրա նստած հայկական ոճի գեղաքանդակ խոյակներն ու գեղահյուս որմնայերի զնները՝ ողողված են ծիրանավատ ու կեփուղու մուժով; Շենքը բարակում է մի հսկայական սրտի պես:

Տեղի պիտի ունենա աշխատավորների դեպուտատների երկանի Քաղաքավին Սովետի հանդիավալոր նիստը, պարտիավան-հաստրավական կազմակերպությունների ու Սովետավական թանակի զորամասերի ներկայացուցիչների հետ համատեղ, նվիրված Սովետավական Հայաստանի 26-րդ տարեդարձին;

Սովետավական Հայաստան: Անոն՝ որ հպարտ պիտի հնչե իր 26-ամյա պանծալի, տքնազան ուղիով ու հաղթանակներով:

Ահա՝ և նրանք, որոնք կերտել, ստեղծել են մեր օրեօք հզորացող հայրենիքը, մեր սրբազան հորդի միջն լավատես, աննկոմ, զոհաբերող զավակները՝ արդյունաբերական ձեռնարկությունների, տրանսպորտի, ողջ ժողովրական տնտեսության զեկավարները, բրոնզադեմ մտախանովականները և գիտության, արվեստի ու գրականության աշխատողները:

Ահա և նրանց էուղին, ձուլված այս հազարահանդեմ սրբական ամբողջությանը, ներդադիմած հայերի ներկայացուցիչները, պանծալի հայրենիքի 26-րդ տարեդարձի տոնակատարությանը առաջին անգամ մասնակցելու արդազան դողով:



Բարձր է հնչամ լեզուն հայոց, Հանգիսավոր նիստը որոտընդուստ ծափերի տակ բաց է անում աշխատավորների դեպուտատների երկանի Քաղաքավիտի գործկոմի նախագահ և Հովհաններ:

Այժմ ամբողջ դահլիճն իր հայացքը հառել է կարուրավառ, տակեփիր լոգունգներով զարդարուն բեմում, Առաջնորդի ըռսաշող արձանի ֆոնի վրա երևացող նախագահության պատկանել սեղանին:

Այստեղ են ընկ. ընկ. Գրիգոր Հարությունյանը, Ա. Սարգսյանը, Ս. Միքայելյանը, Ա. Քոչինյանը, Զ. Գրիգորյանը, Շ. Առուշանյանը, Բ. Աստվածատրյանը և հայոց քնարի մեծ վարպետ Ավետիք Խաչակրյանը:

Դահլիճում տիրող բերկրանքն ու ոգևորությունը հասնում են իրենց գագաթնակետին, երբ հիշատակվում է ժողովարդների Առաջնորդ Մեծ Ստալինի անունը: Հոտընկայա, բուռն ծափահարություններով դղբդացնում են հայ ճարտարապետության այս շքեղ ձեռակերտը, երբ լավում է հայ ժողովրդի լավագույն բարեկամ և փրկիչ, Սովետական Սիրության Գեներալիսսիմուա Խսիֆ Վիսսարիոնովիշ Ստալինի հարազատ, ոգեշնչող անունը:

Զլոտդ ծափերի տարափի տակ պատվակոր նախագահության կազմում ընտրվում է Համեր(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոն Մեծ Ստալինի գլխավորությամբ:

Դահլիճը մի մարդու պես լսում է Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու 26-րդ տարեդարձի մասին Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի պարոպական-

դայի և ագիտացիայի բամնի վարիչի տեղակալ Ա. Հարությունյանի զեկուցումը:

Զեկուցումը մարտամասն նկարագրում է Հենինի-Մտալինի հերոսական պարտիայի դեկապրությամբ հայ ժողովրդի անցած 26-ամյա փառապանծ տւղին:

Դժվարստիյուններով լի է եղել այդ ուղին, բայց միշտ պսակված մեր հերոսական ժաղացողի պատմական աննկուն կամքի դրաֆինեպսակներով։ Հպարտանում ես, որ ծնվել ես հայ և որ քո կյանքը գուշադիպել է այս անմահ դսպասակզբին։

Միահամուռ կիրապով ընդունվում է ողջ ըունի նամակի տեքտոն՝ ուղղված հանձարեղ Առաջնորդին։ Նորից ու նորից ծովացող ծափահարություններ Բոլորը ոտքի վրա են, դաշիճը բուռն օվացիա է սարքում ի պատիվ սիրելի ուսուցիչ Մեծ Ստալինի։ Նվազամումբը կատարում է Հայկական ՍՍՌ Պետական հիմնը՝ խրոխտ ու ողեղնչող։

Եղեկտրականացած դահլիճը, ինչպես մի նակայական սիրո հմուտ է տեհնորդին։

«Ա՞հ, մի՞թե բառ կամ խոսք ոմի ։

Արշալույսը, որ կրոնկի,

Զի անհում է...»

Թվուալ է թե այդ են մրմնջում ներգաղթած հայերի շրթերն այդ դոպեին...

Անհում ես, Սովետական Արշալույս, սովետական աղաւ աշխարհ...

Մայրաքաղաքի լավագույն արտիստական ուժերը։ Հաղարահանդես երեկոն այժմ նետվել է հայոց քնարի և սրտի հմայիչ, հոգե-

կան ժառանգության բյուրեղային աշխարհը։

Համեր ըստ Այս ամբողջ Սովետական Հայաստանն է երդում, այս ամբողջ հայ ժողովուրդն է, որ ծովացել է մի սրտի մեջ։

Իսկ այդ սիրտը նոր է, վերածնված, չկանորա մեջ անցյալի մոմումն ու ցավը։ Փյունիկի պես մոխիներից ծնված սովետական հզորացող նոր հայ ժողովուրդը արևն ի վեր թնդացնում է իր երջանիկ կյանքի արտացոլումը, նոր երջանիկ երգը, որ ենում է ոսկեծիւն դաշտերի, գործարանային շշակների, դաշտանիների և զիստության լուսենեն հատատությունների սրտից...

«Ենումի ձեռքից բռնել ամուր և անբաժան եկ հավատալ նրա եղբայրության—

Այդ մեր նախնիքը մեզ կտակեցին, Հայրենակեզ մարգարեները մեր,

Անհայտ կորած և հավիտյան ներկա այն

վեհ Քանաքեռցին։

Որ բարձրացավ ազատ Մասիսն ի վեր...»

Հայ ժողովունի նամակը... կատարումը

խորն է ու հուզիչը..»

Դա հայ սիրու խոսքն է բոլոր աշխարհներին, բոլոր տառապած ժողովուրդներին և հայրենիքի գարնանաշումն սեմը երազող բոլոր հայրենաբաղձ հայերի։

«Եղբայրներս տուն պիտ գան...»

Լենինյան-Ստալինյան պանծալի պարտիայի և Մեծն Ստալինի հայրական խընամքով փրկված, այլևս ագատագրիված հայ ժողովուրդը, մեր սրբազն հողն ու կուլտուրան այդ են պահանջում։

26-ամյա Սովետական բարգավաճ հայրենիք պանդուխունի երգ շպիտի ունենալ այլևս։



ԷՇՄԻԾՆԻ ԵՎ ԿԻԼԻԿԻՈ ԸԹՈՌՆԵՐԸ

Ա

«ՀԱՍԿ»-ի նախընթաց համարի մեջ տպվեցավ ն. Սրբություն Տ. Տ. Գևորգ Ամենայն Հայոց Շնորհազարդ Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը: Վեհապետների գահակալական ճառերը, առաջին հրովարտակները, կոնդապաներն ու դրությունները սովորաբար հանրային բնույթ են կրում, մի տեսակ հարստարաններ իրենց լավագույն իշեմքի և ծրագիրների, բնորոշող նրանց ուղղության, գործելակերպի: Մի ամերող տարի անցավ ն. Սրբության ընտրության և օծման օրերից, մինչև անդրանիկ կոնդակի ստացումը. այդ հապաղումը, որքան տփինսիկական պատճառներ ունեցած լինի, կամենում ենք և մի բնորոշող գիծ համարել ն. Սրբության գործելակերպի: Մի քիչ ուշ, բայց մտածված, հիմնավոր, ու արագ, բայց կատարյալ: Ուշացավ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը, բայց նախապատրաստվեցավ և կատարվեցավ ավելի լավ, քան մեր ակնկալություններն էին:

Այդպես էլ ուշացավ կոնդակը, բայց եկավ մեզ գեղարկվեստական հանդերձանքով, և հմտավից, բազմաբովանդակ ձևակերպությամբ. ճակատը զարդարված հայմանրանկարչական արևինուի ոճով, խորանով և բուսանցքի զարդերով, ինչպես մեր նախկին Հայրապետների սովորությունն էր. տպագրությունն էլ կապույտ, երկնադում մելանով, մաքուր և ճաշակով, իսկ բովանդակությունը շափուած և ձևուած, դիտակցական և կարդավորյալ ծրագրով:

Բ

Մեզ անհուն ուրախություն է պատճառում Կոնդակի ընդհանուր մտահնությունը, որ սիրո և միության գաղափարն է, և որ արտափայլում է ամեն պարբերության մեջ,

բայց հատկապես, սրտագին հարաբերությունը քննոր աթոռների հետ և զանք այդ Կարաբահբությունը դարձնել ավելի սերտ, իրար յրացնող և դիպի նույն նպատակն ուղղված, որ Հայաստանյայց եկեղեցու միանականությունն է, համերաշխությունը և բարերար ազդեցությունը հոտի ամբողջության վերա:

Ս. Հայրապետը անցած ժողովը համարում է իրավամբ բացառիկ երևոյթ մեր պատմության մեջ, յուր լրիվ կազմով և ներկայացուցչությամբ բուր Աթոռների և եպիսկոպոսությունների, հոգևոր և աշխարհիկ պատգամավորներով, շեշտելով, մանավանդ, մեծ Աթոռների գահակալների անձամբ մասնակցությունը:

«Յայտնեմք զուրախութիւն Մեր և զգունակութիւն Հոգևոր եղբօր Մերում Տ. ԳԱՐԵԳԻՆԻ Շնորհազարդ Կաթողիկոսի ՏԱՆՆ ԿիլիկիոՅ, որ ընդ եկեղեցական և աշխարհական պատգամաւորք իւրովք նըպատաւոր եղն յույժ միասնականութեան ՀԱՅԱՍՏԱՆԵՐՅ եկեղեցիոՅ և բարձր տրամադրութեան ժողովականաց և առ հասրակ յաջող վերջաներութեան ժողովոյն ըստ ամենայն մասանց: Զնոյն յատնեմք և Ամենապատիւ Պատրիարքին ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. Կիլիկի և Տեղապահի Պատրիարքութեան Կ. ՊՈՂԱԿՅ Տ. ԳԵՂՐԴԱՅ Արքեպիսկոպոսի Արսլանեան»:

Այս խոսքերը ընդունելով որպես առհավատցյա ֆղարյական սրտագին հարաբերության, պատասխանում ենք, թե պարտականություն ենք համարում Մեր բոլոր ուժեղը, գրիշը, խոսքը, փորձառությունն ու պաշտոնի հեղինակությունը ի սպաս դնել բոլորանվեր, ընդհանուր Հայաստանյայց եկեղեցու փառքի, պայծառության, և բարոյական ազդեցության զորացման համար: Ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագահ դիրքը, կամենայինք, որ ըստ ամենայնի պահպանվեր նրանց պատուածան

Հարաբերությունը ըստ պաշտոնի . և կոչման, ինչպես այդ գծվեցավ Սահմանադրության մեջ: Միասնականություն չպետք է շփոթել միապետության հետ և ոչ ընդհակառակությունը կամնում ենք իրականացած տեսնել գիտակցական փոխադրք հասկացողությամբ և հարգանքով կատարված պարտքերի, նպատակների և ձգումների միության մեջ, իրար դորավիր և նեցուկ լինելու և Աթոռների սերու գործակցության մեջ, յուրաքանչյուրու յուր պարտքի և իրավունքի շրջանում: Մենք իրենք Կիլիկիո Հայրապետական Աթոռի գահակալ պատրաստ ենք Մեր կարծիքն բերել, հավերժացնելու ավելի սերտ, ավելի գիտակցական և միևնուրն ժամանակ ավելի շրջահայաց հարաբերություն Մ. Աթոռի հետ, առաջնորդվելով միշտ առաքյալի խոսքով, թե «զիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»: Կյանք բերող հոգին է եկեղեցու համար ամենից կարևորը, որ պիտի զորացնենք և հավերժացնենք փոխադրք համերաշխությամբ և գործակցությամբ:

Երուսալեմի Պատրիարքությունը ժողովրդական բազմության տեսակետով համեմատաբար սահմանափակ էր մինչև նախանթաց պատերազմ, մինչև մեր գլխին եկած մեծ աղետը, բայց իրեն հինավորց և պատմական Աթոռ Մ. Երկրի մեջ, ներկայացնում է նա Հայաստանյաց եկեղեցին միշագային տարողությամբ: Պատրիարքությունը բոլոր միաբանությամբ ոչ միայն մեր սեփականությունների և իրավունքների պաշտպանն է եղել, այլ և յուր բաժինն է բերել և պիտի բերե մեր հայափառական և եկեղեցական գրականության մեջ: Մեր երկու աթոռների մերձավորությունը տարածությամբ, հնարավորությունն է տախիս, նաև քարոյական մերձավորության է շահ և ի բարզավաճումն Հայաստանյաց ընդհանուր եկեղեցվու և Մայր Աթոռի հեղինակության: Պետք է ի նկատի ունենալ, թե ձեռքբեր որքան էլ երկար լինին, ամեն տեղ հասնել չեն կարող:

Չմոռանանք սրտի ճմլումով հիշել և գ, Պոլսի Պատրիարքությունը՝ յուր հոտի և փորձունեության սեղմակած վիճակով:

Գ

Վերջին տասնյակ տարիներում աթոռների ավելի սերտ և համերաշխ փրժակցության գաղափարը էջմանում գրադեցրել է մտքերը, և Կիլիկիո Աթոռի կողմից առանց պատասխանի չի մնացել: Դորա հետևանքն

էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության կանոնադրության մեջ մտավ և Կիլիկիո Կաթողիկոսության մասնակցությունը: Ուրախ ենք, որ այդ մեծ բախտը Մեղ վիճակուցավ իրագործված տեսնել, անձամբ մասնակցերով և նախագահելով ընտրական ժողովին:

Միասնականության և միության այդպիսի հասկացողությամբ էր, որ առաջարկեցինք Հայաստանյաց բոլոր եկեղեցիներում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հետ հիշել և մյուս աթոռակալների անունները, որ ժողովի կողմից միաձայնությամբ ընդունվեցավ: Սպասում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական հայուրարության, շփոթությունների և քաղմաձեռության այս երեւություն մեջտեղից վերացնելու:

Այս մտքով էր, որ Աթոռի Սահ էջմիածին փոխադրելու հինգ հարյուրամյակը տոնախմբելու առաջարկին ընդառաջ գնացինք, ավելացնելով որ շեշտվի նաև Կիլիկիո և մյուս Աթոռների կատարած դերը ազգապահպանության մեջ, որպեսզի այդ տոնախմբությունը, որպես Գակաղըություն հասկացվի:

Այս մտքով էր, որ Մեր աղքատության մեջ, իրեն տեղահան եղած և յուր հարատությունից զրկված հաստատության ներկայացուցիչ, մեր լուման ձեկցինք Մ. Աթոռի պահպանության գանձանակի մեջ, իրեն նվերը Մեր Թեմերի, վերան ավելացնելով եկեղեցական պատգամավորների ճանապարհածինից մնացած գումարը, որի մասին առիթ կունենանք ընդհանրության տեղեկացնելու Վերջին և նորագույն ապացուցը երկու աթոռների համերաշխ գործակցության գալիս է էջմիածնից՝ Տ. Տ. Գևորգ Կաթողիկոսի կողմից, առաջարկելով Մեղ ձեռներեց լինել Հինգ հարյուրամյակի տարեղարձին նվիրվելիք Գիտական ժողովածուի կազմության*): Զնայելով Մեր պարտավորություններով ծանրաթեռնված վիճակին, հանձն ենք առել սիրով, որպեսզի կրկին և կրկին շեշտենք երկու Աթոռների եղբայրական գործակցությունը:

Աստուած օրհնե համերաշխության և փոխադրք հասկացության այս հոգին և վերածնության ու վերակազմության մղից ույժ դառնա այն՝ եկեղեցու և Հայրանիքի համար:

*) Տես հարտարակվելիք ժողովածուի ծրագիրը սույն համարի մեջ, ԽՄԲԱԴԲ.



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՅՐ ԱԹՈՒ

Ս. թ. նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան ուղղուցիչայի 29-րդ տարեդարձի օրը, Ս. էջմիածնի Մայր Տաճարում, հավատացյալների խուսն բազմության ներկայությամբ, և պատարագ մատուցվեց: Պատարագից հետո կատարվեց Հայրապետական հանդիսավոր մաղթանք՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ:

Քարոզ խոսեց Գերաշնորհ Տ. Նիրսես Կայսկովոս Արքահամբանու:

Ս. թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովորական իշխանություն հաստատվելու 26-րդ տարեդարձի օրը, Ս. էջմիածնի Մայր Տաճարում և պատարագ մատուցվեց, որից

հետո տեղի ունեցավ Հանրապետական մաղթանք: Պատարագին ներկա էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ս. թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովորական կարգեր հաստատվելու 26-րդ տարեդարձի օրը, հավատացյալների խուսն բազմության ներկայությամբ, Թրիլիսի Ս. Գևորգ եկեղեցում և պատարագ մատուցվեց:

Պատարագում էր Մայր Աթոռից գործուղված Տ. Եղիշե վարդապետ Հարությունյանը:

Պատարագից հետո հանդիսավոր մաղթանք կատարվեց:

Քարոզ խոսեց Տ. Եղիշե վարդապետ Հարությունյանը:

ԱՐՏԱՎԱԶԴԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՐԻԶԻ ՄԵԶ

Գերաշն. Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյան Պելյութեն Փարիզ հասեր է օդուսուի 22-ին, որպես Հայրապետական լիազոր ներկայացուցիչ՝ սերակազմելու համար ելլրոպայի թեմը, և պատգամավորական ժողովի մը միջոցավ ընտրել տալու թեմական առաջնորդ:

Արտավազդ Մրբազան Փարիզ ժամանելեանից առաջապես վերջ Հայոց եկեղեցին երթալով քարոզ մը խոսեր է և հետո խորհրդարանին մեջ ընդուներ է գաղութին շնորհավորությունները:

Այս առթիվ կարծե հիշել թե Արտավազդ Մրբազան ավելի քան քսան տարի Հաղեպի և Պելյութի մեջ ամենայն հավատարմու-

թյամբ և ուղամտությամբ ծառայեց Հայաստանյաց Եկեղեցվոր և Հայ հոծ համայնքն: Իր ջանքերուն շնորհիվ հիմնվեցան կարգ մը եկեղեցիներ, պարոցներ, բարեսիրական հաստատություններ, և ազգն ու եկեղեցին բարկոք հարաբերությանց մեջ դրվեցան տեղացի և հովանավոր պետությանց, հոգևոր պետերու և օտար շրջանակներու հետ:

Սյուրմեյան արքեպիսկոպոսի անցյալ արդյունավետ գործունեությունը ինքնին երաշխիք է թե անհիկա պիտի կրնա իրագործել բովանդակ և կիրապայի թեմը միակ Առաջնորդության մը կապելու Հայրապետական իղձն ու փափաքը:

(«Հայաստանի կոչնակ» թիվ 40, 1946 թ.)

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՌԺԱՄՅԱ ԿՈՄԻՏԵԻ ԶԵԿՈՒՅՑԸ

Պովկարահայ Փոքրամասնության Առժամյա Կոմիտես պովկարահայության կհայտա-

բարե, թե Պովկար Նախարարական Խորհրդի 26 սեպտեմբեր 1946 թվի որոշմամբ տրված

արտոնության Համաձայն, 30 սկզբեմբեր 1946-ին Վառային մեկնող սովորական ու յաշխալավ Մոլոտովը շոգենավով Սովետական Հայաստան դրկված են Ռուսութու և էտիրնե քաղաքներին 1922-ի գաղթի շրջանին Պուլկարիա բերված եկեղեցական գուշքեր և անոթներ, մասնավոր ցուցակագրությամբ ստացված մասնավոր Հանձնախումբի մը կողմեւ:

Նույն շոգենավով ուղարկված են նաև Ռուսեի եկեղեցիներ կողմեւ նվիրված երեք կտոր ձեռագիր հին Ավետարաններ, ինչպես նաև Զելթունի 1895-ի ապստամբութենեն:

Դրվագ մը ներկայացնող յուղանկար մը, գնդած և նվիրված հանգուցյալ Մոլոտ Մերժեմնույանի կողմեւ Բլովտիվարնակ Պ. Արիս Կուրագիթյանի ձեռամբ:

Պուլկարահայ Փոքրամասնության Առժաման Կոմիտեի

Նախագահ՝ Գ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ
Ատենադպիր Մ. ԽԱԶԻԿՅԱՆ

Սոֆիա

(«Եփրատ», թիվ 2767, 1946 թ.)

Սանր.—Եղիշած գուլքերը ստացվել են էջմիածնում ԽՄԲԱԿՐ.

ԵՓՐԵՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՈՂՄՈՒՆԻՒԻ ՄԱՀԸ



+ Եփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունի

Ս. թ. նոյեմբերի 27-ին Դամասկոսում ի Տեր Հանգալ Դամասկոսի Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Եփրեմ Սրբազն Տոհմունին:

Հանգուցյալ Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունին ծնվել է 1880 թիվն Սում: Նախական կրթությունն ստացել է Սու Ազգային Վարժարանում: և ապա Ժառանգավորաց Վարժարանում:

1909 թիվն Սու Մայրավանքում վարդապետ է ձեռնադրվել: 1930 թիվն ձեռնադրվել է Եպիսկոպոս, իսկ 1937 թիվն ստացել արքեպիսկոպոսության աստիճան:

Տ. Եփրեմ Սրբազնը երկար տարիներ ուսուցիչ է եղել Սու Ազգային և Ժառանգավորաց Վարժարաններում:

Տարագրության տարիներին անցել է Երուսաղեմ, ուր իր ուժերը նվիրել է գաղթականության գործին: Պատերազմից հետո վերադարձել է Աղանա: Կիլիկիո Հայության դադից հետո հովվական պաշտոն է վարել Հունաստանում 1920—1923 թ. թ.: 1923—1924 թ. թ. Հանդիսացել է Կաթողիկոսական Փոխանորդ Լիբանանի թեմի, ուր մի շաբթագային վարժարաններ է հիմնել: 1924—1925 թ. թ. նշանակվել է Հայեապի թեմի Առաջնորդական Տեղապահ: 1925—1933 թ. թ. Լաթարիո թեմի Կաթողիկոսական Փոխանորդն էր, իսկ 1933—1946 թ. թ., մինչեւ իր մահը, Դամասկոսի թեմի Կաթողիկոսական Փոխանորդը:

1945 թիվն Եփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունին ժամանեց Ս. Էջմիածին և մասնակցեց Ազգային-Եկեղեցական ժողովի աշխատանքներին: Այստեղ ապնիվ ու անկեղծ հայրենասեր Եփրեմ Սրբազնը հնարավորություն ունեցավ Հայրենիքի տնտեսական ու կուլտուրական բուռն վերելքին մոտիկից ծանոթանալու և իրեն անշափ երջանիկ զգալու հայ ժողովրդի նոր Ոսկեղարի գոյության համար:

Հայ Եկեղեցին, Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունու մահվամբ, կորցրեց Հայ Եկեղեցուն ու Հայ ժողովրդին նվիրված անձնազնու հայրենասեր մի հովվի:

Հանգիստ իր հոգվույն:



ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՍՍԻՑ ԷԶՄԻԱԾԻՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ 500-ԱՄՅԱԿԻ ՇՈՒՐՃԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ - ՆԱՄՅԱԿԸ

Դարգելի Տիար

Ազգային-եկեղեցական ժողովն անցյալ տարի որոշեց տոնել Աքոսի փոխադրության Հինգ հարյուրամյակը համազգային նշանակությամբ։ Նորին Մրգություն Տ. Տ. Գևորգ Ամենայն Հայոց Կարողիկոսը 1946—1947 տարին այդ հիման վրա հոչակելով որպես Հոբելյանական, տաշարկել է Մեզ նախաձեռնարկ լինել այդ առքիվ մի Գիտական ժողովածու հրատարակելու գործին, նվիրված տոնի պանծացման։ Մենք սիրով հանձն ենք առել այդ առաջարկությունը, շնայելով Մեր պարտավորություններով ծանրաբեռնված վիճակին, որպեսզի ապացույց տանք մեր Աքոսին համերաշխ գործակցության։

Առաջին հերթին ցանկալի էր, որ գրվելիք ուսումնասիրությունները և հոդվածները նվիրված լինեին Հոբելյանի նետ կապված ժամանակի և երևոյթների լուսաբառության, որպեսզի երևան հանձեր այդ հինգ հարյուր տարվա ընթացքում էջմիածնի Կարողիկոսության կատարած դերը։ Այս մտքով է պատրաստված 12 հոդվածներից բաղկացած մի ծրագր՝ հոդվածագիրների կամքին բողնելով նրանցից որևէ մեկի բնարությունը։ Բայց մասնակցողներն ազատ են այդ ծրագրից դուրս և որևէ հայազիտական աշխատությամբ իրենց մասնակցությունը բերել, ինչպես բացարձակ է ծրագրի 12-րդ հոդվածի մեջ։

Արդ, հարգելի պարոն, այս ծանուցագրով դիմում ենք Ձեր սիրելիության, խնդրելով Ձեր մասնակցությունը այս գործի մեջ։ Հոդվածագիրները, եթե կամենան, կստանան իրենց աշխատության արտապությունը հիսուն օրինակով։

ԾՐԱԳԻՐ ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

**ՆՎԻՐՎԱՇ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԻՆԳ ՀԱՐՑՈՒՐԱՄՅԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**

1. Ընդհանուր տեսություն Հայրապետական Արողի նշանակության մասին, փոխադրությունից մինչև ուսամբան տիրապետությունը:

2. Արողի փոխադրության շարժառիթները (զաղափարի ծագումն ու արտահայտությունները, վարդապետարանների դերը այդ խնդրում, հատկապես Տարեացին յուր աշակերտներով):

3. Ճշտում էջմիածնի կարողիկուների ցանկի և ժամանակագրության, գրական տվյալների հիման վերա:

4. Էջմիածնի վերածնության փորձերը բաղաքական, եկեղեցական, շինարարական և գեղարվեստական մարզերում:

5. Էջմիածնի կատարած դերը ժարի դպրոցական-կրթական և գիտական-մշակութային մարզերում (հեռությունների գյուտ և նկարագրություն, արձանագրությունների հավաքում, հրատարակություններ, գիտական աշխատանքներ և այլն):

6. Աշխի ընկնող դեմքեր կարողիկուների մեջ, շրջանի հետ կապված կամ անհատարար:

7. Էջմիածնի և նոր Զուղայի դպրոցները, ձեռագրական և տպագրական արվեստների և մշակույթային շարժումներ:

8. Պապական Արողի փորձեր էջմիածնին ենթարկելու յուր գերիշխանության, պատմական լուսարաննության և առարկայական բնույթով:

9—10. Կիլիկիո և Աղքամարի կարողիկուսությունների դերը ազգապետական և մշակույթի մեջ իրենց սահմաններում, առանձին նորվածներով:

11. Էջմիածնի և Կիլիկիայի կարողիկուսությունների հարաբերությունները:


12. Հայագիտական, հնագիտական և եկեղեցական երածշտության մարզերում որևէ ուսումնասիրություն, հեղինակի ազատ ընտրությամբ:

Մանրություն.— Հոգվածները պիտի լինեն ոչ ավելի, քան 15—20 երես տպագրական 160 մետրթյամբ։ Հնագիտական կամ ձեռագրական ուսումնասիրությունները կարող են լինել և պատկերազարդ, այդ գեպըում չի պակասում բնագրի համար նշանակած ծավալը։ Ավելի ընդարձակ լինելու գեպըում բնակցել խմբագրության հետ։

Հոգվածները կարող են լինել և օտար լեզուներով, որոնց բնագրի հետ կտպագրվեն և հայերն թարգմանություններուն։

Հոգվածների առաքման վերջին ժամանակ նշանակվում է մինչև 1947 թվի փետրվարի վերջը։

Ամենայն տեսակ թղթակցությունների կամ բացատրությունների համար դիմել Կիլիկի Կաթողիկոսարան՝ արտասահմանի համար, իսկ Հայաստանում և Խ. երկրների մեջ՝ էջմիածնին։





ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՊԱՏՐԻԱՐք ՆԻԿՈՂԻՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՌՈՒՍԻՆԻԱ

ԹՈՒԽԱՐԵՍ, Զ ՆՈՅՆՄՔԵՐԻ (ՏԱԱՍ).— Դեմոկրատական պարտիաների բլոկի մամուզը ընդարձակ կերպով նշեց Ռումինիայի պատրիարք Նիկողիմի վերադարձը, որն երեկ Բուխարեստ ժամանեց իր դեպի Մոսկվա կատարած ուղևորությունից հետո։ Կայանում պատրիարքին դիմավորեց կառավարության անդամների մի խումբ՝ դոկտոր Պետրու Գրովայի և Տատարեսկովի գլխավորությամբ, նմանապես նաև Ռումինիայում ՍՍՌՄ-ի դեսպանորդ ընկ. Քայլթարաձեն։

Կայարանում պատրիարքը ուղարկած մամուզի ներկայացուցիչներին հետևյալ հայտարարությունն արեց. «Ռումինական եկեղեցական պատվիրակության այցելությամբ Մոսկվա՝ վերանորոգվում են տասնյակ տարիներով խզված այն սերտ կապերը, որոնք գոյություն ունեին ուղարկան և ուղարկան եկեղեցիների միջև։ Ես հավաստիացա, — ասաց պատրիարք Նիկողիմը, — որ ՍՍՌՄ-ում երաշխավորված է պաշտամունքների ազա-

տությունը, որ պրավուլավ եկեղեցին օգտվում է պետական իշխանության ուշադրությունից ու աջակցությունից, շնորհիվ նրան, որ պրավուլավ հոգևորականությունը կարողացավ նոր ժամանակի ոիթմին լծվել»։

Պատրիարք Նիկողիմն ընդգծեց նաև, որ ուղարկան եկեղեցական պատվիրակության այցելությունը շատ լավ տպավորություն է թողել ՍՍՌՄ-ի բոլոր եկեղեցական ու հասարակական ջրշաններում։ «Մենք չենք կասկածում, որ մեր այցելությունը լայն շափով օժանդակեց ոչ միայն մեր եկեղեցիների, այլ և մեր ժողովուրդների մերձնեցմանը։ Մեր տեսակցությունը նորին Վեհափառություն պատրիարք Ալեքսիի, Մոսկվայի միտրոպոլիտ Նիկոլայի և ուսաց եկեղեցու մյուս բարձրաստիճան հոգևորականների հետ շափականց սրտանց էր։ Մենք շափականց հիացած ենք սովետական կուլտուրայի ու քաղաքակրթության մեր բոլոր տեսած հաջողություններով։»





ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ^{*}

ՊՈՂՈՍԻ ԵՐՐՈՐԴ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՔԱՐՈԶՁԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ



նտիրում որոշ ժամանակ դադար առնելուց հետո Պողոսը նորից այցելում է Հավատացյալներին և մի պատույտ կատարերվ Գաղատիայում ու Փոյուգիայում, ամենուրեք սրբապնդում ու մխիթարում է նրանց: Նորից Եփեսոս դառնալով նա շարունակում է իր քարոզությունը մեծ հաջողությամբ. երկու տարի այստեղ մնալու հետեւանքով նրա համբավը տարածվում է շրջակա վայրերի հրեաների ու հեթանոսների մեջ: Եվ այսպիսով Աստծո խոսքն աճում ու զորանում էր շնորհիվ Պողոս առաքյալի:

Անուհետև նա որոշում է շրջագայության գնալ Մակեդոնիա, Աքալիա և ապա վերադառնալ Երուսաղեմ ու այնտեղից էլ ուղևորվել Հռոմ: Սակայն ճանապարհների անապահության պատճառով առժամանակ մնում է Եփեսուրում: Այստեղի արծաթագրութերը, որ իրենց քաղաքի Արտեմիս կուռքի նմանությամբ մեհյանների համար արծաթե փոքրիկ կուռքը էին պատրաստում, տեսնում են, որ առաքյալի քարոզած վարդապետությունը հարվածում է իրենց տնտեսական շահերին և քրիստոնեության հաղթանակի դեպքում իրենք անգործ պիտի մնան, ուստի ամբոխին գրգռում են նոր կրոնի քարոզիչների դեմ ու ահազին աղմուկ բարձրացնելով Պողոսի կողմնակիցներին տանում են թատրոնի շենքը, նրանց այնտեղ դատելու համար: Պողոսը ցանկանում է, որ ինքն էլ գնաթարուն և խոսի գրգռված ժողովրդի հետ, բայց աշակերտները նրան ետ են պահում այդ մտքից: Քաղաքի իշխանավորներին հաջողվում է գրգռված ամբոխին հանդարտացնել, իսկ առաքյալը ստիպված է լինում քաղաքից հեռանալ ու Մակեդոնիա գնալ:

Այստեղ էլ շրջագայելուց ու հավատաց-

յաներին մխիթարելուց հետո նա անցնում է Հելլադա, ուր մնում է նրեք ամիս և տեղական հրեաների կողմից դավադրության համագութելով կրկին անցնում է Մակեդոնիա: Մակեդոնիայից նրա ամենամոտիկ գործակիցներն անցնում են Տրովադա ու սպասում առաքյալին, որը Փիլիպեից գալով հանդիպում է նրանց այնտեղ: Ապա մի շաբթ քադաբներ այցելելուց հետո հասնում է Մելիտոն: Առաքյալը մտադրություն ունենալու այստեղից էլ նավել Եփեսուրի մոտով, հետո շարունակել ծովային ճանապարհորդությունն այն հաշվով, որ Պենտեկոստեի տոնին լիներ Երուսաղեմում: Մելիտոնից նա մարդ է ուղարկում Եփեսոս՝ այնտեղի երեցներին իր մոտ կանչելու: Երբ երեցները գալիս են, առաքյալը վերջին անգամ շատ զգացված խոսում է նրանց հետ և պատվերներ տալիս նորադարձ հավատացյաների համար: Հիշեցնում է, թե Ասիա գալուց ի վեր որչափ երկար է մնացել ինքն Եփեսուրում ու շարունակ մխիթարել, ուսուցել նրանց Աստծու բոլոր պատվիրանները և Քրիստոսի քարոզած ապաշխարությունն ու կինդանի հավատը:

— Եվ այժմ ես կապյալ հոգով գնում եմ Երուսաղեմ, — ասում է առաքյալը, — թե ի՞նչ է պատահելու ինձ հետ, չգիտեմ, բայց Ս. Հոգին վկայում է և ասում, թե կապանքներն ու նեղությունները շարունակ ինձ հետ պիտի լինեն: Ես պատրաստ եմ ինձ վիճակված ճանապարհն ուրախությամբ գնալ և վկա լինել Հիսոս Քրիստոսին ու նրա քարոզած ավետարանին: Եվ այժմ ես գիտեմ, որ դոփ ալլես իմ երեսը չեք տեսնի: Զգույշ կացեք և անարատությամբ պահեցեք քարոզածներս, և հովվեցեք Տիրոջ կողմից ձեզ վստահված ժողովրդին, որովհետև զիտեմ, որ իմ մեկնելուց հետո հափշտակող գալլեր կգան, որոնք չեն խնայի ձեր հոտին: Զեր միշից էլ մարդիկ դուրս կգան, որոնք թյուր բաներ կգարողեն և կաշխատեն մեր աշա-

* Սկիզբ տես «Էջմիածին», Օգոստոս—սեպտեմբեր—հոկտեմբեր, 1946 թ.

կերտներին իրենց կողմը գրավել։ Այդ պատճառով արթուն կացեք, և հիշեցեք, որ երեք տարի գիշեր-ցերեկ արտասվելով չեմ դադարել կարատել ձեզանից յուրաքանչյուրին մեկիկ-մեկիկ։ Արժաթ կամ ուսկի կամ հագուստով մեկից չեմ խնդրել։ Դուք ինքներդ գիտեք, որ իմ պետքերը, ինչպես և ինձ հետեղողներինը, իմ այս ձեռքբերմ էին հոգում, ևս ամեն ինչ ցուց տվի ձեզ, թե ինչպես պետք է վաստակել ու դարձանել հիմնադիրին։

Այս խոսքերից հետո ամենքը ծովնը են դնում և աղոթք անում. բոլորն էլ լարով փարփռմ են առաքյալի պարանոցին ու համբուրում նրան։ Մանավանդ մորմորքում են այն խոսքերից, որ այլևս չեն տեսնելու նըրան։

Ապա հուզված ճանապարհ են դնում նավով, որը շուտով առաքյալին բերում, հասցնում է Փյունիկիայի Տյուրոս քաղաքը,

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԶԵՐԲԱԿԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱԼԵՄՈՒՄ

Պողոս առաքյալը շտապում է տեսնել Հակոբոս առաքյալին, որի մոտ հավաքվում են նաև Երուսաղեմի Խեցները։ Ողջունելով նըրանց, առաքյալը մանրամասն պատմում է իր առաքելական շրջագայության և հնագույնության մասին։ Նրանք այս ամենը լսելով փառք են տալիս Աստծուն և Պողոս առաքյալին էլ հայտնում են, որ Երուսաղեմում բյուրավոր հավատացյալ հրեաներ կան, որոնք միաժամանակ նախանձախնդիր են մովսիսական օրենքների պահպանմանը։ Նրանք լսել են, որ իրը թե Պողոսը հեթանոսների մեջ ապրող հրթաներին քարոզում է, որպեսզի Մովսեսի դրած օրենքները շկատարեն և այդ իսկ պատճառով կատաղած են նրա դեմ։ Պողոսին խորհուրդ են տալիս մի քանի ծիսական գործողություններ կատարել և ապա տաճար հաճախել։ Պողոս առաքյալն այդպես էլ վարվում է։ Սակայն մի օր, Ասիայի հրեաները նրան տաճարում տեսնելով, ահագին ամբոխ են հավաքում նրա ջուրջը ու առաքյալին էլ բռնելով աղաղակում։ Անվ իսրայելացի՛ք, օդնեցք, այս մարդն է, որ հակառակ ժողովրդյան ու օրենքների, ամենքին ու ամենունք ուսուցանում է և մինչև իսկ հեթանուներին տաճարը մտցնելով պղծեց սուրբ վայրուն։

Նրանք առաջուց քաղաքում նրա հետ տեսել էին Տրոփիմոս Եփեսացուն ու կարծում էին, թե առաքյալը նրան էլ է ներս տաքել տաճարի ժողովովդը Պողոս առաքյալին տաճարից դուրս է քում. տաճարի դռները

այստեղից էլ Պտողեմայիդա, իսկ հետո Պաղեստինի Կիսարիան, Այստեղ Երուսաղեմից Ազարոս անունով մի մարդարե է դալիս, որը ներշնչված Ս. Հոգուց, Պողոս առաքյալին խորհրդող է տալիս Երուսաղեմ շնալ և վերց նեղով առաքյալի գոտին, նրանով կապում է իր ձեռքերն ու ոտներն և ասում. «Այսպես կկապեն հրեաները Երուսաղեմում այս գոտու տիրոջը և կմատնեն հեթանոսների ձեռքը»։ Իսկ առաքյալը պատասխանում է. «Ի՞նչ եք անում, ի՞նչու եք լաց լինում ու ճմլեցնում իմ սիրոջ, ես պատրաստ եմ Երուսաղեմում ու միայն կապվել, այլև մեռնել Տեր Հիսուս Քրիստոսի անվան համար», Տեսնելով որ առաքյալը շի համաձայնում, դադարում են նրան Երթուսաղեմ գնալու մարդից եստիպահնելու, Երթապղեմ մոնելուց ուրախ ընդունելություն են գտնում հավատացյալների կողմից։

Իուր է հասնում հազարապետին, որ ամբողջ Երուսաղեմը խոռովության մեջ է։ Սա զորք ու հարյուրապետներ է վերցնում և գնում ամբոխի վրա, որը տեսնելով հազարապետին դադարում է Պողոս առաքյալին ծեծել։ Հազարապետը մոտ գալով հրամայում է ձերբականի Պողոսին ու կրկնակի շղթաներով կապել Առաքյալը խորդում է հազարապետին, թույլ տալ իրեն ժողովրդի հետ խոսելու նրա իրավունք է տրվում, նա բարձրանում է տաճարի աստիճանների վրա, ձեռքը պարզում դեպի ժողովուրդը ու երբ լուսարդուն է տիրում, սկսում է խոսել կերպարանին. Անվ եղբայրներ՝ և հայրե՛ր, լսեցք քայժմ ինձ, թե ինչ պիտի ասեմ ձեզ; Ես մի հրեա եմ, ծնված Կիլիկիայի Տարոսն քաղաքում, ուսում ստացած նույն քաղաքում Գամաղեկի մոտ և դաստիարակված հայրենի օրենքների ճշմարտության ոգու համաձայն. Ես նախանձախնդիր էի Աստծու համար, ինչպես դուք բոլորք; Եվ ապա պատմում է Դամասկոսի ճանապարհին իր հետ պատահածը ու այնուհետև շաբունակում է. Ենք վերադարձա Երուսաղեմ, տաճար մտաւ աղոթում էի, ևս հոգեզմայլ վիճակում տեսանքան, որ ասում էր ինձ, «Նոտապի՛ր, դուքս աղի Երուսաղեմից, որովհետև քովկայությունն իմ մասին չեն ընդունելու ես պատասխանեցի, թե նրանց հայտնի է, որ ե՞ս էի բանտարկում ու ծեծում քո հավա-

տացյալներին, և երբ թափվում էր քո վկա Ստեփաննոսի արյունը, ե՞ս էի դարձալ, որ կամակից էի նրա սպանմանը: Խսկ Տերն ինձ ասում էր. «Գնա՛, որովհետև քեզ հեռավոր հեթանոսների մոտ պիտի ուղարկեմ»:

Ժողովագրով, որ մինչ այդ լուս լսում էր, սկսեց աղաղակել հազարապետին դիմելով. ակերացրու երկրից այդ տեսակ մարդուն, որովհետև այդպիսին շպետք է ապրի: Աղաղակելու հետ նրանք իրենց շորերն էին նետում և օդի մեջ փոշի ցանում: Ձինվարները մոտենում ու փոկեթով կապում են նրան: Պողոս առաքյալը իր մոտ կանգնած հարյուրապետի միջոցով իմացնում է իր Հոռմի քարագացի լինելու: Հազարապետը սեղով, որ Պողոս առաքյալը արդարեւ Հոռմի քաղաքացի է, այն էլ ի ծնե, կարգադրում է ի խկույն կապանքներն արձակել և շենծել:

Բայց և այնպիս հազարապետն ուզում էր իմանալ, թե ինչու են շարախոսում հրեանները նրա դեմ. դրա համար կանչել է տալիս քահանայապետին, ատյան կազմում ու Պողոսին էլ կանգնեցնում նրա առաջ: Առաքյալը առաջանին դիմելով ասում է. «Եղբայրնե՛ր, ես բոլորովին ուղիղ մտքով ընթացել եմ իմ Աստծու առաջ մինչև այսօր»: Այդ պահին Անանիա քահանայապետը հրամայում է սպասավորներին նրա բերանը հարվածել: Պողոս առաքյալը ցասումով լցվելով ասում է. «Հարթածելու է քեզ Աստված, ծեփված պատ և դու ես նստել ու դատում ինձ օրենքի համաձայն ու առանց օրենքի էլ հարվածել հրամայում»:

Առաքյալը նկատելով որ ատյանի մի կողմը սաղուկեցիներն են, իսկ մյուս կողմը փարիսեցիները, աղաղակում է. «Եղբայրնե՛ր, ես փարիսեցի եմ, փարիսեցու որին և առ Աստված ունեցածս հույսի ու մեռեների հարությանը հավատալու համար դատվում եմ ահա»: Այս ասելուց իսկույն հերձված է ընկնում սաղուկեցիների ու փարիսեցիների մեջ. սաղուկեցիները չէին ընդունում հարություն, հերծտակ ու հոգի, իսկ փարիսեցիներն ընդունում էին դրանք: Փարիսեցիներից ոմանք ոտքի կանգնելով ասում են, որ մեղադրյալի մոտ ոչ մի շարություն չեն տեսնում, բացի այն, որ ինքը հոգին կամ հրեշտակն է խոսում նրա բերնով:

Մյուս օրը քառասուն հրեա ժողով են անում և որոշում Պողոսս առաքյալին սպանել: Այս նենգությունն իմանում է առաքյալի քեռորդին ու հայտնում հազարապետին: Երբ հազարապետը հրեաների այս շար դիտավորությունն իմանում է, կարգադրում է, որ բազմաթիվ հեծյալ պինվորներով դիշերը առաքյալին տանեն Պաղեստինի Կիսարիս:

Քաղաքը՝ Փելիքս դատավորի մոտ: Միաժամանակ մի գրություն էլ է ուղարկում Փելիքսին, համառոտակի հաղորդելով դավագրության և Պողոսի Հոռմի քաղաքացի լինելու մասին: Պահապան-ուղեկցող զինվորները առաքյալին հանձնուում են Փելիքսին, որը կարգադրով գրությունը կալը պահել նրան Հերովդի ապարանքում: Հինգ օր հետո քահանայապետը մի քանի ծերերի ու ճարտարախոս մեղաղղող Տերտյուղոսի հետ գալիս են Կիսարիս և ներկայանում Փելիքսին: Սա կանչել է տալիս առաքյալին ու հրեաներին առաջարկում իրենց մեղաղղանքն ասել: Տերտյուղու նախ մի քանի կեղծավոր խոսքով գովում է Փելիքսին, որպես դատավորի, ապա հայտնում է, որ Պողոսը խոռվություն է սերմանում ամբողջ աշխարհի հրեաների մեջ՝ հանդիսանալով նազովացվոց հերձվածի առաջնորդը: Երբ դատավորը խոռվը տալիս է Պողոս առաքյալին, վերջինս սկսում է այսպես. «Ճամներկու օր է, ինչ եկել եմ երուսաղեմ երկրպագություն տալու Ս. տաճարին, ոչ ոք չի տեսել, որ մեկի հետ խոսած լինեմ կամ ժողով արած, այնպես որ ոչ ոքի չեն կարող վկա կանգնեցնել, ինչի համար որ ինձ մեղաղղում են: Բայց մի բան հաստատապես հայտնում եմ, ինչ դրանք հերձված են անվանում, ես զերմարեն արաշտում եմ իմ Աստծուն, հավատարար այն բոլորին, ինչ որ օրենքներում և մարգարեություններում դրված է»:

Փելիքսը դատավարությունը հետագայում է մինչև հազարապետի Կիսարիս գալը, իսկ առաքյալի համար կարգադրում է որոշ հարմարություններ տալ ու պահել: Մի քանի օրից հետո Փելիքսը նորից կանչել է տալիս առաքյալին, որն սկսում է նրան քարոզի, Քրիստոնի մասին: Երբ առաքյալը սկսում է խոսել արդարության, ժումկարության և հանդերձալ դատաստանի մասին, Փելիքսի սիրուղ երկյուղ է ընկնում և նա ասում է. «Առ այժմ գնա, երբ առիթ լինի, կանչեմ քեզ»: Այսուհետեւ հաճախ էր կանչում Պողոս առաքյալին ու խոսում հետո:

Այսպես անցնում է երկու տարի: Փելիքսը փոխվում է և փոխարենը գալիս է Փելիքսը անունով մեկը:

Փելիքսն իշխանության գլուխ անցնելուց հետո մի քանի օրով գնում է երուսաղեմ: Քահանայապետն ու մեծամեծները հիշեցնում են Փելիքսի Պողոսի մասին և խընդուռում դատը երուսաղմուն կատարել, որպեսզի բերելուց հանապարհին սպանեն նըրան, սակայն Փելիքսը չի համաձայնում և

առաջարկում է իր հետ գնալ Կեսարիա ու
այնտեղ արբաստանի առաքյալին:

Կեսարիա վերադառնալով Փեստոսն ատ-
յան է բայց անում և իր հետ եկած հրեաներին
առաջարկում իրենց մեղադրանքներն ասել:
Սրանք շատ ծանր հանցանքներ են բարձում
Պողոս առաքյալի վրա, բայց և ոչ մեկը չեն
կարողանում ապացուցել, որովհետև առաք-
յալը մեկ առ մեկ հերթում է: Մակայն Փես-
տոսը հրեաներին դուր գալու համար առա-
ջարկում է առաքյալին Երուսաղեմ գնալ ու
այնտեղ դատվել իր ներկայությամբ: Պողո-
սը զգալով, որ այս առաջարկի տակ մի նեն-
դություն կա թաղնված, պատասխանում է.
«Կայսեր ատյանում եմ գտնվում, որտեղ և
ես պետք է դատվեմ. Հրեաների համար ես
ամենափոք միասակար չեմ, ինչպես դու էլ
քաջ գիտես, իսկ եթե միասակար եմ ու մահ-
վան արժանի բան եմ գործել, չեմ վախենում
մեռնելուց. իսկ եթե ոչ մի հանցանք չկա,
որի համար դրանք ամբաստանում են ինձ,
ապա ոչ ոք էլ չի կարող ինձ դրանց ձեռքը
մատնել: Բողոքում եմ կայսեր անունված:
Փեստոսը խոսելով իր խորհրդակցի հետ
պատասխանում է. «Թանի կայսեր անունով
բողոքեցիր, կայսեր մոտ էլ կերթաս»: (Հռո-
մեական օրենքով ամեն քաղաքացի դատար-
անից դգուհ մնալուց իրավունք ուներ կայ-
սեր անունով բողոքելու. այդ դեպքում նրան
անպայման ուղարկում էին Հռոմ, կայսեր
մոտ դատվելու):

Մի քանի օր անց Ազգիպատ թագավորն ու
Բերինիկեն գալիս են Կեսարիա Փեստոսին
այցելության: Փեստոսը սրանց պատմում է,
թե ինչպես Հրեաները կամեցել են սպանել
Պողոս առաքյալին, բայց ինքն ազատել ու
պահում է կապար վիճակում իր մոտ: Ազ-
րիպատը ցանկություն է հայտնում առաքյա-
լին տեսնելու Մյուս օրը Ազգիպատը, թե-
րինիկեն և ուրիշ շատ երեւելի անձինք հավաք-
վում են Փեստոսի ապարանքում: Փեստոսը
առաքյալին բերել տալով կանգնեցնում է
ատյանում և դիմելով հանդիսականներին ա-
սում է. «Արքա՝ Ազգիպատ, և բոլոր մար-
դիկ, որ մեզ հետ եք, տեսնո՞ւմ եք սրան,
ամբողջ Հրեա ժողովուրդն ամբաստանում և
աղաղակում էր, թե նա չպետք է ապրի,
բայց ես գտա, որ սա մահվան արժանի ոչ
մի բան չի գործել. սակայն նա ինքը բողո-

քեց կայսեր անունով ու ես էլ մտադիր եմ
ուղարկել, բայց որևէ ստույգ բան գրել իմ
տիրոջը չեմ կարող, այդ պատճառով էլ քե-
րի սրան այստեղ ձեր առաջ նորից քննելու,
որպեսզի կարողանամ մի բան գրել, թե չէ
անհարմար է ինձ համար մի կապյալ ու-
ղարկել ու ոչ մի վնասակար բան չնշել նրա
մասին:

Ազգիպատը դառնալով առաքյալին, ատում
է. «Հրամայիմած է քեզ, քո մասին խոսել»:
Պողոս առաքյալը ձեռքը շարժելով պատաս-
խանում է. «Հրեաների իմ դեմ հարուցած
բոլոր ամբաստանությունների համար, ար-
քա Ազգիպատ, երանելի եմ համարում ինձ, որ
այսօր քո առաջ պատասխան եմ տալու,
մանավանդ որ գիտակ էլ ես բոլոր կրոննե-
րին և Հրեաների ունեցած ակնկալություն-
ներին. ուստի խնդրում եմ երկայնամտու-
թյամբ լսել ինձ: Իմ կյանքի մասին տեղյակ
են բոլոր Հրեաները: Ես Դամասկոսում, Ե-
րուսաղեմում, Հրեաստանի բոլոր գավառնե-
րում ու հեթանոսների մոտ քարոզեցի զղալ
և դառնալ դեպի կենդանի Աստված: Ես ու-
րիշ բան չեմ խոսել, քան այն ինչ որ մար-
գարեներն ու Սովուսն են ասել գալիք դեպ-
երի մասին, թե շարշարանքներ է կրելու
Քրիստոսը, թե մեռելներից հարություն ա-
ռածներից առաջնորդ լուս է ավետելու Հրեա
ժողովրդին ու հեթանոսներին»:

Առաքյալի այս պատասխանից հետո Փես-
տոսը բարձրաձայն ասում է. «Եսատ կարդա-
լուց խենթացել ես, Պողոս իսկ առաքյալը
պատասխանում է. «Չեմ խենթացել, քազի
Փեստոս, այլ հեղության ու ճշմարտության
խոսքեր եմ ասում, այս բաներին տեղյակ է
արքան էլ: Հավատում ես, արքա՝ Ազգիպատ,
մարգարեներին. գիտեմ, որ հավատում ես»:
Ազգիպատը դառնալով նրան ասում է. «Քիշ
է մնում, որ ինձ էլ քրիստոնյա դարձնես».
Պողոսը պատասխանում է «Կիսնդրի Աստր-
ծուց, որ դուք ամենքդ, որ լսում եք ինձ
այսօր, լինելիք այնպես, ինչպես ես եմ, բայց
առանց իմ կապանքների»:

Արքան, թերինիկեն, դատավորը և մյուս-
ները հեռացան այն կարծիքը կազմելով, որ
նա մահվան կամ կապանքների արժանի ոչ
մի բան չի գործել: Ազգիպատը Փեստոսին
ասաց. «Արձակել էր պետք այս մարդուն,
թե կայսեր անունով բողոքած վիճեր»:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱԶՈՏ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՓԻ ՀԽՈՄ

Փեստոսի կարգադրությամբ առաքյալին
ուրիշ կալանավորների հետ միասին նավ են
նստեցնում և հրամայում տանել Հռոմ: Ճա-
նապարհին ծովի վրա շատ ծանր փորձանք-

ների են հանդիպում, ուղեկիցները մինչև
իսկ հուսահատության դուռն են համառւմ,
բայց Պողոս առաքյալը բոլորին հուսադրում
էր դիմանալ, ընկճվել, այլ առ Աստված ա-

պավինելով, Նրանից փրկություն սպասելու Շատ արկածներից հետո վերջապես նաև կալանավորներով հանդերձ հասնում է Հռոմի ամենամուտ նավահանգստը։ Այստեղից էլ ցամաքի փրայով ուղևորվում են Հռոմ։ Ուղեկցող հարյուրապետը Պողոս առաքյալին մի պահապան զինվորի հետ թույլ է տալիս առանձին ապրելու։ Առաքյալը տեսակցություն է ունենում Հռոմի հրեաների հետ և նրանց իրազեկ գարձնում, թե ինչ պայմաններում ինքը ստիպված է եղել կայսեր անունով բողոքելու և Հռոմ բերվել։ Դրանից հետո հրեաները հաճախ էին գալիս նրա քարոզությունները Աստծու արքայության և Քրիստոսի մասին լսելու վերջում հրեաների մի մասը հեռանում է նրանից, շրնգանելով նրա քարոզությունները։ Երկու ամբողջ տարի Պողոս առաքյալը մնում է Հռոմում, ապրում իր ձեռքի աշխատանքով և քարոզում Աստծու արքայության ու Քրիստոսի մասին։

Ահա այն ամենը, ինչ մենք կարող ենք իմանալ Գործք Առաքելոցից Պողոս Առաքյալի մասին։ Այնուհետև պատմությունից հայտնի է, որ նա 66 թվին նահատակվել է Հռոմում, Ներոն կայսեր ժամանակ, երբ ընդհանուր հալածանել է սկսվում քրիստոնյաների գեմ։

Ծնված փարիսեցի, դաստիարակված մովսիսական օրենքների ուղով, մոլի նախանձախնդիր հայրենի սովորությունների ու ավանդությունների, քրիստոնյա հավատաց-

յալների հալածիչ և այսպես... մինչև Դամասկոս։ Դամասկոսի շոշագարձը միանգամայն հեղաշրջեց այս վերին աստիճանի զգայուն ու ուժեղ անձնավորության ներքին հոգեկան աշխարհը։ Պողոսը հոգու աշքերով տեսավ նրան, ում հալածում էր, զինաթափ եղավ նրա կերպարի առաջ, ընդունեց, հավատաց նրան, փարիսեց հոգով, սրտով և երդից նրա քարոզած սկզբունքների ու գաղափարների քարոզիչը դառնալ ոչ միայն իր հայրենակիցների, այլև և հեթանոսների մոտ։ Դամասկոսից էլ նաև սկսեց քրիստոնեական նոր ուսմունքը քարոզել ամենուրեք, ինչպես տեսանք նրա երեք անգամ կատարած առաքելական քարոզչական ճանապարհորդությունների ժամանակ։ Ծնորհիվ իր անսպառ եռանդի ու անբասիր անձնական օրինակի, որով համափում էր բոլորին, նաև շտեսնված հաջողությունը ունեցավ։ բազմաթիվ համայնքներ կազմեց, անթիվ աշակերտներ ունեցավ, որոնք շարունակեցին նրա գործը թե՛ նրա կենդանության օրով և թե՛ նահատակությունից հետու։

Պողոս առաքյան իր բեղմնավոր գործունեության շնորհիվ քրիստոնյա աշխարհի ամենամեծ սրբերից մեկը դարձավ։ Մեր եկեղեցին նրա հիշատակը տոնում է տարեկան երկու անգամ— դեկտեմբերի վերջերին և ամառը՝ սասներկու առաքյալների տոնի հետ միասին։





ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍՆԵՐԸ

այս քրիստոնեություն ընդունելու պատմությունը մեզ հասել է մի հին պատմական ժիշտակարանով, որ կրում է վերնագիր՝ Ակադմանգեղայ պատմութիւն, վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի։ Անծանոթ հեղինակն իր մասին վկայում է, թե ինքը Հռոմ քաղաքից է, Խոսրով թագավորի ժամանակ ենել է Հայաստան, արքունիքում ծառայել իրրեն քարտուղար և ապա Տրդատի հրամանով գրել է Հայոց դարձի պատմությունը իրրեն ժամանակակից և ականատեսն նա պատմում է, թե պարսիկ իշխան Արտաշիր Սասանյանն սպանելով պարսից Արտավան թագավորին, որ Պահլավոնի ցեղից էր, ինքն է թագավորել։ Հայոց Խոսրով թագավորը, որ իրրեն Արշակունի, նույն Պահլավոնի ցեղիցն էր, վրեժինդիր է լինում իր ազգակից Արտավանի համար և արշավելով Պարսկաստան՝ Արտաշիրի դեմ, նրան նեղն է ձգում ու փափցնում մինչև Հնդկաստան։ Այս տեղում է տարր տարի։ Արտաշիրը գրավիշ Խոսրումներ է անում իր մեծամեծներից նրան, որը կկարողանար սպանել Խոսրուին։ Այդ բանը հանձն է առնում մի ուրիշ պահլավոնի հշիտան, Անակ անունով։ Նա իրքն կեղծ փախատական, իր տորմով փախշում է Հայաստան։ Խոսրուն ուրախանում է իր ազգակից փախուառությունը և անունը համար կամ մի ծծկեր երեխա, որին դայակը փափցնում է Կեսարիա։ Այստեղ նա մեծանում է քրիստոնեական հավատով, Գրիգոր անունով և ամուսնակով ունենում է երկու որդի։

Արտաշիրը Խոսրովի սպանությունից հետո արշավում և տիրանում է Հայաստանին,

բնաշինչ անելով Խոսրովի ամբողջ ընտանիքը, միայն մի փոքրահասակ մանուկ՝ Տրդատ անունով, կոտորածից ազատվելով զնում է Հռոմ, մանում զինվորական ծառայության և մեծամեծ քաջագործություններ գործում։ Այս ժամանակները նրա մոտ է գալիս՝ իրեն սպասավոր, Կեսարիայում ապաստանած Անակի որդին՝ Գրիգորը։ Դիոկղետիանոս կայսրը Տրդատին, մեծ քաջագործությունների համար, Հայաստանի թագավոր է նշանակում և նրա տրամադրության տակ զրոք զնում։ Տրդատը մտնում է Հայաստան։ Արտաշիրը փախում է։ Սահմանամերձ երիզա գյուղում Տրդատը գոհաբերություն է անում Անահիտ աստվածուհուն և Գրիգորին էլ հրամայում է նույնը անել. բայց Գրիգորը հրաժարվում է հայտնելով թե ինքը քրիստոնյա է և անպատվում է կոռուպերը։ Տրդատը զանազան սպանալիքներով և տամնձչորս տանջանքներով ստիպում է նրան ուրանալ իր հավատը, բայց իզուր Այդ ժամանակ մի նախարար հայտնում է Տրդատին, թե Գրիգորը ոչ այլ ոք է, քան Խոսրովին սպանող Անակի որդին։ Անմիջապես Գրիգորին կապում, ուղարկուած են Արտաշատի բերդի օճերով լի մոթ բանտը (Խոր Վիրապ), ուր ընկնողը նույն օրը մերնում էր։ Մի պատակ կին, հրեշտակի պատվերով, ամեն օր գաղտնի հաց և ջուր էր տալիս բանտարկյալին, որն այդ վիրապում արգում է 13-15 տարի։

Այսքան տարիներ անցնելուց հետո Հռոմց Հայաստան են կալիս մի խոսք քրիստոնյա կույսեր, որովհետեւ Դիոկղետիանոս կայսրը ցանկանում էր այդ կույսերից մեկն՝ գեղեցկունի Հոփիսիմեֆն իրեն կին առնել։ Դիոկղետիանությ հրովարտակի հիման վրա Հայաստանում կույսերին փնտուել են միտու, նրանց գտնում են Վաղարշապատի այգիներից մեկում, մի հնձանում ապարակինած։ Երբ Տրդատին հաղորդում են

Հոփիսիմեի աննման գեղեցկության մասին, նա կամենում է ինքը նրան կին առնել և պատվիրում է Հոփիսիմեին փառավոր պատվով բերել արքունիք: Հոփիսիմեն հրաժարվում է զնալ. նրան տանում են ստիպմամբ. պալատում Հոփիսիմեն ինն ժամ կովում է հսկայազոր Տրդատի հետ, ուժասպառ անում նրան ու փախչում պալատից: Կատաղած ու ամոթահար Տրդատը հրաժարում է սպանել նրան և նրա ընկերութիւններին: Սպանվում է 37 կռւյս:

Սգավոր թագավորը սթափվելու համար մի քանի օրից հետո ուզում է տրսի զնալ: Կառք նստելու բռպեին վրան մի տեսակ կատաղություն է պալիս. դորս է նետվում

կառքից, փախչում դեպի դաշտերը, գաղանների կերպարանը է տառանում, խոզի նման կճղակներով, դնչով ու ոտներով քանդում և ուստում է վայրի բույսեր: Նման հարվածների են ենթարկվում նաև պալատականներից շատերը. տոգ է բունում ողջ Հայաստան աշխարհը: Հրեշտակը իշնում և թագավորի քրոջ Խոսրովիդուստին հայտնում է, թե այդ հարվածները բժշկվել կարող են միայն Արտաշատում բանտարկված Գրիգորի ձեռքով: Եթե Խոսրովիդուստը այս տեսիլը պատմում է իշխաններին, չեն հավատում, որովհետև վիրապն ընկած մարդը մի օրում պետք է մեռած լիներ ու կարծում



Խոր Վիրապի վանքը

են, թե Խոսրովիդուստն էլ է հարվածի ենթարկվել. բայց տեսիլը կրկնվում, երեքնը վում է սպանալիքներով: Մարդ են ուղարկում Արտաշատ. տեսնում են Գրիգորի կենդանի է. Հանում են Վիրապից, լվանում, հագցնում և բերում Վաղարշապատ: Գաղանացած Տրդատը ճանապարհին գալիս չոգում է նրա առաջ և խնդրում ներել իրեն գործած Հանցանքների համար: Վաղարշապատում Գրիգորը ամենից առաջ հոգ է տա-

նում Թաղելու նահատակված կույսերի մարմինները, որ անարատ էին մնացել տեղ օր, և վկայարաններ է շինում նրանց վրա: Հետո սկսում է քարոզել քրիստոնեության սկզբունքները և ապա հետզետե բժշկում է թագավորին, որը վերստանում է նաև բանականությունը, հետո տաքերն ու ձեռքերը, ապա վերջապես ամրուց կերպարանքը. նա բժշկում է նաև մյուս վշտացյաններին: Նա 66 օր քարոզում է քրիստոնեական կրո-

նը, հին և նոր կտակարանը՝ իր մեկնություններով և բոլորին հավատի է բերում: Թագավորը մտածում է Գրիգորին ընտրել Հայաստանի հպատակության ինչպես պատվիրել էր հրեշտակը Մի պատվավոր շքախումք, 13 մեծամեծ նախարարների ուղեցությամբ Գրիգորին տանում է Կեսարիա՝ թագավորի հրովարտակի հետ միասին, որով Կեսարացի Առողջիությունը միտրոպոլիտին խնդրվում էր Գրիգորին եպիսկոպոս ձեռնազրել Հայաստանի համար: Զեռնադրությունը կատարվում է շքեղ: Վերադարձին Գրիգորը մի քանի օր մնում է Սեբաստիայում, որտեղից վերցնում է Հովհաննես Մկրտչի և Աթանագինես վկայի մասունքները, այլև քահանաներ Հայաստանի ապագա եկեղեցիների համար: Երբ մտնում են Հայաստանի սահմանները, Գրիգորը սաճար է շինուած Հովհաննես Մկրտչի անվան («Մշուսուլիման Կարապետ»): Տրուատոր զորքով ընդառաջ է զնում նրան: Իրար հանդիպում են Եփրատի առին, որտեղ Գրիգորը մկրտում է Տրուատին, նրա կնոջն ու քրոջը և մի քանի հարյուր հազար ժողովորդ՝ իշխաններից և հասարակ մարդկանցից: Վաղարշապատում Գրիգորը տեսահլք է տեսնում: Մի լուսեղին այլ, ոսկի մուրճը ձեռքին, իշնում է երկնքից, հարվածում գետնի այն տեղերը, որտեղ հիմնվեց էջմիածնի տաճարը և կույսերի վկայարանները: Այնուհետև Գրիգորը կործանում է կուլքերի բարգինները, և կենդեցիններ շինուած, սպասավորներ նշանակում, դպրոցներ բաց անուամ, քրմերի որդիներից քահանայացուներ պատրաստում: Այնուհետև նա մկսում է լեռներում առանձնանալ: Թագավորին հայտնում են, թե Գրիգորը ամուսնացած է, ունի երկու որդի: Որովհետև Գրիգորը շէր կամենում շարունակ աշխարհում մնալ և հուր կառավարել Տրուատը հորդորում է նրան՝ որորցը կանչել և նրանցից մեկին Արքատակեսին եպիսկոպոս ձեռնադրել եկեղեցին կառավարելու համար: Այդպես էլ կատարվում է: Նա ձեռնադրում է նաև ուրիշ 13 եպիսկոպոս Հայաստանի զանազան գալանների համար:

Տրուատը լուր է ստանում, թե Կոստանդիանոս կայսրը ևս ընդունել է քրիստոնեություն: Գրիգորը Արքատակեսի հետ մեծ շքախմբով գնում է Հում Կոստանդիանոսին շնորհաւորելու: Այստեղ երկու թագավորները, Հոսմի Եվսեբիոսի պապը և Գրիգորը իրար ողջումում են և բարեկամության ու ուխտի դաշինք հապում: Հայութան վերաբանալուց քիչ հետո տեղի է ունենում նիկոլոյ ժողովը, որին մասնակցում է Արքի-

տակեսը և հետը բերում է ժողովի կանոնները: Այսուհետև Գրիգորը ավելի սակավ է երևում մարդկանց և հանգիստ վախճանվում է:

Այս է Ագաթանգեղոսի համառոտ բովանդակությունը: Բանասիրական քննադատությունը վաղուց ցուց է տվել, որ այս պատմությունը գրել է ոչ թե Ժամանակակից Ագաթանգեղոս հոռմայեցի քարտուղարը, ովեմն երրորդ դարի վերջերին; այլ շատ հետո, հինգերորդ դարի երկրորդ վերաբին, որ Ագաթանգեղոս հունարեն բառը ոչ թե անձի անուն է, այլ դրամիքի, արակերն նշանակում է բարի ավետաբեր (ինչպես հոմանիշ Եվլանգելիի բառն էլ նշանակում է ավետարան): Այս և նման հարցերի վրա կանգ շնուրում, որովհետև ուրիշ մասնավոր հարցուալ պիտի զբաղվեմ:

Հայոց դարձի այս պատմությունը հայտնի է և ուրիշ ազգերի մոտ, համաւուակամ ընդարձակ, տարբեր խմբագրություններով: Լավ վարցերեն մի քանի վարդիաններով, ասորոց, նիմովացցոց լեզուներով, կա հունարեն՝ հայերենից թարգմանված: Վերջապես ն. Մառը 1902 թվին Սինայ վանքում գտավ Ագաթանգեղոսի արքարական խմբագրությունը, որ և 1905 թվին հրապարակեց, ուստի սրբեն թարգմանությամբ, հանգերձ ընդարձակ վերջաբանով՝ զնելով հետևյալ վերնագիրը: «Երեպան արյան, ցրցնե, աճազօն և ալաօն ևն. Գրիգորը»: Սա հայոց դարձի վերաբերյալ օտարազգի աղբյուրների մեջ ամենից ընդարձակն է (Հաշվելով հունարեն թարգմանությունը) ու ամենից հնատաքբարականն ըստ բովանդակության: Տեղ-տեղ նա զատ նման է հայերենին, կափծեա թարգմանություն լինի, բայց շատ տեղ՝ բորբոքվեն տարբեր հայերենից, ուստի համարվում է ուրիշ աղբյուրից առաջ եկած:

Զեւսագիրն սկզբից թերի է, սկսվում է Գրիգորի շարժարանքներից, շունի նաև Գրիգորի ընդարձակ վարդապետությունը. նա ունեցել է վերնագիր՝ ռնահատակութիւնն ու Գրիգորի, ս. Հոփիսիմէի, ս. Գայիանէի:

Հարկավոր է ցուց տալ գլխավոր տարբերությունները հայերենն Ագաթանգեղոսի և այս արքարերենի մեջ:

Հայերենն ունի Տրուատ թագավորի երկու հրովարտակներ՝ մեկը հայ ժողովրդին՝ կուռքերը հարգելու մասին, մյուսը՝ քրիստոնեության դեմ: Սրաբերենը շոմի սրանցից և ոչ մեկը:

Արքարերենն ունի Կոստանդիանոս կայսեր հրովարտակը Տրուատին, որով սրան հրավիրում է Հոսմ այցելել: Հայերենը շոմի այս:

Հայաստանի հեթանուական կուռքերի ա-
նունները արաբերենում բերված են հունա-
րեն անուններով (ինչպես ունի և Խորենա-
ցին), իսկ հայերենում նրանց անունները
բերված են հայերեն:

Հայերենում պատմվում է, թե Գրիգորը
Եփրատում մկրտեց Տրդատին, նրա ընտա-
նիքը և բազմաթիվ հայերի: Արաբերենը
պատմում է, որ Գրիգորը այս եղանակում Տըր-
դատի և հայերի հետ միաժամանակ մկրտել
է նաև վրաց, արխազաց և ալանների թագա-
վորներին:

Հայերենում ասվում է, թե Գրիգորի շար-
շարանքներից հետո հայտնվեց, որ նա Ա-
նակի՝ նոսրով թագավորին սպանովի որ-
դին է: Արաբերենում չկա այս տեղեկու-
թյունը:

Հայերենում Կեսարիայի Ղևոնդիոս միտ-
րոպոլիտի պատասխան նամակում Տըրդա-
տին պայման է դրվում, որ այնուհետև
հայոց եպիսկոպոսաները ձեռնադրություն
ստանան Կեսարիայի աթոռից: Արաբերե-
նում այս պայմանը չկա:

Հայերենում Գրիգորը ձեռնադրում է 13
եպիսկոպոս, բերվում են նրանց անունները
և միայն երեքի վիճակները նշանակվում: Արաբերենում կան այս 13 եպիսկոպոսներն
իրենց անուններով և բոլոր տասներեքի էլ
վիճակների անուններով:

Արաբերենում Սեբաստիոն Պետրոս և վիս-
կոպոսը բավական կարևոր դեր է կատարում
Գրիգորի վերադարձի ժամանակ և նրան
ուղեկցում է մինչև Հայաստան: Հայերենում
չկան ոչ նրա անունը և ոչ գործերը:

Արաբերենը հիշում է, որ Գրիգորը ձեռ-
նադրել է մի-մի եպիսկոպոս Վրաստանի,
Սրբազնայի և Ալանների համար և տա-
լիս է նրանց անունները. հայերենը չունի
այս տեղեկությունը ևս:

Ն. Մարդ կարծում է, թե հայոց դարձի
սկզբնական պատմությունը գրել է Մեսրոպի
Մաշտոցը, որն ինչպես հայոց, վրաց և աղ-
վանների համար այբուբեն ստեղծեց, այն-
պես էլ հայերին և այլ ազգերին միասին
քրիստոնյա դարձնելով Գրիգորի ձեռ-
քով՝ նպատակ է ունեցել ամրացնել կուլ-
տուրական կապը այդ ազգերի մեջ: Մես-
րոպի այս նախնական աշխատությունը
կորած է, մեր ձեռքը չի համել: Իր հոգա-
տարված արաբերեն: Թարգմանությունը կա-
պես կորած է, իսկ այս հունարեն բնա-
գիր հայերենը գրված է եղել հավանորեն մի
քաղքեդոնիկ հայի ձեռքով՝ հայերի և վրա-
ցիների մեջ համերաշխաթյուն ստեղծելու
նպատակով: Գրիգոր կուսավորչի ընդհան-

րացած պաշտամունքը Հայաստանում ե-
րեան է եկել ոյ վաղ, քան յոթներորդ դա-
րում, Հոփիսիմեի վկայարանի նորոգությու-
նից հետո Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով (615—628) և այս ժամանակ հրեան է եկել
մեր այժմ ունեցած հայերեն Ազգաթանգեղո-
սը, որ սաստիկ ազգայնացրած է. ի միշտ
այլոց նրանից դուրս են ձգված հիշատա-
կությունները, թե Գրիգորը Տըրդատ թագավորի
հետ միասին մկրտել է վրաց, արխազ-
ների և ալանների թագավորներին: Այս հա-
պավումն արված է, որպեսզի Գրիգոր կու-
սավորիչը հանդիսանա միայն հայ ազգի լու-
սավորիչը հայերեն Ազգաթանգեղոսը ութերորդ
դարի խմբագրություն է:

Այստեղ շոշափված կարևոր հարցերից ես
կզբաղվեմ երկուսով. 1) ո՞ր դարից է մեր
ձեռքը հասնել Ազգաթանգեղոսի հայերեն
պատմությունը. 2) Գրիգոր կուսավորիչը
միայն հայերին է մկրտել, թե նաև վրաց,
արխազների և ալանների թագավորներին:

Ինչպես տեսանք, ն. Մարդ գտնում է, որ
Գրիգոր կուսավորչի ընդհանուր պաշտա-
մունքը Հայաստանում տեղի է ունեցել ոչ
վաղ, քան յոթներորդ դարում, Հոփիսիմեի
վկայարանի նորոգությունից հետո: Նա այն-
քան անվիճելի է համարում այս հայացքը,
որ մինչև իսկ ասում է (եր. 154—155), թե
այս ենթադրության հակառակ տեղեկու-
թյուններ կան հայ հեղինակների մոտ և որ
սրբանք, նրա կարծիքով, ավելի կարեւոր են
այդ հեղինակների ժամանակները այլին.
ներքեւ իշեցնելու համար, քան իբրև ապա-
ցուց կուսավորչի ընդհանուր պաշտամունքի
հնության: Այս ընդհանուր պաշտամունքի
հետ կապված է հայերեն Ազգաթանգեղոսի
երեան գալը, որի ժամանակը և ն. Մարդ
համարում է ութերորդ դարը:

Դժվար է համաձայնել ն. Մարդի այս կար-
ծիքներին. նախ ոչ մի դրական ապացուց
չկա, որ Հոփիսիմեի վկայարանի նորոգու-
թյունը Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով այս-
պիսի վճռական նշանակություն ունեցած
իներ կուսավորչի պաշտամունքի ընդհան-
րանալու վրա և երկրորդ՝ որ կուսավորչի
ընդհանրացած պաշտամունքի անկասկած
վկայությունները ունենք դեռ հինգերորդ
դարից այնպիսի հեղինակների մոտ, որոնց
ոչ մի հնար չկա իշեցնելու մինչև ութերորդ
դարը, իսկ այս ընդհանուր պաշտամունքը,
որ արդեն կար հինգերորդ դարում, բնակա-
նապես պետք է ավելի զարգանար, անկախ
Հոփիսիմեի վկայարանի նորոգությունից:

Ահա վ՞նչպես է զնամեատում Գր. կուսա-
վորչին խոհեմ Մ. Խորենացին, որի ամեն մի
խոսքը շափած-կշռած է: «Աս... լարևելից

կողմանց աշխարհիս մերոյ՝ արևելք ճշմարիտ ծագեալ մ'ն և խմանալի արեգակն և հոգեսր ճառադայթ, ի խորին շարութենէ կոսպաշտութեան ելք, երանութեան և շինութեան հոգեսրի առիթ, աստուածային արդարէ արմամենի, տնկեալ ի տան Տեառն և ի գավիթ Աստուծոյ մերոյ ծաղկեալ (Բ. ՂԱ); Քիչ հետո նա կոչում է լուսավորչին սուրբ և մեծ նահատակ, մերոյ լուսաւորութեան հոգեսր վիրակացու, նախաշափիդ և լուսաւորութեանց նահապետու: Ղազար Փարպեցու ժուս կուսավորիչն արդեն կատարյալ ժողովրդական սուրբ է, նրան մի բանի տասնյակ անգամ հիշում է պատմության ընթացքում: Նրա նշխարները սքանչելագործությունները են կատարում, նրան դիմում են աղոթքներով և խնդրվածք անում: Դ. Փարպեցին Ագաթանգեղոսի պատմությունուն կոչում է Հայոց առաջին պատմությունն, որի շարունակությունն է եղել և է իրոք Փավուտու թուզանդի պատմությունը:

Ավելի հետաքրքրական է Փավստոս Բուզանդը, որ թեպետ Հայոց դարձի պատմությունը չի գրել, բայց փոքրամասն այս պատմության մեջ, տեղը եկած ժամանակ, այնքան տեղեկություններ է հաղորդում այս դարձի մասին, որ կարծիս մարդ համառոտ Ագաթանգեղոս է կարում: Հարկավոր ենք համարում համախմբել այստեղ Փավստոսի հաղորդած տեղեկությունները Ագաթանգեղոսից, մի կողմից ցուց տալու համար, որ մեր այժմյան Ագաթանգեղոսը ծանոթ է եղել Փավուտուսին և մյուս կողմից ցուց տալու համար, որ նրան ծանոթ Ագաթանգեղոսը հենց մեր ունեցածն է և ոչ արաբերենին բնագիր համարված Ագաթանգեղոսը: Այս տեղեկությունները ես բերում եմ իմ մի հոգվածից, որ 50 տարի առաջ (1896 թվին) տպագրվեց Վիճննայի «Հանդէս ամսօրեայր»-ում, «Ուսումնասիրութիւն Փավստոս Բուզանդի» վերնագրով:

Փավստոսի և Ագաթանգեղոսի համեմատությունից երևում է, որ Փավստոսը գիտե, որ Սասանյան Արտաշիրն սպանել է պարսից Պահլավունի թագավորին, որի պատճառով հզոր արշակունիները վրեժիսնովիր են եղել նրանցից (Փավ. Դ., ԺԴ, Ագաթ. Ա.-Բ), որ ս. Գրիգորը Անակի որդին է (Փ. Գ. Բ.-Ա. ԺԵ), որ Գրիգորը շարշարվել է Հայերի կողմից քրիստոնեաթյան պատճառով (Փ. Գ. ԺԳ. Ի. Դ), որ Գրիգորի շարշարանքներից հետո Հայաստան են եկել Հոփիսիմյան կուլսերը, շարշարվել ու նահատակվել (Փ. Գ., ԺԴ, Ագաթ. ԺԳ, ԺԹ), որ թագավորն անասնական կերպարանք է առացել, որ և արիթ է եղել Հայոց դարձին (Փ. Գ. Ա. Բ.-Ագաթ.-Ի), որ Գրիգորը քա-

րողել, վարդապետել է Հայոց (Փ. Գ. Ա. Բ.-Ա. Ջ.), որ Քրիստոսի նախավկաննը Գալիանեի, Հոփիսիմեի և նրանց գործակիցների վրա վկայարաններ են շինել Այրարատյան գավառում (Փ. Գ. 1—Ա. Ջ. ՃԲ), որ սովորություն է եղել կաթողիկոսների ձեռնադրությունը կատարել Կասարիայում (Փ. Գ. ԺԲ, ԺԳ-Ա. Ջ. ՃԲ, ՃԲՀ), որ ս. Գրիգոր սքանչելիքով կործանել է մեջանները Տարոնի Աշտիշատում (Փ. Գ. ԺԲ, ԺԳ. Ա. Ջ. ՃԲ), որ նա այստեղ շինել է Հայոց առաջին եկեղեցին և, Հովհաննես Մկրտչի անունով (Փ. Գ. Ժ.-Ա. Ջ. ՃԲԴ), որ այստեղ՝ Հացեաց դրահատում առաջին անգամ մկրտություն է կատարել և ձեռնադրությունն արել (Փ. ԺԳ-Ա. Ջ. ՃԲԵ), որ ս. Գրիգորը պատվիրել է տարեց տարի տոնել սրբերի հիշատակը (Փ. Գ. Ա. Ջ. ՃԲԵ), որ Տրդատ եկեղեցուն հատկացրել է լոթը յոթը հող (Փ. Գ.-Ա. Ջ. ՃԲԹ), որ ս. Գրիգոր քաշվել է անապատ Հնիելու (Փ. Ա. ԺԳ-Ա. Ջ. ՃԲԳ), որ նա ունեցել է երկու որդի, Վրթանես և Արիստակես (Փ. Գ. Բ.-Ա. Ջ. ՃԲԴ), որ կոստեր որդին՝ Արիստակեսը ձեռնադրվել է ս. Գրիգորից և գործակից է եղել հորը (Փ. Գ., Ի.-Ա. Ջ. ՃԲԴ), որ Տրդատ թագավորը և Կոստանդիանոս կայսրը դաշն են կուլ քրիստոնեական հավատի միջնորդությամբ (Փ. Գ. Ի. Ա. Ջ. ՃԲԳ), որ Հրեշտակն սպասավորելիս է եղել Կոստանդիանոսին (Փ. ԺԳ-Ա. Ջ. ՃԲԵ), որ նիկիո ժողովն է գնացել Արիստակեսը, Գրիգորի որդին (Փ. Գ.-Ա. Ջ. ՃԲԶ):

Այսպես, ուրեմն, Փավստոսի տեղեկություններից, որ պատահար ցրված են նրա պատմության զանազան տեղերում, տեսնում ենք, որ նա ծանոթ է եղել ամբողջ Ագաթանգեղոսին, նա ծանոթ է հատկապես հայերեն Ագաթանգեղոսին: Օրդին այս գիտե, որ Գրիգորը Անակի որդին է, մի տեղեկություն, որ արաբերենը չունի, այլ միայն հայերենից: Նույնպես հայերենն ունի պարման, որ Հայոց եպիսկոպոսները ձեռնադրություն տանանան Կասարիայի աթոռությունում առաջարկութեան համար: Հեռու ավելին հայ: Փավստոսի պատմությունը ապացույցներ ունի, որ Հեղինակը ծանոթ է մեր այժմ ունեցած Ագաթանգեղոսին և ոչ թե մի ուրիշ խմբագրության: Արա համար կան բավական հատվածներ երկու գրվածքների մեջ, որոնք բառացի նման են իրար: (Բառացի նմանությունները շարպած են շեղագրով): Այսպես՝

«Ժողով էր առ ինքն զրազմութիւն եսլիսկ կոպոսացն... զի ձեռնադրեսցեն զուրբն ներսէս» (Պ. Դ.):

«Եւ քազում նեղելոց և տառապելոց գե-

թեաց փրկութիւն և գերեդարձ առներ, զորս անիւ բարողուրիւն փառացն Քրիստոսի (Դ. դ.), (Այստեղ Փավլոսոսի բնագիրն աղավարդած է, դրված է «զորս» բառը, փոխանակ Աքաթանգեղոսի սկրդելով զնոսառառներին):

«Ժողովել ի յիշատակ սրբոցն, որ անդ, կատարել անդ ամի ամի եօրն անզամ... ամի ամի ժողովեալ զոր տօնին խմբեալ ցնծային, (Դ. դ.):

«Զաւետարահական ընթացսն և զվերա-

կացութիւն եկնեցնոյ սրբոյ... պահօն և ա-
ղօրիւն և ուժգին խնդրուածօն» (Դ. դ.):

«Զի յառաջ նախ անդ շինեալ էր զուրը եկեղեցին և ուղղեալ սեղան յանուն տեառն» (Դ. մդ.):

«Զովստն յիշեալ զբաշանցն կուլոյ... միջնորդուրեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և ի մէջ թագաւորին Տրդատայ» (Դ. իա.):

Եթ բազմացոյց զկարգս պաշտոնից յա-
մենայն տեղիս իշխանութեան ի սահմանացն



Ա. Հոփիսիմեի վանքը.

Հայոց և յամենոյն գաւառս կացոյց տե-
սուչս եպիսկոպոս, (Ե. իա.):

«Հանդերձ սաղմոսիւն և օրինութեամբ,
կանքեղօն վառելով և մեծա [և] պաշտ-
մամբ և բազում միշտառակօք զսուրբն յու-
ղարկեցին» (Ե. իա.):

Այս համեմատություններից անվիճելի
կերպով հետևում է, որ Փավլոսոս հինգե-
րորդ դարի յոթանասնական թվականներին
ծանոթ է եղել՝ Հայերեն Աքաթանգեղոսի
պատմության և հենց այն խմբագրության,
որով հասել է նա մեր ձեռքը, իսկ Փավլո-
սոսն ու նրան հաջորդող Մովսես Խորենա-
ցին և Ղազար Փարագեցին, անոտարակույս,
Հինգերորդ դարի հեղինակներ են, նրանց

ութերորդ կամ իններորդ դարն իշեցնելու
ոչ մի հնարավորություն չկա; Իմ մի զեկուց-
ման մեջ («Ժամանակագրական հարցեր հա-
յոց հին մատենագրության մեջ»), որ տպա-
գրմեց Ակադեմիայի տեղեկագրում (1944
№ № 6, 7), ես ցուց էի տվել, թե մեր
ունեցած Ագաթանգեղոսի հայերեն խմբա-
գրությունը կատարված է 461—465 թվա-
կաններում, հավանորեն, Գյուտ կաթողիկո-
սի ձեռքով:

Նույն հայացքին մնում եմ և այսօր:

Գալիս եմ երկրորդ հարցին՝ արդու՞ք Գյու-
դոր կուավորիչը միայն Տողատ թագավորիին
և հայերին է մկրտել, ինչպես ունի հայերեն
Ագաթանգեղոսը, թե Տրդատի հետ միաժա-

մանակ նաև վրաց, աբխազների և ալանների թագավորներին, ինչպես ունի արաբերենը: Ն. Մառը, ինչպես վերը հիշեց, վավերական է համարում արաբական բնագրի վերսիան: Նա կարծում է, թե Մեսրոպ Մաշտոցի խմբագրած Գրիգորի վարքն ու դարձը թեաբետ կորած են, բայց նրա գրած պատմական իրողությունը՝ չորս ազգերի թագավորների միաժամանակ մկրտությունը Լուսավորչի ձեռքով՝ շարունակվել է պահպանվել, քանի որ այս ազգերը մի դավանություն ունեին: Իսկ երբ յոթներորդ դարում բաժանում տեղի ունեցավ հայերի ու վրացիների եկեղեցիների մեջ, երբ վրացին Կյուրին կաթողիկոսի ժամանակ քաղքերնական դարձան, իսկ հայերը հաստատվեցին հակաքաղերոնականության մեջ, հայերը ցանկանալու որ Լուսավորիչը ազգայնանա, միայն հայ ազգի Լուսավորիչ դամնա, պատմությունից դուրս գեցին բոլոր այն տեղեկությունները, որոնք սկզբնապես գոյցություն ունեին երկու խմբագրությունների մեջ՝ չորս ազգերի թագավորների միաժամանակ մկրտության մասին Գրիգոր Լուսավորչի ձեռքով: Սրբանով խզվում էր որևէ կապ հայերի և այս երեք ազգերի քրիստոնեություն ընդունելու մեջ: Մառը այնքան հաստատ համոզված է այս կարծիքի մեջ, որ փոքրի տակ եղած արարական ձեռագիր վերնագիրը փոխել է. արաբերենի վերնագիրն եղել է «Նահատակալութիւն» ս. Գրիգորի, ս. Հոփիսիմէի և ս. Գայիանէի» (էջ. 67), այսինչ ն. Մառը իր հրատարակած թարգմանության մերժագիր է դրել «Մկրտութիւն հայերի, վրացիների, արխազների և աղվանների» ս. Գրիգորի ձեռքով:

Ի՞արկե, Ն. Մառի կարծիքը ոչ միայն անկարելի չէ, այլև հնարավոր է և հավանական: Բայց կարող է լինել և հակառակ ենթադրություն, այսինքն թե Գրիգորը մկրտել է միայն Տրդատին և հայերին, ինչպես ունի հայերեն Ագաթանգեղոսը, իսկ արաբերենի մեջ մյուս երեք թագավորների հիշատակությունը միշանկալ, հետուամուտ հավելված է, որ կատարված է որոշ դիտավորությամբ: Այսպես թե այնպես՝ ներկա դեպքում տեղի է ունեցել դիտավորյալ խմբագրական փոփոխություն՝ կամ հայերենից շնչված է օտարազգի թագավորների հիշատակությունը, կամ արաբերենում հետո է ավելացված այս հիշատակությունը, Մանրամասն բաղդատությունը և քըննությունը կարող են ցույց տալ, թե այս

երկու ենթադրություններից ո՞րն է ուղիղը, իրականը:

Այս նպատակով քննելով երկու խմբագրությունները՝ տեսնում ենք, որ երեք ազգերի թագավորներն արաբերենում երևան են գալիս միայն երեք անգամ: Ես կարեւոր եմ համարում այս երեք տեղերն էլ բերել հայերեն՝ ն. Մառի արաբերենի թագմանությունից:

Առաջին անգամ այս երեք թագավորները հիշվում են էջ 113-115-ում, որտեղ ասված է. «Երբ Տրդատ թագավորը Վաղարշապատ հասավ, հրամայեց փոքր թագավորության գրիներին իր մոտ գալ, և հրամայեց գրել թղթեր իր թագավորության բղոր ժողովորդին, որ ներկայանան մեծամեծները, պետերը, հշխանները Վաղարշապատ քաղաքաբուժը (բղբեր արխազների թագավորին, վրաց թագավորին, բուլք ալանների թագավորին) և թղթերում բացատրեց ինչ որ իրեն պատահել էր, և ասաց. «պետք է, ուրիշմն, գուք շուտով գաք ինձ մոտա: Եվ հենց որ թղթերը տեղ հասան, եկան նրա մոտ (Երեք թագավորները՝ արխազների, վրաց և ալանների թագավորները և նրանց հետ), հշխանների բազմությունը. առաջին՝ Անփողի հշխանը, երկրորդ՝ Արտաշատի իշխանը..., տասնվեցերորդ՝ Տարոնի պետը»: Թիշ հետո շարունակվում է այսպիս. «Դալիս են հիշխանները. Տրդատը նրանց պատմում է իր գլուխ եկած փորձանքները, Գրիգորի շարչարանքները, կույսերի նահատակությունը, և ապա հարցնում է՝ ի՞նչ է նրանց կարծիքը: Այս ժամանակ հշխանները և բոլոր հայերը ուրախությամբ աղաղակեցին. «Կլսենք Գրիգորին, կհավատանք նրա խոսքին»:

Երկրորդ անգամ երեք օտար թագավորները հանդիպում են իրար. էջ 133-ում գրված է. «Եվ երբ Տրդատ թագավորը լսեց, թե սուրբ Գրիգորը եկել է, միեցրեց իր հետ Աշխան կնոշը, Խորովովդրուիս բրոշը. (Վրաց թագավորին, ուսւաց թագավորին, ալանների թագավորին), յուր գորապետներին, հշխաններին, ժողովրդի պետերին, և նրանք գնացին սովոր Գրիգորին ընդառաջ և ողջունեցին: Շարունակության մեջ ասված է. «և նա սկսեց եկեղեցիներ շինել, նրանց մեջ քահանաներ դնել ս. Գրիգոր պիտուղներից, ոմանց ուղարկեց Վրաստան, ոմանց արխազների երկիրը և ոմանց ալանների մոտա» (եր. 135):

Երրորդ անգամ օտար թագավորները հանդիպում են մկրտության ժամին. էջ 135, որտեղ գրված է. «Երբ առջական էր երեսուների ուղիղությունը:

լրացավ, հոգևորականները նրա մոտ եկան, նա վերցրեց բոլոր ժողովուրդը և զնաց Եփրատ գետի մոտ, արքունի Բագավան քաղաքի մոտ, որոնց թիվն էր 370,000 մարդ. Տրդատ թագավորոր (արխազների թագավորը, վրաց թագավորը, ալանների թագավորը) և բոլոր իշխաններն ու ժողովորդները և ցեղերի ու տոհմերի մեծամեծները, բոլոր նրանց հպատակները, ծառաները, աղամարդիկ, կանայք և երեխաներ... Գրիգորը գետափին կանգնած՝ նրանց հրամայեց զգիստները հանել, նախ և առաջ Տրդատ թագավորին (Երանեալ Երեք թագավորներին) և նրա փշխաններին, որոնց օրհնեց մյուռոնով ու խաչով:

Ահա՝ այն բոլոր տեղերը, որտեղ հիշատակված են օտար թագավորները (մի անգամ նույնիսկ ոռուաց թագավորը՝ փոխանակ արխազների):

Ով ձեռագրերի հետ գործ է ունեցել, նա խսկույն կնկատե, որ այս բոլոր տեղերում էլ օտար թագավորների հիշատակությունը միջանկյալ է, հետո ավելացրած: Ես դիտմամբ այս հիշատակությունները փակագծերի մեջ դրի և շղագրությամբ շարեցի, ով որ կարդա առանց դրանց, նա կտեսնի, որ լեզուն, պատմության ընթացքը բոլորովին շեն փոխվում, այլ ընդհակարակն, ավելի կոկվում և բնական են դառնում: Սա նշան է, թե թագավորների հիշատակությունը հետո է ավելացրած, որ և խանգարում է խոսքի բնական ընթացքը: Միայն այս փաստը թագական է ցուց տալու օտար թագավորների հիշատակության անհարազատությունը, որ նրանք սկզբնապես չեն կղել: Բայց կան ուրիշ շատ փաստեր, որոնք նույն բանն են ապացուցանում: Արդարեւ, երեք աղքերի թագավորները, որոնք երեքական անգամ հիշվում են, բայց տարօրինակ կերպով ոչ մեկի անունը չի բերված. նրանք ոչ մի խոսք չեն ասում, ոչ մի բան չեն անում: Կարծես Տրդատի հույ, անխոս հպատակները լինին, որոնք Տրդատի հրամանով հանկարծ բեմի վրա երևում են և անզգալի կերպով անհնետանում: Նրանք գործող անձեր չեն, այլ թարունական բեմի համար ստափատներ: Արաբերներ հիշում է (եր. 137), որ Գրիգորը ձեռնադրել է երեք եպիսկոպոս՝ Վրաստանի, աղվանների և մի անհայտ տեղի վրա, և հիշում է այդ եպիսկոպոսների անունները, իսկ այս երեք օտար թագավորների անունները ոչ մի անդամ չի հիշում:

Որ այս երեք թագավորները նորամույթ են, երեսում է նաև ուրիշ հանդամանքներից՝

հենց արաբերն խմբագրության մեջ, վերը բերված առաջին օրինակում տեսանք, որ Տրդատը հրամայում է նամակներ գրել երեք աղքերի թագավորներին, իր երկրի իշխաններին. Երբ նրանք հավաքվում են, Տրդատը պատմում է նրանց պատահած եղելությունները, Գրիգորի գործերը և հարցում է ձեր կարծիքը այս մասին: Այն ժամանակ, — պատմում է արաբերները, — իշխաններն ու բոլոր հայերը լցովացին երկրուղի և ուրախությամբ ու խսկույն աղաղակեցին. Տկչւնք Գրիգորին, կհավատանք նրա խոսքին: Խսկ ո՞ւր մնացին երեք թագավորները, որոնք Տրդատի հարցին ողինչ շպատախանեցին, չէ՞ որ նրանք էլ ունենին իրենց համար, աստվածները, նրանք կամ պետք է պաշտպանենին փրենց հավատը, կամ, հայ իշխանների նման, հավատալին Գրիգորի վարդապետության: Բայց ոչ մեկը, ոչ մյուսը, նրանք լուռ են, որովհետ շինծու են, խմբագրու մոռացել է նրանց:

Այս տեսլից մի քիչ առաջ (էջ. 101) հրեշտակը Գրիգորի տեսած տեսիլլ մեկնելիս ասում է. «Խսկ ոսկե սկուտեղները, որ դու տեսար խաչերի հետ, որոնք մեխված էին նրանց մեջ, նշանակում են, որ ամբողջ հայոց երկրում կկառուցվեն եկեղեցիներ ու խաչեր և կփայլեն բոլոր երկրում»: Այս տեղ միայն Հայոց աշխարհն է հիշվում, իսկ օտար թագավորներին՝ ոչ Մի քիչ հետո (էջ. 113) ասված է. «Եվ նա (Գրիգորը) Հայատան երկրում բոլորին դարձրեց դեպի ճշմարիտ աստվածապահտությունը», որտեղ դարձյալ շկա, օտար երկրների դարձը: Գրքի բոն վերջում (էջ. 148) արաբերնեն ունի. «Ա. Գրիգորը շուտով լուսավորեց պարող Հայատանը, բայց դարձյալ ոչ մի խոսք մյուս աղքերի մասին»:

Նույն են վկայում նաև պատմական ավանդությունները: Վրաց պատմական գրականության մեջ Գրիգորը հանաշված է իբրև հայերի լուսավորիչ, բայց ոչ նաև վրաց: Ն. Մառը տասներորդ դարի մի ձեռագրից բերում է մի շարական (Անգոլենից), որի մեջ հին վրացիները դիմում են ս. Գրիգորին, որ հայոց աշխարհը լցորել է աստվածային վարդապետության ուսումով. «Ո՞վ պատղ Հայատանին», ասված է երգում, «հիշիր մեզ, քո հոտին Փրկչի առաջ և շնորհիր մեզ խաղաղություն երկրի վրա»:

Բայց ամենից շատ կարևորություն ունի այս հարցին նկատմամբ վրաց աղքային ավանդությունը բրիստոներություն ընդունելու մասին, նրանց պաշտամունքը վրաց առաքելուհի սրբուհի նունեին, որի պատմու-

թյունն արել է Սոկրատ Սքոլաստիկոսը (Հինգերորդ դար), առնելով Ծուփինոսից, որին պատմել է Բակուրը: Նույնը վկայում է և Մ. Խորենացին (Բ. Գ.՝) այս աղբյուրներից անկախ աղբյուրից, որովհետև պարունակում է ճիշտ նկարագրություն տեղերի, ուր տեղի են ունեցել անցքերը:

Ահա այս պատմության համառոտ բովանդակությունն ըստ Խորենացու: Մի կին, Նունե անունով, Հոփսիմյան կույսերի ընկերունիներից, որ փախստական ընկել էր Վրաստան՝ նրանց Մծխիթա մայրաքաղաքը,

ճգնություններով ստանում է բժշկության շնորհք, բժշկում է շատերին, որոնց թվում նաև վրաց թագուհուն: Նրան հարցնում էն՝ ու՞մ միջոցով է անում բժշկությունը և նա պատմում է Քրիստոսի մասին: Նրան լսում են հաճությամբ: Վրաստան լուր է հասնում Հայաստանում Տրդատի, մեծամեծների և կույսերի հետ պատահածի մասին, որը լսելով ավելի են ծանոթանում հայոց դարձի պատմության: Մի անգամ վրաց Միջան թագավորը գնում է որսի. ճանապարհին խուն լեռների մեջ սաստիկ թանձր միդ է



Ա. Գայիանեի վանքը.

պատում. Թագավորը մոլորվում է, ընկնում երկյուղի մեջ, թե մի գուցե իրեն էլ պատահի Տրդատին համած աղետի նման մի բան: Ովսում է անում, որ եթե ապահով ազատվի՝ կընդունի Նունեի քարոզած հավատը: Նա ազատվում է և իր ուխտը կատարում: Նունեն հավատադիմ մարդ է ուղարկում Գրիգորի մոտ, հայտնելով, թե վրացիք հոժարությամբ ընդունում են քրիստոնեությունը, ինքը ի՞նչ պիտի անի: (Սոկրատի պատմելով Նունեն դեսպան է տուղարկում ոչ թե Գրիգորի, այլ Կոստանդիանոս կայսեր մոտ): Ա. Գրիգորը պատվիրում է կոռագերը կործանել

և նրանց տեղը խաչ կանգնեցնել երկրպագության համար: Այնուհետև Նունեն քարոզում է քրիստոնեությունը Վրաստանի մի քանի գավառներում և դարձի է թերում, որի պատճառով Խորենացին նրան անվանում է վրաց առաքելուհի:

Այս պատմությունից երեսում է, որ գեպքը տեղի է ունեցել Տրդատի ու. Արքիքորի կենդանության ժամանակ, հայերի մկրտությունից հետո, բայց տեսնում ենք, որ վրաց թագավորը Գրիգորի մկրտվածների մեջ չի եղել, այլ իր համար ապրել է Վրաստանում հեթանոսական կրթմանվէ Այստեղ կա թագա-

վորի անում՝ Միհրան, կա մայրաքաղաքի անունը՝ Մծիսեթա, ճիշտ տեղագրություն՝ մի մեծ և մի փոքր գետերի միջև (Կուր և Արագվա), Պատմությունը շատ իրական կերպարանք ունի և միանգամայն հակասում է արաբերեն Ագաթանգեղոսին, այսինքն ցուց է տալիս, որ Գրիգորը Տրդատի հետ միաժամանակ չի մկրտել վրաց թագավորին:

Վերջապես Մ. Խորենացին, որ անտարակույս ծանոթ էր հայ Ագաթանգեղոսին և արաբերենի բնագիր Հայերենին, պարզ վկայում է, թե Գրիգորը հայոց աշխարհի լուսավորիչն է եղել և ոչ ուրիշ ազգերի: Նա ասում է. «Հայրն մեր Գրիգորինս... յիտ լուսաւորելոյ զամենան Հայու լուսով աստուածիւտութեան... սիրեաց զերինս»: Եթե նա ձեռքի տակ ունենար արաբերեն նման մի բնագիր, վրաց, արիազների և ալանների թագավորների մկրտության հիշատակությամբ, նա անշուշտ կգրեր, ոյետ լուսաւորելոյ զամենան հայս, զվիրս և զաղուանս», որովհետև Գրիգորի համար ոչ մի նվաստություն չէր լինի, եթե նա լիներ ոչ միայն հայերի, այլև հարեան երկրների լուսավորիչը:

Հիշենք նաև, որ Ն. Մատոր վերջաբանում մեջ է բարում աղբյուրներ՝ վրաց, արխանների և ալանների բրիստոնեսության ընդունելության մասին, բայց նրանցից ոչ մեկը չէ արդարացնում արաբերենի տեղեկությունը, որ այս հարցում մենակ է մնում:

Վերը դրածներից գալիս եմ հետեւալ եղակացություններին.

1) Մեր ունեցած Հայերեն Ագաթանգեղոսը ոչ թե ութերորդ դարի խմագրություն է, այլ հինգերորդ դարի վաթուունական թվականների, հավանաբար Գյուտ կաթողիկոսի շարագրած, որովհետև այս Ագաթանգեղոսին շատ լավ ծանոթ էին Փալստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Ղազար Փարագեցին, անսայման հինգերորդ դարի հեղինակների:

2) Հիմնական տարբերությունը Հայերեն Ագաթանգեղոսի և արաբական խմբագրության մեջ,— այսինքն որ ըստ Հայերենի՝ Գրիգորը մկրտել է միայն Տրդատ թագավորին և Հայերին, իսկ ըստ արաբականի՝ միաժամանակ մկրտել է նաև վրաց, արխազների և ալանների թագավորներին,— պետք է բացատրել այն մտքով, որ հարազատ վավերական բնագիրն է Հայերենը, իսկ արաբական սկզբնական աղբյուրում (հունարենում կամ Հայերենում) այս օտար թագավորների հիշատակությունը չի եղել, այլ ավելացվել է հետո, մոտավորապես յոթիներորդ դարում, երբ հայոց և վրաց եկեղեցիների միջև պառակտում ընկավէ ես համաձայն եմ Ն. Մատորի

հետ, որը կարծում է թե արաբերենի սկզբանագիր Հայերենը կազմել է մի հայ քաղեծոնական, բայց ոչ այն նպատակով, որ այս ազգերի մեջ եղբայրական եկեղեցական միության գաղափարն ստեղծեր, որ արդեն ուշ էր եկեղեցիների անշատաւմից հետո, այլ մի ուրիշ՝ ավելի պարզ ու գործնական նպատակի համար: Քանի որ այս ազգերի եկեղեցիները բաժանված չեն, Գրիգորը լուսավորիչը բնականապես ճանաշվում էր իրու ընդհանուր լուսավորիչ այս բոլոր ազգերի համար, բայց երբ եկեղեցիները բաժանվեցին և լուսավորիչը դարձավ միայն հայոց ազգային լուսավորիչ, անձանոթ քաղեծոնիկ հայը չէր կարող հաշտվել այն մտքի համար, որ իրանք զրկվում են այնքան հոչակած, ընդհանուր պաշտամունքի առարկա դարձած սրբից: Մաս առաջն առնելու մի հար կար, որ Գրիգորը միաժամանակ մկրտած լիներ չորս ազգերի թագավորներին, որով նա այսուհետև ևս կմնար դարձյալ օտար ազգերի լուսավորիչը, չնայելով եկեղեցիների բաժանման: Այս նպատակով նա մուծել է իր խմբագրած Ագաթանգեղոսի մեջ երեք ազգերի դարձի պատմությունը, որպեսզի քաղեծոնիկ դարձի պատմությունը, որպեսզի քաղեծոնիկ դարձի պատմությունը հայերն էլ նույնական իրավունք ունենան Գրիգորին իրանց լուսավորիչ անվանելու, որքան և հայերը: Այս փոփոխությունը նա կատարել է այնքան անհմտությունը նա կերպարը և այն համար անհմտությունը անվասմ երևան կհանե կեղծիքը:

Հակառակ ենթադրությունն անելը, այսինքն ընդունել, որ դարձի սկզբնական բընագիրը պարունակելիս է եղել չորս ազգերի թագավորների միաժամանակ մկրտությունը Գրիգորի ճեռքով, որ հայերը Գրիգորին ազգայնացնելու նպատակով դուրս են ձգել երեք օտար թագավորների հիշատակությունը, այս ոչ միայն աներդունելի է, այլև անհավանական: Անընդունելի է այն պատճառով, որ աննպատակ ու աննպաստ կլիներ Գրիգորի համար: Եթե նա, մնալով Հայաստանի լուսավորիչ, միաժամանակ մկրտած լիներ նաև մյուս երեք ազգերի թագավորներին, սրանով նրա մեծությունը բնավ չէր պակսի, այլ կավելանար, ուստի հազիվ թե խելքը գիլին մի հայ կամենար նսկմացնել Գրիգորի գործի ծավալը: Իսկ անհավանական է այն պատճառով, որ ութերորդ, ինչպես կարծում է Ն. Մատոր, կամ թեկուց տասներորդ դարում, Ագաթանգեղոսը տարածված էր Հայաստանի բոլոր անկյուններում բազմաթիվ օրինակներով. ո՞վ կարող էր այս բոլոր տեղերը շրջել, ճեռագիրներ ճեռք ըկ-

ըել, նրանց մեջ օտար թագավորների հիշատակությունները չնշել, և ո՞ր ձեռագրատերը թույլ կտար իր տան սրբությունը եղծանել։ Մեր ձեռքը հասել են բազմաթիվ Աղաթանգեղոսներ, մի քանիսը մինչև ութ հարյուր տարվա հնությամբ, բայց ոչ մեկի մեջ այսպիսի կրծատման ոչ մի հետք չկա։

Թլուփիմացության առաջն առնելու համար պետք է ավելացնեմ, որ իմ քննությունից դուրս է մնում վրաց և հարևան ազգերի քրիստոնեությունն ընդունելու հարցը, որ ամենայն հավանականությամբ կատարված է նույն Գրիգորի անձնական քարոզությամբ և նրա ձեռնադրած եպիսկոպոսների ջանքերով, որ վկայում է նաև հայերեն Աղաթանգեղոսը՝ ցույց տալով Գրիգորի քարոզության ընդարձակ գավառները՝ շատ նման առաքելու։ Հի նունեխի քարոզած գավառներին, ես միայն շոշափեցի շորս ազգերի թագավորների միաժամանակ մկրտության հարցը Գրիգորի ձեռքով և աշխատեցի ցույց տալ, որ այս հարցում հարազատ է սկզբնական հայերեն Աղաթանգեղոսը, իսկ արարականը կրով է հետո ավելացրած ընդմիշարկություններ։

Հայոց դարձի արարական խմբագրությունը և երեք օտար թագավորների հիշատակությունը կարելի է բացատրել նաև քաղաքական նպատակով։ Առհասարակ տարօրինակ է թվում հայոց դարձի պատմությունը մահմեդական արաբացոց լեզվով։ ի՞նչ նպասակով է նա գրված և ո՞ւմ համար, երբ արդեն գոյություն ունեին սրա հունարեն, հայերեն ըստագիրը, վրացական խմբագրությունները

յոթներորդ դարի առաջին կեսին, երբ արաբերենը դեռ տարածված չէր, արևելքում միջազգային լեզու չէր դարձած, ինչպես հետագա դարերում։ Այսպիսի վաղ ժամանակ արաբերեն թարգմանությունը կարող էր սահմանված լինել մի հեղինակավոր արար իշխանավորի ներկայացնելու համար՝ իբրև վավերական գրավոր ապացուց, թե վրացիք, աշամները ևս նույնպես քրիստոնյա են, նույն Գրիգոր Լուսավորչից մկրտված, ուստի և միևնույն պայմաններում պետք է ապրեն, ինչպես և հայերը։ Հայտնի է, որ հայ նախարարները թեոգորոս Ծշտունու առաջնորդությամբ մի շատ ձեռնութու պայման կընքցին արարացցոց հետ։ Արդ՝ արարական խմբագրությունը կարող էր նպատակ ունենալ, որ վրացիք և որդիշներն էլ նույնպիսի պայմաններով կապվին արաբների հետ։ Հստ երկութին այս նպատակն արդարանում է։ Թեոգորոս Ծշտունու հանձնվում է Հայաստանի և Հյուսիսային երկրների կառավարությունը, մինչև Շորա պահակը (Դերբենդը), ուրեմն Հյուսիսային երկրներն էլ վիճակակից են դառնում հայերին։ Գոյցի միևնույն փափկանկատությամբ արաբերենում դուրս է ձգված տեղեկությունը, որ Հայոց հպիսկոպոսները ձեռնադրությունը պետք է ստանան կեսարիայի աթոռից, որպեսզի այսպիսով խզվի եկեղեցական կապը հայերի և հուների միջև։

Այս եղբակացությունը, իհարկե, ենթադրություն է, բայց զուրկ չէ հավանականությունից։



ԴԱՎԻԹ ԲԱՂԻՇԵՑՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՔԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*)

§ 7. Դավիթ Բաղիշեցու ծաղկաբաղ տարեգրությունը մինչև այժմ հայտնի է եղել երկու ընդօրինակությամբ, որոնցից մեկը Դավիթի օրինակն է, իսկ մյուսը՝ կիմ անապատում Փիրղալեմյանի կողմից օգտված օրինակը: Դրանցից առաջինը խիստ պակասավոր մի ձեռագիր է: Այդ ձեռագրից թերթեր են ընկած, կան դժվար ընթեռնելի հատվածներ և ամենից վատը—վերջից պակաս է: Ձեռագրի նկարագրությունն անելիս թուփլամբ ձեռագրի սիմբոլուրայում նշել է. «ձեռագրի... միջից և վերջից թերթի»**): Մյուս ընդօրինակության մասին, որից օգտվել է Փիրղալեմյանը, իսկ նրանից էլ Աղանյանը, հետեւյալ տոնելի կությունն է տալիս վերջինս. «Ճամանակագրությունն օրինակել է Գրիգոր երէցը, իրա՛ Դաւթի հրամանով Միհիթար Գօշի՛ Սրբմիալի մարդարկութեան մեկնութեան հետ, որ կմ կզզումն է, ուր բերել է ինքը, երբ իր մահից առաջ իր աշակերտակից Աւետիք վարդապետի և իր վարժապետ Մեսրոպ արքեպիսկոպոսի հետ գնացել էր այցելելու այդ վանքը***): Այսպիսով Բաղիշեցու տարեգրությունը պարունակող ձեռագիրը ժողովածու է հանդիսացել:

Մեկ ծանոթ ձեռագրի հիման վրա ճշտել տարեգրության գրելու ճիշտ ժամանակը ինչպես և ստանալ մատենագրական մի քանի կարևոր տեղեկություններ, հնարավոր չել: Բարեբախտաբար, մեզ հաջողվեց ՀՍՍՌ Մատենագրարանում գտնել Բաղիշեցու տարեգրության մի ամբողջական ընդօրինա-

կություն*), որի վրա և մենք այժմ ցանկանում ենք կանգ առնել: Այդ ընդօրինակությունը մեզ հայտնի է եղել և մենք հրատարակության համար պատրաստել ենք գիրու 1937 թվին, իսկ նորերս, ՀՍՍՌ Մատենագրարանի դիրեկտորից հանձնարարությամբ, վերանայել ենք, համեմատել թերի ձեռագրի հետ, վերջնականապես ճշտել նրա տեքստը ու պատրաստել հրատարակության: Բաղիշեցու նորահայտ ծաղկաբաղ տարեգրության ընդօրինակությունը մեր Մատենագրարանն է: Ընկել գնման ճամանապարհով: Նրա վաճառողի ազգանունը եղել է նովազարյան: Բայց ովք է եղել Եղիազարյանը, ի՞նչ ճանապարհով է ձեռագիրը բերել ձեռագիրը, այդ մենք չկարողացանք պարզել: Ձեռագիրը գրանցված է այժմ ՀՍՍՌ Մատենագրարանի № 7589-ի տակ: Նա զրված է նոտր գրով, միասյուն, հասարակ թղթի վրա: Սկզբում լաթակազմ է եղել, իսկ հետագայում նորոգիլել է: Ձեռագիրը բաղկացած է 58 թերթից:

§ 8. Դավիթ Բաղիշեցու տարեգրությունն ունի մի երկար վերնագիր. «Դաւթի բանասիրի Բաղիշեցու ծաղկաբաղ արարեալ ի բազում պատմագրաց զագզն Յարեթի և սուլ ինչ զՍեմայ և զՓամայ, սուլյդ գտակաւ, բազում աշխատութեամբ, ընդունելով զլաւն և պիտանին անսխալապէս շնորհօք Քրիստոսի աստուծոյ մերոյ...»**): Վերնագրից պարզ երևում է ինչպես նրա վերցրած թեման, այնպես և կատարած աշխատանքի բնույթը:

Նա, իր խնդաման համաձայն, տարեգրությունը սկսում է հայ ժողովրդի պատմությունից: Շատ հակիմք, ընդամենը մի էշի շափով, արագիցիոն ձևով տալիս է շրջեղեղից հետո եղած իրադրությունը և ապա անցնում հայ նահապետների գենելո-

*) Սկիզբը տես «ԷջՄիԱՌՆ», Օդուտոս—սեպտեմբեր—հոկտեմբեր, 1946 թ.:

**) Հ. Թոփշեն, Ցուցակ ձեռագրաց Դավիթի և վարդապետի, էջ 96:

***) Դիւան հայոց պատմութեան, 10-րդ հատոր, էջ 19,

) ՀՍՍՌ Մատենագրարան, ձեռագիր № 7589:

**) Բաղիշեցու ծաղկաբաղ տարեգրությունը, էջ 1:

առանցքայի և պատմութեան
պահանջանք է կա.

Առանցքայ առանձին վայրը
Առանձին մեջ

Առանձին

Առանձին

Առանձին

Առանձին

Կանոն

Առանձին

Ս յ ս ա ն դ ա ն հ ա ն կ ո ր
Բ ա ր պ մ ա ն ե ն . չ ի
մ ի շ ա պ ա զ ա զ ա ն
պ ա ն կ բ ա զ ա ս ա ս ա ր զ ա ր զ ի
ա պ ա բ ա զ ա ս ա ր ա պ ա բ ա զ ա ս
ի մ ի շ ա զ ա ս ա ր ա պ ա բ ա զ ա ս
ա մ ա ն ք ե ւ լ ո ւ ա մ ի ն թ ա յ ո ւ է
ի ս ո յ ն ա մ ա ն կ ո ւ չ ե ր պ ա զ է ն
ե ց ո յ ժ ս ի օ ն ե ն պ ա ն ն ե լ
մ ր գ ո ւ ն ե լ ի մ ր տ կ ա ն ա ս
մ ր դ ո ւ ն ե լ ո ւ գ մ մ ի ո ւ ն
ե լ ո ւ ե լ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ
ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ

ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ ո ւ

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

շ ա ր ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն ա զ ա ն

Մի է զ թաղիշեցու ծաղկաբաղ տարեգրության ձեռագրից

դիալին: Դրան անցնելուց առաջ նա տավս է հետեւալ փոքրիկ ծանոթությունը, «Այլ մեր գարձուք ի վեր յազդն Յարեթի, ուստի ազգաբանեցաք, և սկսցուք Համառատարար զբաշութիւն և տաիրելն Հայրենիացն իւրեանց, թէ որպէս կամ զիարդ տիրեցին աշխարհի»*): Եվ նա շարբով կանգ է առնում Հարեթի, Թորոսի, Հայկի և այլ նահապետների վրա մինչև Պարուբը: Այստեղ նա անհրաժեշտ է Համարում տայ փոքրիկ ծանոթություն, որ Պարուբը ոչ թե իշխան է Հանդիսացել, այլ թագավոր. «Յետ սոցա (արտինքն Պարուբից մինչև Հայկակ. Ա. Ա.) կրկին գարձաւ իշխանութիւն ի Հայկազնա, նշանաւորաբար որդի ի հօրէ պայազելով ոչ միայն իշխանաց իշխան, այլ նոխարար թագաւոր նոր»**):

Պարուբից հետո Բաղիշեցին Հայոց քաղաքական պատմությունը տալիս է պատմահոր սիսեմազով մինչև Աղեքսանդր Մակեդոնացին: Այստեղ նա փոքրիկ վերապահություն է կատարում. «Եւ աստի ի վայր ոչ Հաւաստեաւ ունիմ ասել թագաւոր Հայոց, զի շփոթեալ ցուցանի ցանկն թորգոմեան, զի Աղեքսանդր տայլ Հասարակաց թագաւորութիւն ըստ Հաճույից իւրոց»***):

Մակեդոնացույլ հետո, դարձյալ պատմահոր սիսեմազով, Բաղիշեցին շարունակում է Հայոց պատմության սովորական շարքը՝ Վաղարշակ, Արշակ, Արտաշես, Տիգրան, և մյուսները՝ մինչև Տրդատ Մեծը: Այստեղ նա Տրդատի թագավորությունը սահմանագծում է առանձին գլուխ. Շամսն թագաւորելուն Տրդատի ի վերայ Հայոց ի Դիոկետանիոսէ»****): Խորագրի տակ և մանրամասն կանգ առնում քրիստոնեության տարածման վրա:

Տրդատից հետո նա կանգ է առնում Խոսրով Կոտակի, Տիրանի, Արշակի, Պատիկ և Հաջորդների վրա մինչև Արշակումյաց անկումը ու Վարդանանց պատերազմը: Այստեղ նա կատարում է նոր սահմանագծում՝ նշելով հետեւյալը. «Այսուհետև կամիմ թուականաւ ասել զամենայն բան. զի ի Վարդանայ հետէ շփոթեալ տեսանեմք զիշխանութիւն Հայաստանեաց և թագաւորութիւնն ամենկմբ բարձեալ: Զի թէպէտ երբեմն երբեմն իշխանք նստէին, այլ ի հրամանէ պարսից և յունաց, և էր զի ինքնամը նստէին մինչև զբարատունեսն, այլ աստ

մարզպանք պարսիկը տիրէին. այլ մեր թուականաւ զիարն ցուցանուք»*):

5-րդ դարից մինչև Բագրատունիք, Բաղիշեցին գուրու է զալիս քաղաքական պատմության իր նախորդ սիսեմայի շրջանակից և ընդարձակ տեղ տալիս հայ կաթողիկոսների պատմությանը:

Նա նոր սահմանագծում կատարել է Բագրատունից թագավորության սկզբում տալով հետեւյալ ծանոթությունը. «Այսուհետև կամիմ բացայատել զիագաւորութիւն Բագրատունեաց, որպէս յառաջ՝ զՀայկազանց և զԱրշակունեաց»**): Այստեղ ևս նա թագավահան պատմությանը զուգընթաց մեծ տեղ է հատկացնում կաթողիկոսների պատմությանը: Նա այս շրջանը սկսում է Աշոտից, Մըբատից, Մաշտոց կաթողիկոսից և հասցնում մինչև Բագրատունյաց վերջին Գագիկը և Գրիգորի Ապիրատ կոչվող կաթողիկոսը:

Բագրատունից շրջանից հետո Դավիթ Բաղիշեցին շարադրել է Ռուբինյանց հարստության պատմությունը, որ նրա կարծիքով Հայկազանց և Արծրունյաց խառնուրդ է հանդիսանում. «Ճայտմ վայրի. — գուռմ է, նա, — եղան թագաւորություն ցեղիցն Ռուբինեանց, որ յԱրծրունեաց և ի Հայկազանց խառնեալը խնամութեամբ»***): Այս գուռիը նա հասցնում է 1250—1257 թվականները—Օշինի որդի Լևոնի թագավորությունը և Հակոբի, Գրիգոր և Անապարզեցի կաթողիկոսի գահակալությունը:

Բաղիշեցու տարեգրության մեջ Ռուբինյանց շրջանին հաջորդած է մեր պատմության ամենախառը շրջանը— մոնղոլների, Լենկ-Ֆենուրի և օսման-պարսկական տիրակալության շրջանը: Այստեղ նա մեծ տեղ է տալիս օսմանյան շրջանին՝ վերնագրելով այն՝ «Համառատ պատմություն ազգաց տաճակաց օսմանցոց, որ բռնակալեցին միահեծան ի ծայրը Եւրոպիու բռփանդակ հիւսիսի և Բաբելոնիւ ընդ հարաւ»****):

Այս գիսում պարունակած նյութը, պետք է ասել, այնքան էլ չի համապատասխանում վերնագրին, որովհետև Բաղիշեցին այստեղ շարադրել է ոչ թե օսմանցիների պատմությունը, այլ հայ ժողովրդի պատմությունը՝ կապված օսմանյան տիրապետության հետ:

Հաջորդ գլուխը, պետք է ասել, Բաղիշեցու պատմության ինքնուրույն և ամենաարժեքավոր մասերից մեկն է: Պատմական զեպքերի շարադրությունը այս գիսում նա հասցնում է մինչև իր ժամանակակիր:

*) Բաղիշեցու ծաղկաբաղ տարեգրությունը, էջ 2:

**) Նույնը, էջ 8:

***) Նույնը, էջ 11:

****) Նույնը, էջ 23:

*) Բաղիշեցու ծաղկաբաղ տարեգրությունը, էջ 42:

**) Նույնը, էջ 51:

***) Նույնը, էջ 60:

****) Նույնը, էջ 68:

Բաղիշեցու տարեգրության վերջին գլուխը նվիրված է հրեական և հռոմեա-բյուզանդական պատմությանը: Այս գլխի սկզբառում Բաղիշեցին տվել է հետևյալ ծանոթությունը: «Արդ կամիմ ծաղկաբաղ առնել յԱրքահամէ մինչև ի քրիստոսի ծնունդի և անտի կարգաւ մինչ ի Կոստանդիանոս և անտի մինչ ի թոփին Զ (1251) զկարգս նահապետաց և զառաքելոցն համառօտաքարու»):

Պատմության վերջում, մեր ուսուժնասիրության նյութ հանդիսացը ձեռագրում, պահպատ է Բաղիշեցու հիշատակարանը թերի վիճակում:

Բաղիշեցու տարեգրության մասին հակիմ տեղեկություն տալուց հետո, փորձենք կանգ առնել տարեգրության ուսումնասիրության հետ կապված մի քանի կարևոր խնդիրների մը՝ տարեգրությունը գրելու ժամանակի, օգտագործված աղբյուրների, տարեգրության արժեքի և Բաղիշեցու պատմական կոնցեպցիայի վրա ու աշխատենք պատասխանել այդ հարցերին:

§ 9. Սկսենք Դավիթ Բաղիշեցու տարեգրությունը գրելու ժամանակից: Այս մասին մենք որոշակի երկու տեղեկություն ունենք: Դավիթ Բաղիշեցու հիշատակարանն է, իսկ մյուսը տարեգրության մեջ այլ կապացությամբ, միշանկալ ձևով ասված մի հիշատակություն: Բաղիշեցու հիշատակարանում պարզ տափած է.

«Արդ եղել զրաւ սորա թոփին ՌՃՃԲ (1663) ի հայրապետութեան սուլթ էջմիածնի տէր Յակոր կաթողիկոսի և յառաջնորդութեան Բաղէշ քաղաքի տէր Մեսրոպ վարդապետի, ձեռամբ յոգնամել, փծուն և անարժան բանասիրի...»**): Հայկական 1112 թվականին, այսինքն միր ներկա թվականի 1663-ին, ուրիշ ավարտել է Բաղիշեցին իր տարեգրությունը:

Մյուսը, որ միքանկալ ձևով է ասված, հետեւալն է.— Բաղիշեցին խոսելով իր ուսուցի, Մեսրոպ վարդապետի մասին և կանգ առնելով նրա 1638 թի Փիլիպոս կաթողիկոսից ձեռնադրվելու փաստի վրա, ավելացնում է, որ Մեսրոպ վարդապետը 25 տարի է, որ առաջնորդություն է անում***):

«Երկրի վերատեսուշ հոգեսր այժմ Մեսրոպ վարդապետ,— գրում է նա, — օծեալ ձեռամբ Փիլիպոսի կաթողիկոսի և առեալ զաւազան ի նմին աւոր, թոփին ՌՃՃ (1638), որպէս յառաջ ասացի: Եւ այս

* Բաղիշեցու ժաղկաբաղ տարեգրությունը, էջ 86:

**) Նույնը, էջ 133:

***) Նույնը, էջ 84:

ին (25) ամ է, որ նստեալ է յալու...: Եթե Մեսրոպ վարդապետը ձեռնադրվել է 1638 թվին*) և այնուհետև մինչև Բաղիշեցու գրելու ժամանակը 25 տարի էր որ առաջնորդ էր, ապա 1638+25=1663, ուրեմն տարեգրության գրելու ժամանակը անվիճնի 1663 թվականն է հանդիսացել:

§ 10. Երկրորդ հարցը—աղբյուրները: Դավիթ Բաղիշեցու տարեգրության մեծ ժամանակը հայկական հին և միջնադարյան պատմագրներից: Տարեգրության առաջին մասում Բաղիշեցին, մեջ առ մեջ, օգտվել է Խորենացուց և Հովհաննես Դրասիանակերտությունը: Բաղիշեցին չի թաքցնամ այդ ուղարգ ասում է: Այսպես, Պարույր Սկավորդու մասին խոսելիս նա նշում է՝ որ «Սկավորդին ոչ միայն իշխան, այլ և արդ թագավոր, զոր և զներբող գովեստի սորա ուսցիս ի Մովսէս Քերոբողէ, զի զայս ժաղկաբաղ եմ արարեալ ըստ ախորժակաց իմոց»: Նա պարզապես խոսովանում է, որ ինքը ժաղկաբաղ է արել Խորենացու պատմությունից, միայն ոչ թե ըստ Խորենացու հետևողականության, այլ ըստ իր «ախորժակաց»**): Հովհաննես Դրասիանակերտություն և Բաղիշեցին իր տարեգրության մեջ հիշում է անունով: Այսպես, Սուբիսայանց սպանության մասին խոսելիս, նա գրում է: «Ճայսմ ժամանակի եկեալ Բարուհաս ոմն յԱլանաց և նահատակեաց զուրբն Սուբիսա ընկերոքն, որ կային ցարդ ևս կենդանի, որպէս ասէ Յովհաննէս պատմագիրն»***):

Հովհաննեակին սա պնունով հիշում է նաև իր տարեգրության այլ էջում: Հայոց պատմության չորրորդ դարի գեպքերը շարադրելիս Բաղիշեցին իր ձեռքի տակ ունեցել է, Փալմստուսը ու անունով հիշում է նրան: Խոսելով Տիրիմի սպանության մասին, Բաղիշեցին ավելացնում է: «Եւ ոմանք ի պատմագրացն, որպէս Բիւլանդ, ասեն Տիրիթ փասն գեղեցկութեան Փառանձեմայ ետ սպանանել Արշակաւ ի խորան վրանին՝ աղաշելով սրբոյն ներսէսի: Եւ ոչ լուեալ: Եւ Մովսէս Խորենացին այսպէս, որպէս յառաջ գրեցաք՝ սպանեալ նետիւ-ի ստորոտ նպատ լիրինն, որ է Աբաղա»****):

*) Դ. Գ. Խեճիշեան իր «Ստորագրությմ հին Հայաստանեայց» աշխատության մեջ 1684 թվին առաջնորդ է հիշում Մեսրոպ վարդապետին, իսկ հետո Ավետիս եպիսկոպոսին և ավելացնում: «Բայց թէ Ե՛՛ զառաշինն սկիզբն եղել առաջնորդութեան կամ եպիսկոպոսարանին, ոչ ուրեք գտաք ի դիրս», էջ 124:

**) Բաղիշեցու ժաղկաբաղ տարեգրությունը, էջ 8:

***) Նույնը, էջ 23:

****) Նույնը, էջ 32:

Գրիգոր Լուսավորչի հետ կապված ավանդությունները շարադրելիս, Բաղիշեցին բացի Խորենացուց և Ազաթանգեղոսից, օգտվել է նաև նրկու ապոկրիֆ աշխատություններից, — Զենոր Գլակի «Պատմություն Տարօնոյ» աշխատությունից և «Դաշանց թղթից», նա Զենոր Գլակից օգտվել է Դեմետրի և Գեսանե քրմերի գեմ քրիստոնյաների վարած պատերազմի կապակցությամբ, իսկ «Դաշանց թղթից» Տրդատի և Գրիգորի Հոռոմ գնալու և Կոստանդիանոսի ու Սեղմեռոսի հետ դաշն կնքելու ավանդության մասում: «Դաշանց թուղթը», ինչպես հայտնի է, կաթոլիկ քարոզչների կողմից 12-13-րդ դարերում կեղծված տիեզրու է:

Ուշ շրջանի մատենագրներից նա օգտվել է Սամվել Անեցուց և Կիրակոսից: Կիրակոս պատմիչի մոտ եղած Հովհաննես Սարկսվագին վերաբերվող ամբողջ հատվածը Բաղիշեցին գրեթե տառացի արտագրել է, ե՛փ Կիրակոսին, և Սամվելին նա անուններով հիշում է. «Ի ժամանակս սորա (այսինքն Գրիգոր Ապիրատի), — գրում է նա, — փայտին աշխարհի իրրև զարեգակն բազում վարդապետք: Նախ Ներսէս հարազատն իւր Երկրորդ՝ Ներսէս Լամբրոնացին: Ոմանք ի պատմագրաց, որպէս Սամուէլ, ասէ զա յետ հայրապետութեան Ներսէսի: Եւ Կիրակոս պատմագիր աստ ասէ՝ այս Ներսէս Լամբրոնացին թարգմանեաց զմեկնութիւն տեսլիանն Յովհաննու աւետարանշխացի»^{*)}):

Վերջին պատմագիրը, որից նա օգտվել է, այդ Թովմա Մեծոփեցին է: Կարելի է ասել, որ Լենկ-Թեմուրի ամբողջ մասը Բաղիշեցին, առանց Հեղինակի անոնը տալու, վերցրել է Թովմա Մեծոփեցուց: Բաղիշեցին Մեծոփեցուց վերցրել է նաև կաթողիկոսական աթոռը էջմիածին տեղափոխելու պատմական ամբողջ հատվածը:

§ 11. Երրորդ հարցը — ի՞նչ արժեք է ներկայացնում Բաղիշեցու տարեգրությունը հայ մատենագրության պատմության համար, ի՞նչ նոր փաստեր է նա ավելացնում հայ պատմագրության մեջ: Մեզ համար դժվար է մանրամասն թվել Բաղիշեցու տարեգրության բոլոր արձանիքները, բայց կարենոր մի քանի փաստերի վրա կանգ կառնենք:

Բաղիշեցու տարեգրությունն ամենից առաջ կարենոր է հայոց պատմության հին շրջանի և վաղ միջնադարի համար: Զնայած այս մասերում նա օգտվել է մեղ ծանոթ հայ պատմագրներից, սակայն հաճախ օդտրվել է հայ պատմագրների այսպիսի ընդո-

րինակություններից, որոնք մեզ չեն հասել: Այսպես օրինակ, Բաղիշեցին օգտվել՝ էպատմահոր մի այնպիսի ընդօրինակությունից, որը չի ունեցել Աբգարի նամակադրությունը Քրիստոսի հետ, որի ընդիշաբեկությունը հանդիսանալը այժմ արդեն անվիճելի է: Այս մասին, ի դեպ, հայագիտության մեջ կասկածներ եղել են:

Կամ վերցնենք Փավստոսը: Բաղիշեցին իր ձեռքի տակ ունեցել է Փավստոսի այնպիսի մի ընդօրինակությունը, ուր Պապ թագավորը գահ բարձրանալուց առաջ ներկայացվել է որպես պատանդ հստմեացիների մոտ: Բաղիշեցին այս մասին պատմում է՝ ուշ նա (Շապուհ. Ա. Ա.) զանայր խափանել զերիստոնէութիւն: Եւ շինէր ատրուշան կրակի: Զայն տեսեալ մնացեալ նախարարացն, թողին զկանայր յւրեանց ի յամուրս, և գրնացին, և լալով անկան յուս սրբոյն՝ ու անտես առնել զվիճակն Աստուծոյ: Եւ լուաւ նոցա և գնաց առ Մեծն Թէոդոս թագավորիցտեցանի զՊապ, որ էր ի պատանդի առ նմա»^{**}): Թեոդոս Մեծը Պապին ժամանակակից զնելը անախրոնիզմ է, նրան ժամանակակից է Վաղեար:

Հստ Բաղիշեցու օգտված Փավստոսի այս վարիանտի, հետաքրքիր է նաև Պապի սպանությունը: Հստ Բաղիշեցու բերած տեղեկության Պապը սպատամբում է Հոռոմի դեմ և զաշնակցում Շապուհի հետ. այս իմանալով Թեոդոս Մեծն ուղարկում է Անատոլիոս զորավարին, որը բրոնեաց զՊապ և կապանօք էած առ Թէոդոս: Եւ նա տեսութեան ու արար արժանի, այլ սակրով վտարեալ և ի ծով ընկեցեալ յան սրբոյն առն աստուծոյ՝ զոր նա սպան»^{**}):

Մման մի շարք փաստեր կարելի է մատնացուց աննել Բաղիշեցու տարեգրության մեջ:

Սակայն Բաղիշեցու տարեգրության ամենաարժեքավոր մասը, — այդ իր ժամանակաշրջանի մասն հայորդած տեղեկություններն են: Ցավաիի է միայն, որ այս մասը չատ փոքր ժամանի տեսնի և սահմանափակվում է Բաղիշեցի ներ շրջանակով:

Ամենից առաջ Բաղիշեցու ժամանակակից պատմության մեջ արժեքավոր են այն նյութերը, որոնք ցուց են տալիս տաճկա-

^{*)} Բաղիշեցու ծաղկաբաղ տարեգրություն, էջ 56—57:

^{**) Բաղիշեցու ծաղկաբաղ տարեգրությունը, էջ 34:}

^{***) Նուզնը, էջ 35:}

կան լծի ծանրությունը Տաճկահայաստանում, թուրք ամիրաների կեղեգումները ու բռնությունները հայկական շրջաններում։ Դավիթ Բաղրամյան խոշնով՝ Ավդալ Խանի ամիրայության մասին Բաղեցում, հետևյալն է գրում. «Եւ այս ԽԳ (43) ամ է, որ ամիրայ է Բաղեցու քաղաքին. և զանբաւ շարիս, որ սա անցուցանէ, ո՞ կարէ ծրել ի քարտիսի՝ զհարկապահանջութիւն, զկերեքելն, զթալանելն, զտուգանսն, որ հասուցեալ է զմեզ յիտին չքաւորութեան... զի Ի (20) բեկզադայ ունէր մեծամեծք, թող զաղզկունա և զմանը տղայս»^{*}):

Հայ ժողովրդի ծանր վիճակի մասին այդ ժամանակ, վկայում են նաև մեր Հիշատակագիրները։ Այսպես, Մարտիրոս Վրիշը 1652 թվին Բաղրամյան գրված իր ձեռագրի հիշատակարանում նշում է. «...Գրեցի զուրբ գիրքս ի քաղաքս Բաղեշ... կենօք տառապանօք և դառնութեամբ ի յամենայն կողմանց, զնորիւք պաշարեալ ի թուականիս հայոց ՈՃԱ (1652 թ.) ի դառն ևնեղ ժամանակս, յորում նեղինք ի հարկապահանջութենէ անօրինաց, քանզի ևս քան զևս սաստկանայ բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս, ևս առաւել ագփիս հայոց վասն ծովացեալ մեղաց մերոց»^{**}):

Դավիթ Բաղրամյանը տարեգրությունից երեսում է, որ Հայաստանը քանդվել, ավերվել է ոչ միայն տաճիկների ծանր հարկերից, կեղեգումներից, այլ և միջֆեռտալական կոհիվներից։ Այս տեսակետից հետաքրքիր է Վանի Մալաք փաշայի և Բաղեշի Ավդալ խանի կոհիվները։ «Թիվն ՈՃԶ (1657), — արձանագրել է Դավիթ Բաղրամյանի իր տարեգրության մեջ, — եկա Մալաք փաշայ Վանալ ի վերա Բաղրայու Ավդալ խանին իմ (20,000) սպառապինօք։ Եւ ի հուպինել քաղաքին՝ փախեալ խանն. Հանդերձ կանամբ և ամենայն աղլիսին յանձաւու լերանց, որ Մօտկան կոչված առ Ալի աղա նախարար կողմանց։ Եւ Մալաքն, որ յառաջ վազիր ու այժմ փաշայ է, զմեծագոյն որդին Դիտանի անուն ամիրայ եղ ի տեղի հօրն և թալանեաց զմնացեալ աղլս նորա, և զքաղաքն... և շատ վնաս գործեցին ի սաղրելոյ Վանայ զուլոցն»^{***}): Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ միջֆեռդաւական այս կոհիվների ժամանակ տրուգում.

^{*}) Բաղրամյանը ծաղկաբաղ տարեգրություն, էջ 83—84:

^{**) ՀՍՍԾ Մատենադարան, ձեռագիր № 835, թ. 243:}

^{***) Բաղրամյանը ծաղկաբաղ տարեգրությունը, էջ 83:}

ոտքի տակ գնում էր առաջին հերթին տեղացի շինական ժողովուրդը։

Ի դեպ, Վարդան Բաղրամյան մի փորոխ ժամանակագրության մեջ, որն ընդօրինակվել է կմի Միքայել Ասորու ժամանակագրության շարունակության տեքստում, նույնպես պատմվում է միջֆեռդաւական այս կոհի և քաղաքի թալանի մասին։ Մալաք փաշայի (Մահմեդ սուլթանի քրոջ ամուսու) զորքերը, ասված է այստեղ, «Մարին ի քաղաքն և յաւարի առին, և կողոպատեցին գրիստոնեայս և աստ էր տեսանել զաղաղակի և զորդն մեր, զի քրազումս սպանանին»^{*)}։

Հայ ժողովրդի համար սակայն րիշ հոգս ու աշխատանքը շին ստեղծել նաև տեղացի հայ աշխարհիկ ու հոգեւոր առանձին իշխանակուրները։ Բաղրամյանը տարեգրությունից երեսում է, որ 7-րդ դարում իր պառակտիւ ժողովրդագավ ձգտումներով Բաղեշի հայկան շրջաններում մեծ վրդովմունք և անհանգստություն է առաջացրել Աղթամարի կաթողիկոսությունը՝ Մարտիրոս Փշրուկ մականուն ունեցող կաթողիկոսի վկանակությամբ։ Սա կաշառելով Վանի փաշային, փորձել է էջմիածնից կորել, և Աղթամարին ևնթարկել Վանի և Բաղեշի շրջանները։ Մակայն սեղացիները համառությամբ դիմադրել են նրան և շեն ենթարկվել։ Այս պայքարի մասին էջմիածնի արմիսում եղել են համապատասխան վակիրագրեր, որոնք և Սիմեոն Երևանցին բերել էր աջամբռափ մեջ։ Այդ վակիրագրերից մեկը՝ Սուլթան Մահմեդի փերմանն է՝ Վանը, Բաղեշը և Հարնան մյուս շրջանները ո՛չ թե Աղթամարի կաթողիկոսությունը, այլ Վանի Վարագա սուրբ Նշանին (Ետուի քիլիսեին) պատկանելու մասին»^{**})։ Այս դեպքի մասին մեր տարեգրու հետեւյալն է պատմում. «Թուկին ՈՃՃԱ (1662) գրգիւեաց շարճ սատանայ զաղթամարցիք, որ զամս բազումս ի Գրիգորիսէ Կաթողիկոսէ բանադրեալք կալին, հակառակ կային քրիստոնագիր սուրբ աթոռուր էջմիածնին։ Կաշառա ետուն Վանայ փաշին ԸՃ (800) կարմիր ոսկի՝ ձեռամբ Աղթամարի աղյն, որ դու է։ Եւ արդ առին ի փաշայէն, գնացին ամբ հանին ի Ստամբուլայ՝ թե Վան քաղաք և Բաղեշ Աղթամարայ լինի... մարդիկ և տաննուալէր Աստանայ միաբանութեամբ և շաւուշօք եկին ի Բաղեշ քաղաք, իբրև թէ այսուհետև մի ոք իշխեսցէ զանուն էջմիած-

^{*)} Վարդան Բաղրամյանը ժամանակագրությունը (տես, Դիտան հայոց պատմութեան, 10-րդ հատոր, էջ 78):

^{**) Զամբոր, գիրք, որ կոչվ յիշատակարան արձանացուցիչ, աշխ. Միմէռն կաթողիկոս Երևանցի, Վաղպատ 1873 թ., էջ 95։}

նայ տալ, Աղթամարար եւ զայն տեսեալ մեծ վարդապետին Մեսրոպաց Հանդերձ մեօք, զմա՞ն յանձն առեալ և մի տեսանել գարհամարանս մօրն լուսոյ: Եւ ոչ թողաք եկեղեցին: Եւ գնացեալ իշխանեցան ի խառնութիւն և ի խաներն: Եւ էջ հոգեոր Հայրն մեր ի քաղաք և խրանեաց զժողովորդն և ծանոյց զառաշին կապանս նոցա և թէ ոք նոցա Հնազանդին, ուրացուղբ կոշին, զի ուրանան զաթոռ ուրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Եւ Հաւանեալ ամենայն ժողովրդեան բռնութեամբ Աւելալ խանին, արտաքսեցին զնոսա ի քաղաքէն: Զի՞նչ երկարեցից, այս Բ(2) ամ է է(?) անգամ եկին Մարտիրոս փշորուկ անուանեալ կաթողիկոս Աղթամարայ, և զՍահակ վարդապետ, և Մովսէս գող եպիսկոպոս, շէկ անիծեալ աշխարհական մի և պիղդ անիծեալ մելիք մի Յովհաննէս Գաւաշու, աւելի քան զի (20) այր: Եւ զի՞նչ ասացից, Քրիստոսի շնորհն յաղթեաց նոցա և ոչ կարացին մռածանել զաղանզն իւրիանց յաշխարհս մերը*): Վերջում նա դառնացած ավելացնում է, որ այդ ամբողջ պայքարը թեթև չի նստել իրենց վրա, դրա համար ըստիպված են եղել ծափսել ավելի քան 3000 դուռշ դրամ կաշտու տալով փաշարին, խանին, չալուչին և ուղիչներին, մինչև կարողացել են Ստամբուլից նորից հրաման ըստանալ՝ էշմիածնի վրա իրենց այդ շրջանը հաստատվելու մասին:

Ի միջի ալլոյ, հայ լուսավորչական համայնքն այդ նույն շրջանում նեղվել է և քաղքեղունականների կողմից: Կարպան Բաղդեհցին իր ժամանակագրության մեջ պատմում է, որ քաղքեղունական եկեղեցու ղեկավար ներդր հավատափոխ մի հայի միջոցով, որը բարձր պաշտոն է ունեցել արքունիքում: Երկու հարյուր հազար կաշտոք են տվել և գրավել սուրբ Հակոբա եկեղեցին. «Ծառն, — գրում է նա, — (քաղքեղունականք) երկու հարիւր հազար դուսուշ, այսինքն հարիւր հազար զահնեկան կարմիր, և աղաշեցին յթաւգաւորն, զի տաղէ նոցա եկեղեցին հայոց զվանս սրբոյն Յակոբայ... որ էր ձեռն մեր: և էր վանք մեծ Հոյակապ և սրբնչելի, և ականաւոր, և աննման, և այնպէս հնարիւր կաշտեցին զմագաւորն, և առին ի մէնչ զսուրբ Յակոբայ*):

§ 12. Վերջին հարցը, որի վրա մենք ցանկանում էինք կամք առնել, այդ Դավիթ Բաղդեհցու կոնցեպցիայի հարցոն է՝ կապված հայ ժողովրդի պատմության հետ: Ի՞նչպես է նա նայում հայ ժողովրդի անցյալի վրա:

*) Բաղդեհցու ծաղկաբաղ արեգություն, էջ 85:

**) Տես, Դիւան հայոց պատմութեան X գիրք, էջ 79—80:

ի՞նչ գիտավոր հարցեր են նրա ուղարքության կենտրոնում: Ի՞նչ մեթոդական նոր մոտեցում է նա ցուցաբերում իր առաջարքած հարցերը քննելիս:

Այս հարցին պատասխանելիս, դժբախտաբար, մենք չենք կարող մատնացուց անել ինչ որ մի նոր, առանձնահատուկ բան Բաղդեհցու մոտ, քան այդ նրա նախորդ հայ պատմագիրների մոտ է: Նա ևս, իր միջնադարյան լծակից ընկերների նման, հայոց պատմության վրա նայում է որպես թագավոր, ներիր ու կաթողիկոսների պատմության: Ժողովրդի քաղաքացիական պատմություն, մեր ներկա հասկացողությամբ, նրա մոտ գոյություն չունի: Բաղդեհցու տարիեկությունը ամբողջապես հյուսված է հայ թագավորների և կաթողիկոսների գործունեության հետ կապված է հայկագունդի իշխաններով և թագավորներով, այնուհետև Արշակունիներն են, ապա՝ Բագրատունիները և Ռուբինյանց հարատությունը:

Այս մասին նա պարզ նշում է իր տարեգրության մեջ. «Արդ՝ ի չորս բաժանեցի զթագաւորութիւն Արամեանս տաճմի՝ սատ չորից կողմանց և չորից հողմոց և չորից վտակաց: Նախ՝ Հայկազուննն էրկորուդ՝ Արշակունեաց, երրորդ՝ Բագրատունեաց, չորրորդ՝ Արծրունեաց՝ հասնեալ է խնամութիւնամբ ընդ Հայկազունննա»):

Նախորդ հայ պատմագրների նման, Բաղդեհցին ևս իր տարեգրության մեջ մեծ տեղ է տվել կրոնա-բարոյախոսական հարցերին: Նա նպատակ է ունեցել ո՛չ թե ընդհանրապես շարադրել հայ պետականության ժամանակագրական սինեման, այլ այդ տարեգրության միջացով առաջարիկ կրոնա-բարոյական այն նորմաները, որոնց նա նեսուեռմ էր: Պապ թագավորին բախտ վիճակվեց բռնվել և սպանվել բյուզանդացիների կողմից: Խնչու՝ — որովհետև նա անարդարացի գտնվեց ներսես կաթողիկոսի նկատմամբ և Աստված պատմեց նրան: Արշակ երկրորդը դագրելի մեկն էր և վաճա նկարագրի՝ ուներ ինչու՝ — որովհետև բարյացակամ վերաբերմունք չէր ցուցաբերում դեպի ժամանակակից կաթողիկոսը:

Բաղդեհցին հավատում է Հրաշներին և առատովնեն բերում է իր տարեգրության մեջ՝ հատկապես այն ժամանակ, երբ դա անհրաժեշտ է հայ եկեղեցու աշխի ընկնող այս կամ այն անձնավորությանը բարձրացնելու:

*) Բաղդեհցու ծաղկաբաղ տարեգրությունը, էջ 60:

Համար (Լուսալիբջին, Ներսես Մեծին, Սահակ Պարթևին և ուրիշներին): Նա մեծ տեղ է տալիս նաև վաղ քրիստոնեական ոչ հայ գործիչներին: Մի խոսքով, Բաղիշեցին իր ժամանակի մարդուն է, հավատարիմ հետեւողը կրոնա-բարոյական այն նորմաների, որ նա դավանում էր:

Գալով Բաղիշեցու քաղաքական հայացք-ներին, պետք է ւաենք, որ նա մեկն է եղել իր ժամանակի առաջադեմ այն մարդկանցից, որը մեծ գործ է կանարել համախմբելու հայ հասարակական ուժերը: Տաճկական ներգ քաղաքականությունն ամեն կերպ աշխատել է պառակտում մտցնել հայ հասարակական շրջաններում, աշխատել է հակադրել հայկական առանձին համայնքներին իրար, որպեսզի դրանով նա կարողանա ավելի ամրացնել հայ ժողովրդի ուժին իր կա-

պարյա ծանր լուծը: Բաղիշեցին պայքարել է բոլոր նրանց գեմ, որոնք տաճիկների ձեռքին գործիք դարձած գժություններ են սերմանել հայ համայնքների շրջանում: Սա Բաղիշեցու դրական կողմերից մեկն է:

Բաղիշեցու ծաղկաքաղ տարեգրությունը կարեւոր ներդրում է հանդիսանում հայ մատենագրության գանձարանում: Նա, Ֆիշու է, քիչ բայց աժեքավոր նյութեր է տալիս մեր պատմության ամենախառը և ամենակարևոր շոր շրջանի համար:

Բաղիշեցու տարեգրությունը մեր հայ մատենաշարքի այն երջանիկ բացառություններից մեկն է, որի հրատարակությունն անցյալում հնարավոր չի եղել և նա պիտի լույս տեսնի մեր սովետական շրջանում, լավագույն ընդօրինակության հիման վրա և խրնամքով մշակված:



ԿԱՐԱՊԵՏ ԵԶՑԱՆ, ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍՈՐՑԱՆ, ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՑԱՆ *)

Որժանի է ուշադրության նաև Եպյանի մասին Տիգրանյանի պատմած մի ուրիշ դեպք: 1887 թվի նոյեմբերի սկզբին, երբ Տիգրանյանի աքսորից երևան վերադառնալու ժամկետը լրանալու վրա էր և նա արտասահմանից վերադարձել էր Պետերբուրգ: Նրա և Եղյանի միջև այնպիսի մոտ հարաբերություն է ստեղծվում, որ վերջինս հայտնում է նրան, թե մտադիր է իրեն կտակակատար կարգելու և հանձնում է նրան իր նամակները կարգի բերելու և ցուցակագրելու գործը: Տիգրանյանը նամակները կարգալով նկատում է, որ դրանք իրենց մեջ այնքան առատ տեղեկություններ են պարունակում կոմիսարնակ հայերի մասին, որ կարելի է ասել, թե հայաբնակ վայրերի որ անկյունումն էլ փոշտացել են, Եղյանի բնակարանում լավել է: Տեղի ունեցած դեպքերի և փրադարձությունների հետ միասին նամակներում նկարագրված են եղել նաև մատնալոր մարդկանց ընտանեկան կյանքը, հարաբերությունները և մինչև իսկ ամենաշնչին դեպքերի մանրամասնությունները:

Տիգրանյանի համար պարզվել է նաև, որ բոլոր հայաբնակ վայրերը բաժանված են եղել երեք անձանց մեջ՝ Գևորգյան ճեմարանի տևուշ Կարապետ Կոստանյանի, Նահապետ վարդապետի և Գևորգ Եվլանդյանի. առաջին երկուսն երևանյան շրջանի, իսկ երրորդը Վարստանի և ընդհանրապես բովանդակ Կովկասի համար: Դրանք Եղյանի գլխավոր գործակամերն են եղել և երկրի զանազան վայրերում ունեցել են իրենց մարդիկը, որոնց միջոցով տեղեկություններ են հավաքել ու հաղորդել Եղյանին: Տիգրանյանի ասելով

Եղյանին անհրաժեշտ է եղել իր նպատակների համար իմասնալ, առև ո՞րքան փող է ունեցել և գլխավորապես ո՞վ է Կոմիսարության հրեն համակրողը և հակառակորդը և ո՞վ կարող էր նամակներով ազգել, ներգործել Սանասարյանի վրա, մի հոսքով Տիգրանյանի ենթադրությամբ, դա եղել է մի ոկազմակերպված ճիգվիտական շկոլա»:

Եղյանի ամենամեծ գործը սակայն եղել է Կարմոն Սանասարյան միջնակարգ դպրոցի հիմնադրումը: Նա ինքն, իհարկե, ունկոր մարդ չէր, որ կարողանար այդպիսի մի թանկարժեք հաստատություն հիմնել: Դրաբոցի հիմնադիրը և պահողը եղել է Մկրտիչ Սանասարյանը, բայց Եղյանի խորհրդով և իրական աջակցությամբ է կատարվել ամենը. Նրա ձեռքով է 1886 թվին գրվել ու վերջնականապես հաստատվել կտակը, որոյ ապահովված է եղել դպրոցի գյուղյունը նաև կտակակատարի մահվանից հետո:

Եղյանը վախճանվել է 1913 թվին, և որքան մենք հիշում ենք, յուր ժառանգներին մի առանձին կարողություն չի թողել. գոնեայս մասին տշինչ չի գրվել, ոչինչ չի հայտնվել:

Նրա գրվածքներից առանձնապես ուշադրության արժանի է օկեհահայոց բռնի միությունը:

Բ

Այժմ ծանոթանանք Մկրտիչ Սանասարյանին, որը մեր մոտ անցյալում բարեգործ անձի մեծ համբաւ էր վաստակել:

Մկրտիչ Սարգսի Սանասարյանը ծնվել է Թիֆլիսում 1818 թվին, ապրիլի 10-ին: Նրա հայրը՝ Սարգիս Սանասարյանը վանեցի էր: Նա ամուսնանալով վանեցի հայտնի Գևորգ աղա Արծրունու դստեր՝ Մարգիանի հետ, 1814 թվին ընտանիքով Վանից տեղափոխվում է Թիֆլիս, իր անոր Գևորգ Արծրունու

*) Տես սկիզբը «ԷջՄԻԱԾԻՆ» Օգոստոս—սեպտեմբեր—հոկտեմբեր, 1946 թ.

այնտեղ փոխադրվելուց երկու տարի հետո:

Մկրտիչը սովորել է «ներսիսյան ազգայիշն հոգեւոր դպրոց»-ում՝ և մատղիք է եղել իր դասընկեր Ռոստոմյանի հետ (հետագայում Բագմի Մարդաբարական ընկերության հիմնադիր բժ. Ռոստոմյանը) մեկնել Վենետիկ՝ ուսումը շարունակելու համար։ Սակայն հենց այդ ժամանակները նրա հայրը վախճանվում է և նույն ստիպված է լինում հրաժարվել յուր մտադրությունից ու մնալ Թիֆլիսում։

1835 թվին նա մտնում է զինվորական ծառայության Մինգիլյան եկերների գունդ՝ յունկերի կոչումով և մասնակցելով լեռնականների դեմ մղված շատ կոփմերի, երկու անգամ ծանր վիրավորվում է, որի հետևանքով էլ ստիպված է լինում թողնելու ծառայությունը և ներառյալ աստիճանով ու լիակատար կիսուաթոշակով։ Նա գտնվել է «վիրավորների կոմիտեի» առանձին ինացիքի տակ և պարզեւատրվել է Ա. Դերիգի շքանը։ 1842 թվի հունիսի 27-ին Շամիլի դեմ տեղի ունեցած կովկում ցուցաբերած անվախության, անվեհերության և քաջության համար։

Սանասարյանի պապ Գևորգ աղա Արծրունին վախճանվել է առանց կտակի թողնելու և նրա ահապին կարողությունը ժառանգությունը է մնացել միակ որդի գեներալ Երեմիա Արծրունուն։

Մկրտիչ Սանասարյանը իր եղբար՝ Կարապետի հետ, որ նույնպես եկերյան գնդի սպա էր, 1844 թվին դիմում են Թիֆլիսի գավառական դատարանը՝ խնդրելով, որ իրենց և սաժին համկացին պապի թողած ժառանգությունից, սատ ուստական օրինաց, 1/14 մասի շահով, որ կազմում է 48,236 ռ. մի գումար և պետք է հասներ իրենց մոր, Երեմիայի քրոջ, Մարիամին։

Դործի լուծումն ձգձգվել է դատարանում ու գործը հասել է մինչև ապետական խորհրդա, որը 1851 թվի դեկտեմբերի 12-ին կայացրած և թափավորի կողմից հաստատված որոշմամբ ամբողջ գործը ետ է ուղարկել Թիֆլիս՝ պատճառաբանելով, որ այդպիսի գործերը պետք է քննարկվեն Վրաստանում այդ ժամանակ գործող Վախթանգ Թագավորի օրբնսդրության համաձայն։ Եվ քանի որ ըստ այս օրենսդրության անկատ թողնված կարողությունը արական ժառանգ լինելու դեպքում չէր հասնում իրական սեռի ժառանգներին, Սանասարյանների խնդիրը մերժվում է։

Այս դատական գործը ոչ միայն թանգ է նստել երկու կողմերի համար էլ, այլ և երկու, մոտ ազգական, ընտանիքների իրար հետ թշնամանալու։ Կ իրաղի խսպառ կը տր-

վելու ու հեռանալու պատճառ է հանդիսացել։ Մկրտիչ Սանասարյանի կյանքում, մանավանդ որ Կարապետն արդեն վախճանալվել էր, այս դատական գործը խոշոր դեր է խաղացել։ Գործը Փետերբուրգ տեղափոխմելուց ինքն էլ է փոխադրվում այնտեղ, ուր շուտով կարողանում է իր համար մեծ ու պատվավոր դիրք ստանձել մայրաքաղաքի դրամատիբական արևարձում։

Պետերբուրգ փոխադրվելուց նա ունեցել է 15 հազար ոութիվ մի գումար, որը հաջող առևտրական գործարքների միջցոցվ կարողացել է շահեցնել ու խոշոր գումարի հասցնելով ընտրվել «Կավկազ և Մերկուրի» նավային ընկերության գործոն ղեկավարը։ Արդ պաշտոնում երկար մնալու հետևանքով 1889 թվին կատարվել է նրա 25-ամյա ծառա, ության հորելյանը և այդ առիթով էլ ընկերության մեծ շողենավերից մեկը կոչվել է նրա անունով։ Դա սովորական, պաշտոնական մի տոնակատարություն չի հանդիսացել, այլ ուրախ, սրտանց, ամենին հաճեցի տոնախմբություն, որովհետեւ ամենքը սիրելու ու հարգել են նրան, իսրել ընկերության գլուխ կանգնած, գործը սիրող, օգտակար ու հմուտ զեկավարի, իսրել բարի, ամեն մի լավ բանի, ամեն մի աշխատակցի կարիքին ընդառաջողի, համակրելի ու ազնիվ բարեկամի։ Ամեն մի դրամական տագնապի ժամանակ, երբ արժեթղթերի ուժեղ տառանում էր նվասակում և ընկերությունը դրամի սղություն էր, որ հազվագյուտ երեւով լինելով թանգ է գնահատվել ամենքից։ Դա այդ բոլորի համար էր, որ հորելյանական հանդեսում ծովակալ ժանդանապես նշեցին նրա անձնվիրությունը ընկերության շահերին և ցուցաբերած արտանց ու միատեսակ վերաբերությունը բոլոր աշխատակիցների հանդեպ։

Դրանից մի տարի առաջ էլ Պետերբուրգի հայ համայնքն էր տոնել Սանասարյանի ծննդյան յոթակատան ամբակը, նրան նվիրելով մի թանկարժեք բյուլար (ծծողական թղթապանակ), որի նկարը պատրաստել էր աշխարհանոցակ ծովանպարիչ իւ. Կ. Այլազովսկին։ Հայ հասարակությունը սիրել ու հարգել է նրան, իսրել հայության շահերին նվիրված անկաշատ ու գիտակից բարեգործի։ Նրա միջին ու մոտ բարեկամներն են եղել Պետրոս Շանջյանը, Միքայել Միան-

սարյանը, Մովսես Բուզավյանը և Կարապետ Եղիշել:

Սանասարյանն ի բնե առողջ մարդ է եղել, բայց նրա առողջությունը կովկաներում շնորհած ծանր վերքերի և Պետերբուրգի նրա համար անսովոր խոնավ, միզապատ, սակավարե ու ճահճալին կլիմայի շնորհիվ սկսել է վաղ քայլայիկի: Նա ունեցել է թոքերի քրոնիկական բորբոքում, որ երբեմն սաստկացել, երբեմն էլ մեղմացել է և նա ու վիճակի է եղել ապրելու մինչև 1890 թվի գարունը, այսինքն 72 տարի, շնորհիվ իր վարած կյանքի համեստ ու զգուշ սեժիմբ:

1890 թին նրա հիվանդությունը սաստկանում է ու նա բժիշկների խորհրդով մենառում է նիցցա. ձմեռն այսուղ անցկացնելով գարնանը նա ուղևորվում է Փարիզ, որ և վախճանվում է, նրա վերջին նամակը յուր քրոջը՝ Կատարինեին Պետերբուրգից եղել է 1889 թ. դեկտեմբ. 19-ին, իսկ Փարիզից 1890 թ. մայիսի 19-ին:


Հանգուցյալի չերմ ցանկությունն է եղել թաղված ջինել Թիֆլիսի Վանքի եկեղեցու բակում, և նրա այդ ցանկությունը կատարել է նրա քրոջ որդի Լիոն Տիգրանյանը՝ նա քննու դիակը փոխադրել է տվել Մարտիրոսի վրայով Պոլիս ու այնտեղից էլ Բաթումի վրայով Թիֆլիս, Փարիզի և Պոլսի հայերը նրա գագաղի վրա շքել ծաղկեպսակներ են դրել, իսկ Խորեն եպիսկոպոս Նարակելը (Գալֆայան) բագաղն ուղեկցել է Պոլսից մինչև Թիֆլիս: Կազմակերպված է եղել շքել հուղարկավորություն և քրոջ, մյուս հարազատների ու խուռն բազմության ներկայությամբ մարմինն ամփոփել է վանքի բակի ձախ կողմում, որտեղ նրա գերեզմանի վրա Տիգրանյանի հոգացողությամբ իր ժամանակին մարմարա մի մատուռաձև շինություն է կառուցվել, ու ներաց դրվել նրա մահարձանը:

Թե ի՞նչ վիճակի մեջ է թողած եղել Սանասարյանը յուր գործերը և ի՞նչ կտակ է արած եղել իր կարողության մատին, պատ-

մում է մեկ Տիգրանյանն իր «Իմ հիշատակարանը»-ում. «Թաղումից հետո, —գրում է նա, —ես գնացի Պետերբուրգ, բիձուս կտակի համաձայն ժառանգությունս ստանալու: Եթե եկա Պետերբուրգ, Եզրանը ցույց տվեց կտակը, ուր ինձ համար նշանակված էր հայուուր հազար մանեթ և տան կայքը: Նրա կայքի և կարոն ուսումնաքանի կտակակատար նշանակված էին—Եզրանը, Եվանգուլյանը՝ և այլ ուսումնաքանի կտակակատար նշանակված էր Եզրանը, Եպիսկոպոս բոլոր գործերը և փողերը հանձնել էր Եղանին, որին անսահման հավատում էր Պետերբուրգից վաճառականական աշխարհում թիժեն հայտնի էր, որպես շատ հարուստ մարդ և ամենքն էլ զարմացան, երբ հայտնվեց, որ ունեցել է նշին կարողություն»:

Սանասարյանը մի բարի բնակուրությամբ և շատ համեստ ու շափակոր կյանք վարող մարդ է եղել: Նա Պետերբուրգում ապրել է եղել նևկի պրոպեկտի վրա Անդրկինի պալատի

Մ. Սանասարյան



դեմ, հրեա ատամնաբույզ Վուլֆստնի բնակարանում և իր տրամադրության տակ ունեցել է առանձին նախասենյակով երկու սենյակ, վայելու սարք ու կարգով և համեստ կահավորությամբ: Նա ծոխություն շփրեավով հանդերձ, սիրահար է եղել ընտիր պատկերների, որոնցից մի քանի հատ զարդել են նրա սենյակների պատերը և գեղարկվեստական ընտիր իրերի, որոնցից մի քանի հատ գտնվել են նրա մեջության առաջին մեջ: Մի քանի մահից հետո գտնվել են նրա մյուս իրերի մեջ ու անցել Տիգրանյանի ձեռքը: Մի ուսումնակալոր հավատարիմ կին, Ագրաֆենա անունով, որպես աղախին երկար ժամանակ ծառայել է նրա մոտ ու տնտեսարար հոգացել նրա բոլոր համեստ պիտույքները: Նրա բնակարանի գոները միշտ բաց են եղել հայ և վրացի ուսանողների առաջ ու ոչ մի

կարուտյալ դատարկաձեռն չի վերադարձել նրա մոտից:

Բարեհգործությունը, չունեորների կարիք-ները հոգալը բիւել է նրա էությունից, և ոչ թե ցուցամոլությունից, կամ մի որևէ այլ պատճառից: Դեռ 1858 թվին, երբ Մոսկվայում վախճանվում է և. Արովլյանի սիրելի աշակերտ, Մ. Նալբանդյանի ու. Ս. Շահազի-զի մտերիմ ընկեր և Ա. Նազարյանցի բարեկամ, նորավարտ բժիշկ երևանցի Գևորգ Գեղամյանը և Հանգանակություն են կատարում նրա հույսարկավորությունն ու թագումը կազմակերպելու համար, Սանասարյանը, որ այդ ժամանակ Մոսկվայումն էր գտնվում, արգելում ու իր փրա է վերցնում բոլոր ծախքերը, հանգստարանում էլ հոգեացի սեղան պատրասել տալով:

Վաթուունական թականների վերջին նա իր բարեհգործությունը կենտրոնացնում ու տարածում է հատկապես ծողովրդական լուսավորության գործի վրա և քանի որ լուսավորության գործը կախված էր ուսուցչական լավ կարգերի առկայությունից, դրա համար էլ նա բարձրագույն դպրոցների շրջանավարտներից ընդունակներին ընտրելով ու թոշակ նշանակելով ուղարկում էր արտասահման կատարելագործվելու, նրանցից մի բան միայն պահանջելով, որ պարտավորություն ստանձնեն ավարտելուց ու վերադառնալուց ծառայել հայ դպրոցին: Բարեկարգ դպրոցը նրա հոգացողության գլխավոր առարկան է եղել: Չի եղել քիչ թե շատ կենտրոնական տեղում որևէ մի հայկական զպից, էշմիածնի ճեմարանից ըսկսած, որի բարեկարգության գործին Սանասարյանը մասնակցած շիներ: Դպրոցներից մի քանիսին նվիրել է Փիդիկավան կարենետներ, մի քանիսին աշխարհագրական քարտեզների հավաքածու և պատմական ակտաներ, մյուսներում կազմակերպել է տվել մատենադարաններ և այլն:

Թուրքահայության թշվառ կացությունը լուսավորության ասպարեզում, ի հարկե, նույնպես գրավել է նրա ուշադրությունը իր հայրենի Վան քաղաքում, ի հիշատակ յուր մոր Մարիամի, նա բաց է արել Մարիամյան իգական դպրոցը ու մի գրուղական դպրոց էլ Վանի վիլայեթի հայտնի Խարակոնիս գյուղում:

Հայ գրականության նպաստելն էլ նրա հոգացողության առարկան է եղել նրա ծախքով շատ գրեթե են տպագրվել: Էշմիածնի տպարաննի մի խուզոր մասը նրա ծախքում է ձեռք բերվել: Շատ հայ ուսանողներ ու գրականագետներ, գրողներ ու հրատարակիչներ դրամական օժանդակություն են ատացել նըրանից, ինչպես օրինակ Ռ. Պատկանյանը

ուսանողության շարքաշ օրերին Պետերբուրգում յուր հրատարակած Գամառ-Քամառ-Քամիպայի տեսրականների ու մյուս հրատարակությունների համար, ինչպես «Մելու Հայաստանի»-ի խմբագիր Պետրոս Սիմոնյանը, որի 25-ամյա հորելյանի առթիվ տարեկան 600 ուրբի թոշակ նշանակեց ու հաստատուն ֆոնդով պայմանվեց դրա կանոնավոր և շարունակ տապաւմը: Նա սովորություն ունեն ամեն տարի այս լրագրերին, որոնց ուղղությանը հավանում էր, տասնյակ օրինակներով բաժանորդագրվել և պատվիրել այդ օրինակները նվեր ուղարկելու գյուղական շքալորդացուներին և այլն:

Բայց նրա օգտավետ գործերի թագն ու պսակը կազմում է Կարնո Սանասարյան դպրոցի հիմնադրումը, որի հարատև գյուղությունն ապահովելու համար հետագայում նա կուտակել էր յուղ կարողությունը:

Սակայն Կարնո պես հայաբնակ կենտրոնական վայրում մեծ հայկական դպրոց բաց անելու խնդիրը կապված էր մի շարք դժվարությունների հետ, անհրաժեշտ էր նաև ըստանալ թյուրքիայի կամակածու կառավարության համաձայնությունը, վճռել կառուցման համար էլ Սանասարյանին հարկավոր էր նվաճանը՝ նրա գիտությունը, հմտությունը, աջակցությունն ու խորհրդները: Ամենադժվարին ինդիրն այն էր, որ թուրքական կառավարությունը հրաժարվել էր արտոնել դպրոցի բացումը, վախճանարկ որ բացվելիք դպրոցի կարող է մոտ ապագայում վերածվել հայերի համար քաղաքական պրոպագանդայի վայրի, դառնալ հեղափոխության բույն ու կենտրոն: Դրա համար անհրաժեշտ էր տրամադրել ուսա բարձր կառավարությանը, որպեսզի վերջինն իր Պոլսի դեսպանի միջոցով ազգեր թուրքական կառավարության վկա և կասկածները փարաւելով ուղիղ հարթեր բացման արտոնությունն ստանալու համար:

Արդ ո՞վ կարող էր այդ անել, եթե ոչ նպայնն ու նրա պես մարդիկ, որոնք գիտեին կառավարական քարձոր հաստատությունների բոլոր ելք ու մոստքերը, և տրոնց առաջ, շնորհիվ իրենց ունեցած վագերի, բաց էին բոլոր փակ դռները:

Այսպիսով հաջողվում է ուղևաց կառավարության հրահանգի շնորհիվ փարաւել կասկածները և ստանալ բացման արտոնությունը, որից հետո կառուցվում է դպրոցի շենքը և լրիվ հայավորվում ուսումնական անհրաժեշտ բոլոր պիտույքներով: Միաժամանակ ուսուցչական կադրեր էին պատ-

բաստվում նոր բացվելիք դպրոցի համար. դրանց թվում հայտնի մանկավարժ Սեղբակ Մանդինյանը, Փիլիպոս Վարդանյանը, Հովսեփ Մադաթյանը և Արովյանը, սրբանցից առաջին երկուամ մնում են Ռուսաստանում՝ հայկական դպրոցներում աշխատելու համար, իսկ վերջին երկուամ անմիջապես մեկնում են Կարին, և մի երրորդի հետ միասին դեկավար հանդիսանում նորաբաց «Անասաւրյան դպրոց»-ի մինչև նրա կարճատե, բայց շատ փաստվոր կյանքի վերջում:

Այդ դպրոցը, ինչպես վկայում են օտար ճանապարհորդները, մի «ծաղկյալ օվաղիս» է եղել սուլթանական Անատոլիայի, կամ լավ է ասել Հայկական նահանգների «անապատի» մեջ: Վահի ոռոսական նախկին հյուպատոս Կոլյուբակինի ասելով, դա, օֆթու մի լիակատար դպրոցական հիմնարկություն, լուրջ հարված է հասցրել բողոքականների քաղաքությանը Բյուրգական Հայաստանում, որովհետև նրանց դպրոցները չեն կարողացել մրցել դրա հետո: Ճանապարհորդների ասելով այդտեղ ամեն ինչ գոհացուցիչ ու թարմացուցիչ տպափորություն է թողել, և նկարչության սրահները, և երաժշտության դաշնամուկները:

Առն Տիգրանյանի 1890 թվի օգոստոսի 30-ին Պետերբուրգից՝ գրած և նույն թվի նոյեմբերի 8-ին «Աշակ»-ի 102 համարում տպագրված մի նամակից իմանում ենք, որ դպրոցի համար Սանասարյանը թողած է եղել իսկական զնով հաշված 268,428 ռուբլու տոկոսարեր արժեթիվություն, որոնք բորսայի գներով այն ժամանակ կազմում էին մոտավորաբես 345 հազար ռուբլի և Կարինում էլ մի հողամաս, որի մասին կտակահատարներից մեկը (Եղյանը) ուշ մի տեղեկություն չի տվել, թեև գոտին 8-10 տարի առաջ նրա խորհրդով ու աշակցությամբ է գնված եղել Բացի այդ Սանասարյանը թողել է 202,894 ռուբլու ոչ ժամկետանց և 52,391 ռուբլու ժամկետանց պարտամուր-հակներ:

Սանասարյանի երեք կտակահատարներից Գևորգ Եվլանգուլյանը մի շաբաթ Պետերբուրգում մնալուց հետո Եղյանին մի հավատարմաթուղթ է տալիս, որով լիազորում է նրան իր փոխարեն «գնել պիտական դրամատունը ուսումնարանամատկան բոլոր թղթերը, սահմանալ դրանց տոկոսները, հետ վերցնել թղթերը, առնել, ծախել այդ թղթերն ըստ ցանկության»: Եվ Եղյանը բոլոր

ժեթովերը դնում է դրամատունը իրեն վերապահելով վերոհիշյալ լիազորությունը: Սակայն դա հակառակ էր կտակի իմաստին, քանի որ ուսումնարանապատկան գումարների նկատմամբ կարգադրությունը վերապահված է եղել Երեք կտակակատարներին: Տիգրանյանը քանից բողոքել է այդ ապօռնության գեմ, բայց ապարդյուն: Եղյանը նրանից էլ պահանջել է տալ իրեն նույնպիսի լիազորություն, ինչ որ տվել է նվանգուցյանը:

Ի վերջո Սանասարյանի արած բարեգործությունների ցուցակը լրացներու համար ավելորդ չենք համարում ավելացնել և այն, որ նա Կարինում բաց է արել նաև մի գույն «Արհեստանոց դպրոց», որի վարպետությունը կատարել է առաջատար կարգությունը: Դանապարհորդների ասելով այդտեղ ամեն ինչ գոհացուցիչ ու թարմացուցիչ տպափորություն է թողել, և նկարչության դաշնամուկների մեջ կատարել է առաջատար կարգությունը: Դիմունք թիֆլիսի պետական Արհեստավորաց դպրոցի շրջանավարտները էին, որոնց համար Սանասարյանը հնարավորությունների լր ստեղծել նախապես իրենց արհեստաների մեջ կատարել զարգությունը: Արհեստավորաց դպրոցում կատարել է առաջատար կարգությունը:

Գ

Այստեղ ավարտելով մեր համառուս ասելիքը Կարապետ Եղյանի և Ակրտիչ Սանասարյանի մասին, անհրաժեշտ ենք համարում համառոտաբար տալ նաև երեանի բաղաքային բժիշկ ու Սանասարյանի թող որդի կույն Տիգրանյանի գործունեության պատմությունը:

Տիգրանյանը իր «Իմ Հիշատակարանը»-ում հետևյալ համառուս տեղեկություններն են հազորում իրենց տոհմի «ծագման» մասին: «Իմ պապս, Տեր-Հովհաննիսյանը, որ ջուղայիցի էր և Զուղայումն էր բնակվում, քահանա էր ձեռնազրվել պարսից տիրապետության ժամանել, այն է 1797 թվին. դրա կնոջ անունը եղել է Գյուլիստան: Հայրս, Ակրոքան աղեն, ծնվել է Ջուլա 1805 թ. Հովհանըմբերի 10-ին, պատակաց տիրապետության ժամանակ. Հայրս եղել է պատերազմում պարսկաց դեմ 1827 թ., երբ ուսուներն եկել են Երևանի նահանգն առնելու, և եղել է պատերազմում տաճկաց դեմ 1829 թ., երբ ուսուներն առնելում են Գյումրին (Գումարի) հետագայում վերանվանված «Ալեքսանդրյամբ, Մատել է հառարակության 1836 թ.: Պսակվել է մորս Հետ 1830 թվին և մեռավտիքից 1852 թ. (այդ նրա երկրորդ ամուսնությունն է եղել). մայր՝ Կատարինեն վահճանվեց ծերությունից 1891 թ. Հունվարի 18-ին, նա ծնվել էր 1815 թ. Թիֆլիզում: Ուրեմն հայրս մեռավ 47 տարեկան, իսկ

մայրս մեռավ՝ 76 տարեկան հասակում»:

Մի այլ տեղում էլ նա իրենց ազգանուններով երկու ճյուղի բաժանվելու մասին ուրիշ լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում, նա ասում է, որ իրենց պապի հոր անունը եղել է Տիգրան, որի անունով էլ կոչվել է ընտանիքը, և որ ինքն ունեցել է նաև մի կրտսեր հորեղբայր՝ Հարություն անունով։ Հայրը՝ յուր փոքր եղբորը՝ Հարությունին տարել է Մոսկվա՝ Լազարյան ճեմարանում տեղավորելու համար, բայց մերժում է ստացել. պատճառաբանել է, որ ինքն էլ Լազարյանների պես չուղալցի է ու դրա համար էլ պիտք է անպայման ընդունեն. երբ այդ էլ չի օգնել, երեխային թողել է այնտեղ ու ինքը վերադարձել, ճեմարանի վարչությունը ճարահատյալ ստիպված է եղել ընդունել, բայց երբ ազգանունն իմանալու համար հարց ու փորձ են արել երեխային, սա չի իմացել իր ազգանունը ու տանը է, որ Տեր Հովհաննեսի որդին է. այսպիսով նրա ազգանունը ճեմարանի ցուցակներում նշանակվել է «Հովհաննիսյան» ու հետագայում էլ շարունակել է կոչվել այդ ազգանունով։ Դա թիֆլիսին լավ հայտնի բժ. Արտեմ Իվանիչ Հովհաննիսյանն էր, «Փորձ»-ի և «Արձագանք»-ի խմբագիր Արքար Հովհաննիսյանի ու Երևանի Գայիհանյան դպրոցի տեսչուհի՝ օրիորդ Գայիհաննեի հայրը։

1875 թվին Լևոն Տիգրանյանը Դորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետի լիակատար դասընթացն ավարտելուց հետո վերադառնում է Պետերբուրգ՝ քեռու մտնեցանալով կատարելագործվել կանացի համար պայտություն կամացի վիվարերյալ օպերացիաներ կատարելու գործում, խնդրում է քեռուց՝ Պետերբուրգի ծննդարաններից մեկում իր համար պայտուն գտնել, պատրաստակամություն հայտնելով աշխատելու նույնիսկ առանց ոռօճիկի։ Բայց քեռին ցանկանալով, որ նա արքունի ծառայության մեջ գտնվի ու ոռօճիկ էլ ստանա, միջնորդում է մայրաքաղաքի ստորականապես Տրեպովի առաջ և Տիգրանյանը նշանակվում է որպես շաքարիտանի մեծագույն Կոռուպտություն կազմության պահական կուսակցություն։ Այս պաշտոնը ատելի էր նրա համար, այդ պատճառով էլ նա անմիջապես հրաժարվում է դրանից։ Վեց ամիս իր ուղածը որոնելուց հետո, վերջապես նրան հաջողված է տեղավորվել «Աճեճնուկայ» կոչված ծննդարանում, որտեղ և նա ձեռքը է բերում անհրաժեշտ փորձառություն։ Ալդադեպ էլ նա հետո փոխադրվում է Յունական կուսակցության կողմէ Յունական պրօքրակենտրոնում։

1877 թվականի վերջերին, ուսում-թուրքական պատերազմի օրերին, ասիական ճակա-

տի դորամասերում բժավոր տիփի մեծ համաձարակ էր սկսվել. Բժիշկների պակասությունը շափազանց զգալի էր. հիվանդանոցներում հայտարարվում է թե օրդենատորներից ցանկացողները կարող են ուղղմանակատ մեկնել հիվանդանոցում իրենց ունեցած տեղում պահպանի վերաբերյալ անունով։

Տիգրանյանը նկատելով, որ Եղյանի վարմունքն իր հիատմամբ նախկին անհաջտ եղանակով շարունակվում է և քեռու կողմից էլ վիրավորական խրատները, հանդիմանություններն ու նոտացիաները չեն պակսում, առանց հաշվի առնելու, որ նա այլևս նախկին աշակերտն ու ուսանողը չեն, այլ հասուն մարդ, և գուշակելով որ արդ բոլորը կարող է վերջանալ անխորդությամբ ու քեռու հետ Հարաբերությունները իսպառ խզելով, մյուս գողմից էլ ցանկանալով տեսնել թուրքահայաստանը, նա մի խիստ նամակ է գրում Եղյանին և առանց քեռուց թուրքավություն ստանալու, հիվանդանոցում արված հայտարարության համաձայն, զինվորական թշշկի պաշտոն ստանձնելով 1877 թվի դեկտեմբերին Թիֆլիսի վրայով մեկնում է ուղղի ուղղմանակատ— Հասան-Ղալա, ուր հասնում է 1878 թվի հունվարի վերջին, երբ զինադադար էր հայտարարված Հասան-Ղալարան նա երկու շաբաթ սպասում է հրամանի, նշանակվուծ տեղը՝ 79-րդ լազարեթը մեկնելու համար, որը գտնվում էր էրկրումի գյուղերից մեկում։ Հասան-Ղալան այդ ժամանակները մի սակավաբնակ խրզճուկ ավան էր ավերված հին բերդով և զինվորականների բնակության համար հարմարություններից դուրս չնայած դրան այնտեղ էր կենտրոնացած ողջ սպայակույթը՝ կորպուսի հրամանատար լուսիսի գլխավորությամբ։ Տիգրանյանը քննում էր մի սարայում, առանց հանվերու, գետնի վրա տաքը մի մուշտակ փուլով և մի մուշտակ էլ վրան առնելով։ Հաց չկար. նա կերպարվում էր շամչով, սիսեռով ու որդենու պաքսիմատով։ Բարեբախտաբար մի բարեսիրտ ուսուկին ամեն օր նույն մի բաժակ սուրճ էր տալիս, բաժակը մի ուուրլով։ Մողեգնում էր բժամուր տիփը. նա ներկա գտնվեց բժամուր տիփից մահացած 30 հազար զինվորի թաղմանը. փորմել էին սենյակի մեծությամբ աշագին փոսեր— եղբայրական գերեզմաններ ու նրանց մեջ դարսվել հազարավոր դիմիներ Ալյուդի, այդ դաժան հիվանդությունից, մահացավ նաև հայ զենքառալ թեհրուս Մարտիրոսի Շելկովնիկյանցը (1878 թ. փետրվար 10):

Տիգրանյանն այնքան էր կարտուել հացի, որ մի օր էլ գյուղից դուրս, գրուսանքի ժամանակ նկատելով մի երիտասարդի ու

բիոգրի, որոնք հայերեն էին խոսում, հետևեց նրանց մինչև տան դուռը ու պատ դուռը բախելով հաց խնդրեց: Մերժում ստանալով նա սկսեց նախատել նրանց, որ տեղացի լինելով նաշուշտ հաց ունենալով, չեն ուզում մի կտոր հաց տալ մի հայ թժշկի, որը երկու շաբաթ է հացի համ չի տեսել: Այդ ժամանակ դուռը բացվում է և նրան 5—6 լոշ են տալիս, հարածարկելով դրամ ընդունելուց: Նույն զուգին Տիգրանյանը հետագարում հանդիպում է երգումում և մոտ ծանոթություն հաստատում հետները: Երիտասարդը Հարսություն Բաստուրմաջյանն էր, իսկ օրիորդը՝ նրա բույր Սոֆիան, Կարն առաջավոր ու ունենոր ընտանիքի զավակներ: Օրիորդը շատ գեղեցիկ ու բարեկիրթ աղջիկ էր, բայց կազ էր: Գեներալ Լազոնկը Տիգրանյանին խորհուրդ էր տալիս ամուսնանալ նրա հետ:

Մի օր էլ գյուղի շրջակայրում զրունելիս Տիգրանյանը հանդիպում ու ծանոթանում է Լոռիսի հետ, որը մի գեներալի հետ նույնպես զբոսանքի էր դուրս եկել: Տիգրանյանը կանգնելով դինվորական պատիվ է տալիս նրան. Լոռիսը մոտենում, ձեռք է մեկնում նրան և ապա հարց ու փորձ անում նրա ովինելու մասին. Երբ իմանում է, որ նա երևանցի Տիգրանյանն է, իր վաղեմի ընկեր ու բարեկամ Սանա-սարյանի քրոջ որդին, ուրախանում է և հետաքրքրում նրա առողջությամբ:

1878 թվին երգումը հանձնվում է ուսուներին: Տիգրանյանը մի լեզ ու մի հույն թիշկների հետ սաղարկվում է այնտեղ՝ բաղաքն ու զորանոցները ախտահանելու համար: Նրանք մեկնում են սահնակով. սակայն զորեղ սառնամանիքի ու խոր ձյան հետնանըով երեսուն վերտառ աշարժությունն նրանք մի օրում կտրել, անցնել շեն կարողանում և ստիպված են: ինում վես վիշերին իշեանել քաղաքի Ավելի քաղաքի ֆորտում, որ հենց այդ

օրն էր քաղաքի հետ միասին հանձնվել ուսաներին, այդտեղից նրանք կարողանում են վաղ առավոտյան քաղաք համեմել, քաղաքի դարպանաների առաջ գեղ թուրք պահակական կամքած տեսնելով: Տիգրանյանը սպասում էր տեսնել մի ճոխ արևելյան քաղաք, բայց զավական քաղաք, տափարակ տանիքներով, նեղ, ծուռ ու մուռ փողոցներով, շափազանց աղտոտ, թժշկոր տիֆից մեծ թվով տառապող ու մեռնող զինվորներով լիբը:


Քաղաքի ժամանակավոր նահանգապետն էր կարգված հայ գեներալ Աղեքսանդր Փիշմիշյանը, որին Տիգրանյանը Պետերբուրգում

հաճախ էր տեսել Ելյանի տանը, երբ նա գեղ ենթապայի աստիճանով ուսանում էր գեներալական շտարում, Տիգրանյանը ներկայանում է թե նահանգապետին և թե նրա օգնական Կոստանդին Կամսարականին, որը նոր էր ամուսնացել Տիգրանյանի հորեղբոր՝ բժ. Արտեմ Խվանիշ Իոաննիսյանի դատեր՝ Աննայի հետ և որին նա դեռ անծանոթ էր: Մանոթանալուց հետո նրանք այնպես են հետ և որին նա մեռ անծանոթ էր: Մանոթանալուց հետո նրանք այնպես են հետ և որին նա միասին ապրել: (Կամսարականը պատերազմից հետո նշանակվում է Վանի հյուպատոսու):

Քաղաքն արդեն լըցվել էր ուսւա զորքով. սպայակույտը Հասան-Ղալյակից նույնպես

տեղափոխվել էր Կարին: Տիգրանյանի հրակողության ու թշկական հոգացորությանն էր հանձնված 150-200 տիֆով հիվանդ դինվոր, որոնք տեղավորված էին ինն իրար մոտ գտնվող բնակարաններում:

Մի օր նա այցելում է քաղաքի գլխավոր ու ամենամեծ հիվանդանոցը, որը տեղափորված էր թրքական մի ընդարձակ զորանոցում: Հիվանդներն այլուղ պատված էին գետնին, իրենց վերաբերների մեջ փաթաթված. միլիոնավոր ոչինչներ էին վիստում նրանց վրա. մի ուսւա զինվոր՝ Իվան անունով, որ Դրիմի թե արևելյան պատերազմի ժա-



I. Տիգրանյան

մանակվանից մնացել էր էրզրումում ու ամուսնացել հայ աղջկա հետ, այդտեղ բռնժակի պաշտոն էր կատարում: Բժիշկ շկար, եղածները կամ վարակվել ու մեռնել էին, կամ ապարինվելով հրաժարվել բժշկությունից: Այդ մենք հիմանդանցում կային միայն երկու բժիշկ, այն ինչ Տիգրանյանի ամելով 12 բժշկ էլ որ փնտեր, դարձալ քի: էր:

Տիգրանյանը, բացի իր հսկողության տակ դանված 150-200 հիվանդից, կարողացել է օրական 100 հոգու բռնժոգություն ցույց տալ, միաժամանակ վարելով նահանգական բժշկի, բաղաբային բժշկի, առողջապահական շուրջի գործի համար քարվանսարաներ պատրաստողի պաշտոնները եվ այս բորբոք հետո նա դեռ ժամանակ է գտել «Մեղուս»-ի համար մի քանի հոդվածներ գրելու, որ նա կպցրել է իր ժեմ լրագրական հոդվածները խորագիրը կրող տետրում: Այս բորբոք կատարելով նա հետ չի մնացել և ընկերական քեֆերից: նա չի վախեցել նաև հիվանդանալուց, սակայն կանոնավոր կյանք է վարել ու որ գլխալորն է, ոփելից խմիչքներ չի դորժածել:

Գարնանը Կալիս է գալիս Պետերբուրգից «Հաջեյևսկայ» ննդարանի ոնկեր բժշկներից մեկը՝ Միշտըննիկիրը, որը կարգվում է առողջապահական շովատի պետ: Նա ընկերանալով Տիգրանյանի ու Կամսարականի հետ մկտում է նրանց հետ միասին ապրել: այս մասին Տիգրանյանը գրում է իր ժեղատակարանը-ում: «Ես էի մեր տան տընտեսը, ամսական ամեն մեկս դնում էինք 100-ական ոռուքը և 300 մանեթով ես կառավարում էի մեր տունը: Ամեն բան թանկ էր: Կամսարականի հրավիրած հյուրերին վերջ շկար: Ես զարթնում ու հագնվում էի հյուրերի առաջ, և պակում, քնում հյուրերի առաջ, մի խոսքով մեր տունը հյուրանոց էր դադրել Կամսարականը»:

Էրզրումում բժշկ չկար, որ հիվանդացած չիներ: Կամսարականը խնդրում է Տիգրանյանին իր ինամքի տակ վերցնել ու բռնժել առաջին սակրավոր վաշտի հրամանատար վրաց իշխան թումանյանին: Տիգրանյանը համաձայնվում ու բռնժում է հիվանդին: Վերջինս ապարինվելուց հետո ինդրում է գեներալ Հեյմանին վաշտի մահացած բժշկի փոխարքն Տիգրանյանին նըշանակել: Հեյմանը կառավարում է իշխանի խնդրով և Տիգրանյանի պաշտոնների վրա ալիւանում է նաև առաջին սակրավոր վաշտի բժշկի պաշտոնը: Դրա հետևանքով Տիգրանյանի վարիչը սպայության շրջանում բարձրանում է և ամենքն էլ սկսում են նրա մոտ բռնժել: Լոռիսն էլ լսելով նրա

մասին, իրքն հմուտ բժշկի, մի երեկո թիկնապահն ուղարկում ու իր մոտ է կանչում: Նա, սիրափիր ընդունելություն ցույց տալուց հետո, ինդրում է նրան անմիջապես ճանապարհվել ենուս և բռնժել իր եղբոր որդուն՝ դրագուների գեներալ փոքր լոռիսին, որ հիվանդ էր տիգրով, իսկ տեղի բժշկը նորավարության լինելով անվատաճելի էր: Նա ուսական ժառայության մեջ գտնվող երկու շերքեզ թիկնապահների ուղեկցությամբ ճանապարհվում է ենուս, որը զբանական բժշկի ըրվա ճանապարհ հեռավորության վրա: 1878 թվի մարտ ամսին էր: Նրանք զնում էին Սորաքի ափերով, լեռների գագաթներից ու անդուդների նզերքից անցնելով: Սաստիկ ցույց ու քամի էր, ճանապարհներն էլ ծածկված խորը ձյունով: Վերջապես նրանք հասնում են Խնուս, բայց արդեն ուշ էր: Հիվանդը մի քանի ժամից հետո մահանում է: Նրանք նորից վերադառնում են երգում իրենց հետ բներելով գեներալի դիմակը:

Ջինադաղարից հետո սկսվում են խաղաղության դաշն կույր բանակցությունները: Լուր է տարածվում, որ էրզրումի հայ զյուղերը պատրաստվում են Ռուսաստան գաղթելու:

Նրանք վախենում էին, որ երկիրը վերստին կհանձնվի թուրքերին, ուստական զորքերը կաթավեն և հայ ժողովուրդը, իբրև ուսների կողմանակից, դարձալ կենթարկի թուրքերի վրեալիսնդրության, ինչպես սովորաբար եղել է թուրքական պատերազմներից հետո:

Երր այդ ըուրը հաստատվում է, Տիգրանյանը, Բաստուրմաջյանը և թնդանոթածիդ սպա՝ ուսիհացի Գիդիգոր Նիկողոսյանը խորհրդակցելով որոշում են բոլոր միոցները գործադրել գաղթականությունը կազմենելու համար և նրանց այդ հաջողվում է:

Այս մասին ուրը հասնում է լոռիսին, որը ստուգելու համար իր մոտ է կանչում Տիգրանյանին: Իր ժեղ հիշատակարանը-ում Տիգրանյանն այդ մասին գրում է: «Մի օր լոռիսը կանչել ինձ, սիրով ընդունեց և հաղործեց իմ կարծիքը հայերին վաղթեցնելու մասին: Ես հարցիր: «Ի՞նչպես ես խոսեմ Ձեզ հետ, որպիս ուսւ գեներալի, թե՝ ինչպես հայի հետ: Նա ասեց: «Ի՞նչարկե ինչպես հայի հետ: Ես ասեցի, որ ամեն մի գաղթականություն քանդում է ժողովուրդը և այլն»:

Հաշտություն է կմքվում թուրքերի հետ և Տիգրանյանը առաջին սակրավոր վաշտի հետ 1878 թվի օգոստոսի 1-ին ճանապարհվում է դեպի Թիֆլիս, որ վաշտի մշտական

բնակության վայրն էր: Տեղ են հասնում Հովհանքի 15-ին:

Տիգրանյանն իր ընկերներով, ինչպես տեսանք, կասեցրին երգումի վազմը, բայց Ղարս համելով հանդիպեցին բասենցոյ գաղթին: Նա և նիկողոսյանը այտող էլ փորձ արեցին կասեցնելու սկսված գաղթը, բայց նրանց շանքերն ապարդյուն անցան: Ճեսոր իմացվում է, որ երգումի փաշան հայ ժողովրդին իր հովանավորության տակ առնելով սասարել է թուրքերին ու այսպիսով երգումի հայերը զերծ են մնացել հալածանքից:

1879 թվի հունիսին Տիգրանյանը գինվորական բժշկի պաշտոնը թողնելով վերադառնում է Երևան:

Այստեղ նա սկսում է իր եռանդուն հասարակական գործունեությունը: Նա իր տանը մանկական մատենադարանն է հիմնում ու հրավիրում Թեմական ու Գայինյան դպրոցների աշակերտությանը պրֆեր վերջնել կարդալու համար: Մինչև անդամ փողոցից էլ «ատերք» է հրավիրում իր մատենադարանից ձրիարար օգտվելու համար Մատենադարանը, որի վրա նա ծախսել էր 600 ոռութի, գոյություն է ունենում երկու տարի ու կարգացվում է 3000-ի շափ գրքեր: Այդ մասին Տիգրանյանը իր «Իմ հիշատակաբանը» ում գրում է: «Խափայել Պատկանյանը երբ ինձ մոտ էր, ծանոթացավ գործիք հետ և հետո էլ Շփրձաւում (կարծեմ) դրեղ, որ իմ գրադարանիս օգուտը հավասար է մի լավ ուսումնաշանի տվյալ օգուտին»:

1881 թ. նա սկսում է հրատարակել յուր «Ալողապահական թերթ»-ը, որի գոյությունը տևում է երեք տարի: Հրատարակում է բժշկական բառարան, գրում է անատոմիայի դասագիրք հայկական դպրոցների համար, հրատարակում է բժշկական բույսերի բառարան, հոդվածներ է զետեղում «Մշակ»-ում և Երևանի «Պատակ»-ում:

«Մենք այնպես տարանք՝ մեր հասարակական գործերը, — գրում է նա իր «Իմ հիշատարանը»-ում ընկերների ու իր այդ ժամանակավագործունեության մասին երևանում, — որ թիֆլիզի ինտելիգենցիան մեծ մասամբ հարցերի մասին խոսում և ասում էր: «Իսկ երևանցիք ի՞նչպես են կարծում»:

1881 թվին նա կառավարության հրամանով գործուղվում է Պարսկաստանի Խովուղթուղար գավառը՝ այստեղ հայտնված ժանտափու վարակիչ հիմանդրությունը ուսումնասիրելու համար: Այստեղ իր գործը շուտ վերջացնելով նա իմանական գործունեությունը է 187 էջից, շարադրված Երևանի հասարակ խոսակցական լեզվով:

Վակի հյուսիսային ափերով Վան, ուր հյուսիսուն էր Կամսարականը: Այս տղեռության տպավորությունները նա տպագրել է «Մշակ»-ում:

Նա Երևանի Գայինյան դպրոցում ավանդել է մարդակազմություն, իսկ թեմական դպրոցում՝ մարմնամարգություն:

1883 թվին սկսվում է Երևանի հայտնի բաղաբական գործը, երբ մի խոնը գործիչներ, որոնց թվում և Տիգրանյանը մեղադրվում էին հեռու ապագայում Հայաստանը վիրականցնելու հանցանքի մեջ: Սարական կառավարության կողմից այսակի գործերը սովորական էին և ստեղծվում էին հայերին հալածելու համար: Գործի բնությունը երկարում է....

1884 թվին Տիգրանյանը ամուսնանում է, իսկ հաջորդ 1885 թ. հունվարի 15-ին ստացվում է գործի վճիռը և նույն ամսի 18-ին էլ կարդացվում մեղադրյալներին ցարի կողմից հաստաված վճիռը, ըստ որի մեղադրյալները դատապարտվում են ազատ աբորի զանազան վայրեր, ըստ իրենց ընտրության: Տիգրանյանն ընտրում է Դրապատը և կնոջ հետ մեկնում այստեղից էլ հետապայում իրավունք ստանալով մեկնում է արտասահման: Աքարորի ժամկետը լրանաբուց հետո նորից վերադառնում է Երևան:

1894 թ. մարտին, Վասիլ Գեղամյանից հետո, նա Երևանի բաղաբակուխ է ընտրվում, բայց չկարողանալով տանել ժամանակի նահանգապետ հայատաց Ֆրիգեի ու փոխահանգանգապետ Նակաշիձեի վիրագրական վերաբերմունքն ու խծճանքները, 8 ամիս աշխատելուց հետո, 1895 թ. ապրիլին հրաժարվում է պաշտոնից:

Տիգրանյանի թողած գրական ժառանգությանը մեծ չէ: Մենք նրա գործերի անուններն արդեն հիշել ենք իրենց տեղերությունը: Դրանք մեծ մասամբ վերաբերում են բըմբականության: Նրա վերջին աշխատանքը հանդիսանում է իր կողմից թարգմանված բժշկաբանը, որ նաև լույս է ընծավիլ 1894 թվին: Ամենակարևորը նրա գրվածքների մեջ, ոչ ի հարկե դրական արժանիքների տեսակետից, այլ յուր բովանդակության տեսակետից, «Իմ հիշատակարանը» է: Այդ հիշատակարանը կազմված մի ձեռագիր մեծ գիրք է, որն ունի հետևյալ խորագիրը «Իմ հիշատակարանը» (թժ. 1. Տիգրանյան): Իմ երեխաների համար, գիրքը բաղկացած է 187 էջից, շարադրված Երևանի հասարակ խոսակցական լեզվով:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Տիգրանյանը թե՛ւ ժամանակակիցների ասելով մի օգտառառ ու վիտ-վիտա բնավորության տերև և հախուռն գործիշ է եղել, բայց միաժամանակ ջշմարտախոս, ազնիվ ու մաքուր մարդ է հանդիսացել, ուստի կարելի է ու պետք է հավատ ընծայել նրա գործներին, եթե միայն «Ոմ հիշատակարանը»-ի որոշ էջերում նկատվող շափազանցությունները և կասկածելի կտորները հաշվի առնվեն:

Այդպիսի շափազանցություններից ու կասկածելի կրտորներից մեկն էլ, մեզ թվում է, հանդիսանուած է նզյանի «Պանոսի» պատմությունը Նալբանդյանի նկատմամբ. դա մեզ համար առանձին կարևորություն կունենար, եթե լրջորեն առտուգված ու հիմնավորված լիներ նաև ուրիշ աղբյուրների հիման վրա:

Մենք դժվարանում ենք հավատալ, որ նզյանի նման ազգասեր և մեծ անուն ու հոչշակ վայելող մարդը, թեկուզ և ծանր ու դժվարամարտ բնավորության տեր ընկելով հանդերձ, կարող էր մասնիշ հանդիսանալ ազգի անխարժախ բարեկամ և փո իսկ որտակից մտերիմ Նալբանդյանին: Մենք նմանապես դժվարանում ենք հավատալ, որ ցարական անդրտորդ քաժմին աստիճանավորները, եթե անգամ նրանք ազատամիտ էլ եղած լինեին, վատահանարին. Պետրպավլովսկ բնիքի Ալեքսեևի բավելինում տարիներով նստած ու հետո էլ աքատի դատապարտված պետական մի ծանր հանցավորի հայտնի նրա ամենածածուկ և առաջեցուցիչ գաղտնիքները: Իսկ ո՞րտեղից և ի՞նչ աղբյուրից կարող էին քաղաք լինել «Երրորդ բաժնին» առաջատամիտու մարդիկ Նալբանդյանի այդ ասպազեցուցիչ, ամենածածուկ գաղտնիքները, քանի որ ոչ ոքի ոչինչ չեղ ասել. համփանաթի պիտի լինի. որ միայն ու միայն Նալբանդյանի մեղադրական գործից, որն այժմ մեզ հայտնի է և որի մեջ սակայն չի գտնվում ոչ մի վակերաթուղթ, մինչև իսկ որևէ հետք, այսպիս թե այնպիս կապված նզյանի անվան հետ: Իսկ ինչ վերաբերում է նրան միմյանց ու մտերիմ բարեկամներ են եղել միմյանց ու մտերիմ սրբագրությունը: Իսկ ինչ է նզյանի թղթերի մեջ, որ նա գրած է եղել ի պատասխան ներքին Գործոց Նախարար Վայումի կողմից իրեն ուղարկված բանաստեղծ Ս. Շահազիլյանի Շևոնի վկտի առիթով տրված անտորհագիր «Պանոսի»: Համենայն գեպս մենք կարծում ենք, որ այդ բոլորի մեջ մի թյուրիմացություն պետք է տեղի ունեցած լինի:

Տիգրանյանն իր օհմ «Հիշատակադր»-ում Սանասարյանին ամեն դեպքում ներկայացնելով որպես նզյանին հլու հնագանդ, նրա հմայքով տարված ու գերված մարդու, իր հետ նրա սառն վարվելու, միշտ խրատական ձևով խռուելու, մինչև իսկ օտարների առաջ հանդիմանելու հանգամանքն էլ վերաբեր է նզյանի ազդեցությանը, նրա դրդելուն: Մեզ թվում է, որ նա կամ սխալվում է, կամ նզյանի հանդեպ ոմնեցած կուըր ատելությունից է այդպես վարվում. նա չի հասկացել, կամ չի ուղեցել հասկանալ, որ քեզու այդ վարագումքը հետևանք է եղել. ինչպես երևում է, նրա մեջ հնուց արմատակալած դատիքակության: Նա պիտի կարդացած լիներ, և անջուշ կարդացել է իր քեզու. Փաղփակից գրած վերջին նամակը, որի մեջ նա շնորհավորելով Տիգրանյանին, քրո-

Ուրեմն ինչո՞ւ ամ է բանը. Տիգրանյանը որքան էլ ատելիս լիներ նզյանին, անկաս-

*) Տես Դիվան Միկայել Նալբանդյանի, էլ 287:

ըր՝ Կատարինեին և Հարս Նունեին, անդքանիկ զավակի ծննդյան առթիվ, փարատել է Հարսին. «Նինույա ջան,—գրել է նա, — բնական օրենք է, որ ծնողները կսիրեն իրենց որդոցը, խորհուրդ կտամ քեզ, որ դու քո զավա-

կիդ սիրես կվառով, իսկ սրաով սիրելու այնպես ծածկես, որ որդիդ շմանա»: Այս հիմունքով էլ բնական է կարծել, որ նա ծածկել է իր սերը քոոչ որդու՝ կենի նկատմամբ, որի համար ոչինչ չի խնայել:

Այս հոդվածը գրելուց պատվել ենք Շևոկալ աղբյուրներից:

1. Լ. Տիգրանյանի «Եմ հիշատակարանը» խորագրով ձևագիրը:
2. Մ. Ս. Սահարան (некролог) «Новое обозрение», 1890 թ. № 22:
3. Կենսադրական տեղեկություններ, «Նոր գար», 1890 թ. № 57:
4. Նամակ առ Խմբագրություն, Քրիզոր Նիկողոսյանի հոդվածը «Արևելք» թ. 263, 1890 թ. սկզբ. 25:
5. Наследство Сацасарова и действия его души приказчиков հոդվածը «Тифлисский листок», 1890 թ. № 207:
6. Նամակ Խմբագրին, Լ. Տիգրանյանի հոդվածը, «Մշակ», 1890 թ. նոյեմբ. 8 № 102:



ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ



նցյալ 1945 թ. Հոկտեմբերին վախճանվեց հայ ականավոր գիտնական ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը:

Մանուկ Աբեղյանը մեկն է հայ բանասիրական գիտության խոշորագույն ներկայացուցիչներից: Իր բազմամյա ու անխռոշ գործունեությամբ նա հայկական ֆիլոլոգիան արգասավորեց բազմաթիվ արժեքավոր գործերով, որոնք կարևորագույն ներդրումներ են հայկական կուլտուրայի ուսումնասիրության համար:

Դեռդրյան ճեմարանն ավարտելուց հետո ակադեմ. Աբեղյանը ֆիլոլոգիական հիմնավոր կրթություն է ստանում Ենայի, Լայպցիգի, Թիւլինի և Փարիզի համալսարաններում և փայլուն քննություն բռնվով ու բանասիրական գիտությունների դոկտորի կոչում ստանալով Թիւլինի համալսարանում, վերադառնում է հայրենիք և իրեն նպատակ մանկավարժական ու գիտական գործունեության:

Խոշոր և բեղմնավոր է եղել նրա մանկավարժական գործունեությունը. 1890-ական թվականներից սկսած նա դասավանդել է Դեռդրյան ճեմարանում, Շուշու թեմական դպրոցում, Թիֆլիսի Ներսիսյան և Հովհաննյան դպրոցներում: Հայաստանի սովետիկացիայից հետո Աբեղյանը նոր թափով ու եռանդով դասախոսում է Երևանի նորաբաց Գետական համալսարանում, Մանկավարժական ինստիտուտում և այլ ուսումնական հիմնարկներում:

Որպես մանկավարժ Մ. Աբեղյանն աշքը էր ընկնում իր հոգատար վերաբերմունքով դեպի ուսանողությունը: Գրականության ու արվեստի ասպարեզում ներկայումս կան բազմթիվ աշքի ընկնող գործիշներ, որոնք Մ. Աբեղյանի աշակերտներն են հանդիսացել:

Մանկավարժական

գործունեությանը

գուգրնիաց Աբեղյանը ծավալել է նաև գիտական խոշոր գործունեություն և հայ պարբերական մամուլում լույս տեսած իր բազմաթիվ գիտական հնտագույնություններով հարստացրել ու զարգացրել է հայ գիտական միտքը: Անզնահատելի աշխատանք է կատարել Մ. Աբեղյանը, հատկապես հայ ֆուլլորի բնագավառում: Նա բազմամյա քրտնազան աշխատանք ու մեծ եռանդ՝ անդեմ բերել հատկապես Հայկական էպոսի հավաքման և ուսումնասիրության գործում: Աբեղյանը ոչ միայն էպոսի հայտնաբերողն էր մեկն է, այլ նաև նրա՝ հայ էպոսի առաջին մեծ տեսաբան-հետազոտողը և մասսայականացնողը: Մեծ գիտնականը շրջել է Հայաստանի զանազան շրջանները, հավաքել էպոսի տարբեր վարիանտները, ինքն անձամբ գրի է առել մի նոր վարիանտ և ապա հրատարակել և սՍասնա ծուեր» տեքստերի ժողովածուի երկու հատորները: Մեծանուն գիտնականը գիխավորել է նաև «Սասունցի Դավթի հորելյանական հրատարակության համահավաք տեքստի իմբրագրման աշխատանքները: Էպոսի ուսումնասիրության որպիս արդյունք Աբեղյանը իր ժամանակին արպագրել է «Հայ ժողովրդական վեպը» մեծարժեք գիտական աշխատությունը:

Հայ ֆուլլորի բնադրավառում Մ. Աբեղյանը մեծ աշխատանք է կատարել նաև հայկական ժողովրդական առասպելների, գուսանական-ժողովրդական տաղերի կամ հայրենների ուսումնասիրության վրա և տարբեր ժամանակներում լույս է ընծայել «Դուսպանական տաղեր», «Ժողովրդական խաղիկներ», մեծահատոր ժողովածուները և մի շարք այլ ուսումնասիրություններու Սլրանցից նշանավոր է «Հայ ժողովրդական առասպելները» Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ՝ աշխատությունը, ուր մեծ գիտնականը շախչախիչ քննադատության է ենթարկում Մ. Էմինի, Գր. Խալաթյանի տեսու-

թյունները, որոնք մեր ժողովրդական առասպեկտները բննում են այլ ժողովուրդների առասպեկտների ազդեցության ու զուգահնուր բնութագրման տեսանկյունով։ Աբեղյանն առաջինը եղավ, որ բացահայտեց հայկական առասպեկտների ինքնուրույն նշանագություն ու նրանց կապը հայ բնաշխարհի, հայկական իշխանության հետ։

Նույնպիսի գիտական արժեքավոր ուսումնասիրություն է և Աբեղյանի «Հին գուսանական ժողովրդական երգը» աշխատությունը, որը տպագրվեց Հ. Ս. Խ. Դ. Գիտության և Արվեստի տեղեկագրում։ Այդ աշխատության մեջ Աբեղյանը պարզաբանում է հին գուսանական - ժողովրդական երգերի ծագման, ըրնույթի, գեղարվեստական առանձնահատկությունների հետ կապված հարցերը։

Մ. Աբեղյանն է հանդիսանում հայոց լեզվի տաղաչափության առաջին ուսումնասիրողը։

Մ. Աբեղյանը երկար ժամանակ զբաղվել է հայոց լեզվի տեսությամբ ու քերականությամբ։ Այդ բնագավառում նշանավոր են նրա՝ «Հայոց լեզվի տեսություն» և «Աշխարհաբարի շաբահյուսություն» աշխատությունները, որոնք երկար ժամանակ հանդիսացել են որպես դասագրքեր ԲՈՒՀ-երի ուսանողության համար։

Ակ. Աբեղյանի գիտական գործումներության հիմնական բնագավառը հայ գրականությունն է հանդիսացել։ Նրա «Հայոց հին գրականության պատմություն» երկու ստվարահափոր աշխատությունը հանդիսանում է նրա գիտական աշխատությունների գլուխ գործոցը։ 1944 թվին ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հաստարակությամբ լրաց տես սավ Մ. Աբեղյանի այդ աշխատության առաջին հատորը։ Գրքի առաջաբանից պարզ վում է, որ հեղինակը դեռևս 1890-ական

թվականների վերջերից մտադիր էր գրելու հայոց հին գրականության պատմությունը, սակայն մի շաբթ դժվարություններ լուրջ խոչընդունուել են հանդիսացել անձ գիտնականին շարունակելու և ավարտելու իր այդ հույժ կարևոր և մեծարժեք աշխատությունը։


Միայն Սովորեական իրականությունը ընձեռնեց մեծ գիտնականին առավելագույն հնարավորություններ ավարտելու և լույս ընծալելու «Հայոց հին գրականության պատմությունը», որը բաղկացած է 2 հատորից։ Մահը խանգարեց մեծ գիտնականին ավարտելու երկրորդ հատորի վերջին հատվածը։ սակայն Գիտությունների Ակադեմիայի Գրականության ինստիտուտի ջանքերով հաշողվեց հեղինակի սկագրություններից ու «Արարատ» ամսագրում տպագրված նրա ակնարկաշրից լրացնել թերին և վերջերս հրատարակել նաև երկրորդ հատորը։

Հայոց հին գրականության պատմության մարզում անցյալում շարադրված գրքերը (Հ. Գաթրճյան, Ստ. Պալասանյան, Գ. Զարբհանալյան, Ա. Զամինյան, Վ. Փափազյան, Գ. Վանցյան) եղել են բացառական լուրիվ շարադրանքներ, որոնց

մեջ բացակայել է գրական հուշարձանների հասարակական-գաղափարական բովանդակության ու գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծումը, կամ, լավագույն դեպքում դրանք հանդիսացել են դասագիրք-ձեռնարկներ միջնակարգ դպրոցների աշակերտության համար։

Ակ. Մ. Աբեղյանի աշխատությունը Հայոց հին գրականության պատմության մասին առաջին ամբողջական գիտական, ընդարձակ շարադրությունն է։

Ակ. Աբեղյանի այս աշխատության նշա-



Մ. Աբեղյան

նակությունն այն է, որ հեղինակն այստեղ տափս է հայ հին գրականության պերիոդիզմիցին, որը կատարել է ոչ թե ձևակայտեսակետից, այլև «ըստ բռվանդակության, նայելով գրականության մեջ արտահայտված պատմական իրականությանը»: Այսպիսով Աբեղյանը միանգամայն նոր մեկնարանություն է տալիս մեր հին գրականությանը: Ճենց արդ առավելությունը շեշտված է ինստիտուտի կողմից գրքի առաջին հատորին կցված «Երկու խոսքում», որտեղ ասված է հետևյալը. «Իր այս հոյակապ գործում Մ. Աբեղյանը բացահայտում է հայոց հին գրականության բուն էությունը, նրա ոգին և ընդհանուր ուղղությունը, դիտելով այն իրբեկ օտարերկրյա (պարսկական, արաբական և այլն) բռնապետությունների դեմ հայ ժողովովի մղած ազատագրական դարավոր ու անդուզ մաքառումների ու քաղաքական պայքարի մի գրականություն»:

Ակադ. Աբեղյանը «Հայոց հին գրականության պատմությունը» բաժանել է չորս հիմնական շրջաններ:

Առաջին շրջանն անվանել է «նախնական առասպելապատմական բանահյուսություն»: Այստեղ նա քննության է առնում հին հայկական առաքելները՝ Հայկ Դյուցազն, Արամ, Տոքր Անգեղ, Արա Գեղեցիկ և Շամիրամ, Վահագի վիշապաբար և ապա ավանդական վիպահը՝ Մեծն Տիգրանի, Սահատրուկի, Երվանդի, Արտաշեսի, Արտավազուի մասին և ընդհանրապես վիպուծության ենթարկում վիպասանքի արվեստու ու գալափարական կերպարները: Առաջին շրջանն ընդգրկում է սկզբից մինչև 3-րդ դարը (մ.թ.):

Հայոց հին գրականության երրորդ խոշոր շրջանը Աբեղյանն անվանում է «Ենեղեցաբաղադրական մաքառման գրականություն» (որն ընդգրկում է 3-րդ դարից մինչև 10-րդ դարը ներառյալ):

Հայ գրերի գյուղոր ու հայ գրականության սկիզբը համարելով փոշոր քաղաքական իրադարձություն հայ իրականության մեջ, հեղինակը պարզում է, որ գրանով իսկ սկիզբ է արևոտմ կուլտուրական պայքարը և եկեղեցա-քաղաքական մաքառման գրականությունը պարսկական ու հոնական ձգտումների դեմ:

Շարունակով գիտական շարադրանքը Աբեղյանը մանրամասնորեն կանգ է առնում առաջին թարգմանիչների ու թարգմանությունների (Մ. Գրքի թարգման. և այլն) և ապա հունաբան դպրոցի առաջացման ու նրա նշանակության վրա:

«Առաջին հեղինակներ» անվան տակ խոսվում է Ս. Պարթեկի, Մ. Մաշտոցի ու Եղինեկ Կողբացու մասին, իսկ՝ «առաջին պատմագրությունը» վերնագրի տակ՝ մանրամասնորեն քննվում է Կորուն վարդապետի, Ագաթանգեղոսի և Փ. Բուզանդի գործերը:

Հստ Աբեղյանի Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ արտացոլվել է «պարսից պատերազմ» ժողովրդական վեպը: Աբեղյանը հանգամանորեն պարզում է յուղովրդական վիպի բովանդակությունը, հորինվածքը և նրա մեջ տեղ գտած սոցիալ-տնտեսական հարաբերությունները:

Բավական մեծ տեղ է հատկացված նաև Հայ գասական պատմագրիներին (Մ. Խորենացի, Եղիշե, Ղ. Փարպեցի):

Այսուհետև իրեք գեղարվեստական գրականություն, Աբեղյանը քննարկում է գրական ստեղծադրությունների տարրեր տեսակները՝ վկայաբանություններ, դաշնական պայքարի գրականություն, բանաստեղծություն, պատմագրություն: Արարական բռնապետության դեմ մղվող պայքարը շրջանի գրականության մեջ Աբեղյանը կանդ է առնում Ղենդ պատմագրի ու Հովհաննես Դրասիսանակերտցու «Հայոց պատմության» վրա:

Ակ. Աբեղյանն իր աշխատության մեջ հատուկ գլուխ է նվիրում մեր հոգևոր երգերի շարականների ուսումնասիրությանը, խոսելով նրանց ձեր ու բովանդակության մասին:

Գրականության պատմության երկրորդ շրջանը վերջացնում է այսպես կոչված «հաղաղ շինարարության» դարսով: Դա 10-րդ դարն է, երբ հայ պետականությունը նորից շունչ առավ և ժողովուրդն սկսեց խաղաղ կյանքը վարել: Ամենից կարևորն այս բաժնում «Գրիգոր Նարեկացի» գլուխն է: Ակ. Աբեղյանը իսրագննին վերլուծության ենթարկելով նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը՝ այն համարում է համաշխարհային միստիկական գրականության կոթողներից մեկը, իսունելով «Տաղերի» գեղարվեստական առանձնահատկությունների ու տաղաչափական արվեստի մասին Աբեղյանը նարեկացուն, իրավամբ, համարում է հայ առաջին մեծ քանաստեղծը: Սրանով վերջանում է Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորը:

Երկրորդ հատորն ընդգրկում է 11-րդ դարից մինչև 19-րդ դարի սկզբի գրաբար բանաստեղծությունը: Հայոց հին գրականության պատմության հերթական երրորդ

շրջանը Արեղյանն անվանում է «Վերածնության գրականություն»։ Նոր մտավոր հոսանքի առաջին փուլերը գրականության մեջ Արեղյանը տեսնում է զեռևս Գր. Մագիստրոսի, Ա. Լաստիլերցու, Հովհ. Սարկավագի իմաստահրի, Դավիթ Սարգսի պրոդասեղադապործություններում։

Միջնադարյան շրջանի գրականության մեջ նա հանգանանորոն կանգ է առնում Ներսես Ծնորհալու, Ներսես Լամբրոնացու, առակադիրներ՝ Մ. Գոշի, Վ. Այգեկցու ստեղծագործությունների վրա, բանաստեղծության բնագավառում՝ Ստ. Օքբելյանի, Խ. Կեշառեցու, Ֆրիկի, Հովհաննես Երզնկացու (Պլուզի), Կոստանդին Երզնկացու ստեղծադործությունների և այդ շրջանի տաղերգուներ՝ Մ. Նաղաշի, Քերովպեհի, Հ. Թլկուրանցու, Գր. Աղթամարցու, Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովհաննի ստեղծագործությունների վրա ու վերլուծում նրանց քերթվածները։

Հայոց հին գրականության վերջին՝ շոր-

րորդ շրջանն ակ. Արեղյանը վերնագրում է «Գրականության նորոգումը 17—19-րդ դարերում»։ Այս շրջանն իր մեջ ընդգրկում է Առաքել Դավիթինեցու, Զաքարիա Սարկավագի և Արրահամ Կրետացու պատմությունները, Սայաթ-Նովայի, ինչպեսև և 19-րդ դարի սկզբի Մխիթարյան բանաստեղծների գրաբար ստեղծագործությունները։ Մրանով Արեղյանը վերջացնում է «Հայոց հին գրականության պատմություննը»։

Մեծ գիտնականնը երկու հատորների վերջում զետեղիլ է բազմաթիվ հավելվածներ, որոնք պարզաբանում են գրականության պատմության հետ կապված մի շարք խընդիրներ։

Իբրև գրականության պատմաբան ակ. Արեղյանը փայլում է իր խորաթափանց մտքով, կուռ տրամաբանությամբ, սկզբունքային համառությամբ, աշխատասիրությամբ և ընդհանրացումների կուռ կարողությամբ։

Ն.





„ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ“ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՑԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Շատ գրեունք գլուհ
Մեր հարքն ու մազդաք
Զէտ ցորեն դիզել
Քանց բարձր Արարատ:

Դ. ԱԼԻՇԱՆ


արերի ընթացքում հայ ժողովութիւնը անդուզ շանքերով կուտակված հայ կուլտուրան է ցուցադրված Հայաստանի Պետական հանրային գրադարանում:

Երբ այցելուն հայացքը սկսում է ցուցահանդեսի ընդարձակ սրահի գեղեցիկ ցուցափեղերի տակ զետեղմած ստվարահատոր հազարափոր գրքերին, մի պահ հիշում է, թե ինչպես բազմաշարչար հայ ժողովուրդը, դարերի ընթացքում մահու և կենաց պայքար մղերով իր գոյության պաշտպանության համար, կարողացել, է պայքարի դժուգակ պայմաններում ստեղծել կուլտուրայի այդօրինակ հարուստ ժառանգություն։ Ակամաւից հիշում ես ոռւս ականավոր գիտնական ու բանաստեղծ Վալերի Բրյուսովին, որ իր հիացմունքն է սրտահայտել հայ ժողովորդի ստեղծագործ կարողության առթիվ։

«Հայերը մեր և ողջ աշխարհի ուղարկության ամելի բարձր իրավունք ունեն այն բարձր կուլտուրայով, որ հայ ժողովուրդը մշակել է իր գոյության երկար դարերի ընթացքում, և այն բացառիկ հարուստ գրականությամբ, որը կազմում է Հայաստանի ավանդը մարդկության Հանուր գանձաշանին»։

Մագաղաթյա ձեռագրերում ու տպագիր հազարափոր գրքերում ամփոփված հայ տպագրական կուլտուրայի արժեքը իր պատկերավոր գնահատությունն է ստացել արևմտահայ նշանավոր բանաստեղծ Դ. Վարուժանի հետևյալ խոսքերի մեջ։

«Փառք հայ տառերուն, որոնք անհմանալի խնամիությամբ, մոգական գրիշներու տակ հավաքված՝ եղիշեին

յեզուն ոսկի բրին, Բագրատունիինը՝ աղամանդ և Ալիշանինն ու Հայրիկինը՝ մեղր քաղցրահուս։

Հայ յեզուն այդ տառերու սանդիմաւածատերուն վրա, ոտն առ ոտն բարձրացավ ամեն դարերու ճակտին վրա՝ հոն փորագրերու համար անմահությունը ցեղին։

Մտնում ենք ցուցահանդեսի առաջին բարձինը, որը կոչվում է «Հայկական պիրի տպագրության կարևորագույն օջախները»։ Այդտեղ ցուցադրված է հայ տպագիր դիրքը սկզբից մինչև 1920 թիվը։

Հոյակաց սրահում գովնզգուն պաստառներու ծածկված պատվանդանների վրա ու ցուցափեղեկերի տակ դասավորված են հայ ժողովորդի հոգևոր կուլտուրայի այդ գանձերը։

Ցուցասրահի ճամփատին թավշապաստախակի կարմիր ֆոնի վրա ուսկեցույն մեծ տառերով ցույց են տրված հայկական տպագրության կարմրագույն օջախները։

Այդ մակագրության ներքեւ ամրացված է առաջին հայ տպագրիչ Հակոբ Մելուապարտի նկարը, որի հորիզոնական ուղղությամբ ցուցասրահի առաջին պլանում մի քանդակագրդ փոքրիկ ցուցափեղեկի մեջ դրված է հայ առաջին տպագիր գիրքը՝ «Պարզատումարր», տպագրված 1512 թ. Վենետիկում։ Ցուցահանդեսի առաջին բաժինը հմտությամբ բաժանված է երկու ստորաբաժիններին՝ նախ՝ հովանաձև պատվանդաններով առանձնացված ցույց են տրվում հայ տպագրական օջախները՝ իրենց հրատարակու-

Միտմներով: Այս մասում տեղափորված են 1512—1850 ժամանակաշրջամասում տպագրուված գրքերը: Երկրորդ ստորաբաժանումն ավելի ընդարձակ ու բազմակողմանի է: Այստեղ բառ բնագավառների փոքր ենթաբաժիններով դասավորված են 1850—1920 ժամանակաշրջանի հրատարակություններու:



Հակոբ Մեղապարտ

Հայ ժողովրդի նման ցրված ու աստանդական կյանք է ունեցել նաև Հայ տպագրությունը: Տարբեր ժամանակներում, աշխարհի զանազան անկյուններում Հայ ժողովուրդն ստեղծել է տպարաններ, հրատարակել գրքեր ու պարբերականներ, որոնք ծառացել են որպես զենք նրա ազգային ինքնուրույնության ու պահպանման համար մըղված պալքարում:

Մեր առաջ այստեղ բացվում է 141 քառամերի հայկական տպագրական օջախների շղթան: Նրա մեջ է Վենետիկը, հայկական տպագրության առաջինը:

Առեարական գրդերով այստեղ մեկնեց Քուղայից Հայ վաճառական Հակոբը, որը ձեռնամուխ եղավ առաջին տպագրությանը և 1512 թիվին հրատարակեց Հայ առաջին տպագրի գիրքը՝ «Փարզատումաքը»: Փոքրադիմ, 118 էջից բաղկացած մի գիրք է դա, շարված միատեսակ բոլորագիր ուղղահայաց տառերով: Գրքի էջերն ունեն գլխագարքեր:

և ծաղկատառ գլխագարքեր: Բայցի պարզաբնությունը գրքում կան ենթացոյց, «Նշանացոյց», «Երազացոյց», «Ծննդեան տղայոց» և մարմնականաց: Մինչև այժմ արքի գրիցից հայտաբեր գաղտնաբառը է վեց օրինակ, որոնցից երկու գրադարաններում կան են գրադարաններում: (Հանրային գրադարան և Մատենադարան): Երկուսը վիճակի Միթիթարայի անդամների գրադարաններ, մեկը Երևանի հայոց վանքի գրադարանում և մեկն է Մատենադարանում: 1512—1513 թ. թ. նույն Հակոբը հրատարակում է հինգ անուն գիրք, որոնք նույնպես ցուցադրված են այստեղ: Ուշագրավ է 5-րդ գիրքը, որը «Տաղարան» է կոչվում: Այստեղ առաջին անգամ տպագրված են նմուշներ: Միթիթարային միջնադարում կազմված է այս գիրքը: Այս գիրքը անդամների գրադարանում է պահպանվում: 1565 թ. տպագրում է Հաւերեն առաջին օրացուցը՝ «Խառնացոյց», «Մաշտոց» և այլն:

Տոքոր Զուղալեցուց հետո Վենետիկում Հայ տպագրության գործի շարունակողը հանդիսացաք Արքար Թոքատեցին, որը քաղաքական նպատակներով Հոռոմ էր եկել 1563 թիվին: Թոքատեցին ձուլում է երկու տեսակի հայկական տառ և տպագրում մի շարք գրքեր Թոքատեցին 1565 թ. տպագրում է Հաւերեն առաջին օրացուցը՝ «Խառնացոյց» և այլն:


1565—1686 թ. Վենետիկի հայկական տպագրության պատմության մեջ խոչոր գեր են խաղացել տպագրիներ Հովկ. Տերգրինեցին, Հովկ. Անկումնեցին, Խոչա Նահապետին իր որդիներով և ուրիշները: Այս շզանի հրատարակություններից ցուցադրված են ն. Ծնորհացու «Ֆիսուս որդի» գիրքը, որը մեր մատենագիրների մեջ առանձին գրքով հրատարակված առաջին տպագրի գիրքն է: Նշանավոր է նաև «Ճաշոց» մեծածավակի գիրքը, որի տպագրությունը մի քանի տարի է տևել:

18-րդ դարի սկզբներին Վենետիկում հիմնադրվում է Միթիթարյան միաբանությունը՝ Միթիթար Արքայի կողմից: Հայ տպագրության պատմության մեջ Միթիթարյան միաբանության գործունեությունը անհայտ է իրեկի շրջան էր: Մինչև սեփական տպարան ստեղծելը՝ Միթիթարյանները Վենետիկյան տպարաններում լուս են ընծայում մի շարք նշանավոր գրքեր: Այս գրքերից ցուցադրված են Միթիթար Արքայի «Աստուածաշունչը», «Հայկակեան բառարան»:


Զամայանի «Ճաշոց» պատմությանը Հա-

տողները, Նարեկացու «Մատկան սպրեզութեան» առաջին հրատարակությունը, որը անվանված է «Բանք աղօթից», Փարպեցու «Հայոց պատմութեան» առաջին ապագրությունը, Մխիթար Գոշի «Առակների» 1-ին տպագրությունը և այլն:

1789 թ. Մխիթարյանները հիմնում են իրենց սեփական տպարանը: Էպոնց գործունեության ընթացքում նրանք լույս են ընծայել 1.000 անունից ավելի գրքեր՝ բազմապիսի բովանդակությամբ: Այստեղ են լույս տեսել Մխիթարյան բազմավաստակ գիտնականների՝ Ալիշանի, Ավգերյանի, Բագրատոսոնու, Ղազիկյանի, Խճճիճյանի աշխատությունները, Թովմանյանի, Թժշկյանի և այլոց կլասիկ թարգմանությունները: Մխիթարյան տպարանումն է լույս տեսել «Քաղաքական ամսագիրը», որը սկսվել է հրատարակել 1843 թվից և շարունակվում է հրատարակել մինչև օրս: Առանձնապես հիշատակելի է Մխիթարյան գիտնականների քրտնաշան աշխատանքը 5-րդ դարում հունարենից հայերեն թարգմանված մի քանի արժեքագործ ձեռագրերի վրա, որոնց հունարեն բնագրերը ժամանակի ընթացքում ոչընչացել են, իսկ հայերեն թարգմանության տերստերը փոխարինում են բնագրերին: Մխիթարյանները մանրագննին ուսումնասիրությամբ հրատարակեցին դրանք: Այդ գրքերից ցուցադրված են՝ Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակակարանը» («Քրոնիկոն»),



Հռվ. Մյումենախյան



Ճանիկ Արամյան

Փիլոն Երրայեցու «Յաղագս նախախնամութեան» ու «Յաղագս կենդանեաց» և Սեվերյանու Եմեսացու «Ճառք»-ը: Հիշյալ աշխատությունները լատիներենի թարգմանեց բազմաշխատ գիտնական Մ. Ավգերյանը և գիտությանը տեղյակ դարձեց դրանց մասին:

Հայ տպագրության երկրորդ նշանավոր օջախը Կոստանդնուպոլիսն է, թե տպագրված գրքերի ու պարբերականների քանակի և թե հայ պոլիգրաֆիայի զարգացման տեսակետից: Այս քաղաքումն էր հիմնել հայկական առաջին տպարանը 1567 թ. Արգար դպիր Թորբատեցին: Այստեղ են գործել ատարբեր ժամանակամիջոցներում նշանավոր տպագրիչներ՝ Գրիգոր Մարգրվանցին, Հովհ. Մյուհենտիսյանը, Պողոս Արագյանը, Ճանիկ Արամյանը: Վերջիններս զարգացրել և բազմացրել են հայ տպագրական տառածերրը: Պողահայ հին հրատարակություններից ցուցահանդեսում ուշադրության արժանի են՝ 1706 թ. տպագրված «Յայսմաւութք» ստվարածավալ գիրքը, Հակոբ պատրիարք Նալբանի «Մեկնութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացույց»-ն, Ագաթանգեղոսի, Փավլոսոս Բուգանդի, Եղիշեի առաջին տպագրությունները, Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց»-ը, Բաղդասար դպիրի՝ «Պարզաբանութիւն քերականութեան»-ը և ուրիշ շատ գրքեր:

Հայ տպագրության պատմոթյան մեջ նըշանավոր տեղ ունի նաև Հոլանդիայի Ամստերդամ քաղաքը, որտեղ Հայաստանից գաղթած փոքրաթիվ հայերի մի խումբ հիմնել է «Ս. Էջմիածին» և «Ս. Սարգս զորավար» տպարանները — 1660 թ.: Այստեղ են դորձել հանրահողակ Ուկան Երևանցին (Ղլիճենց), Թովմաս եպիսկոպոս և Վանանդեցի եղբայրները:

Ամստերդամի հրատարակություններից ցուցադրված են հայերեն առաջին տպագրի «Աստուածաշունչ»-ը, որ 1666 թ. տպագրել է Ուկան Երևանցին, միաժամանակ խմբագրել, համեմատել յատիներենի հետ և կազմել հատուկ անունների ցանկ, «Շարակնոց»-ը, որը առաջին հայ տպագրի գիրքն է հայկական խազերով, Խորենացու Հայոց պատմոթյան առաջին տպագրությունը (1695 թ.), Սկրողերի «Ֆանձ Արամեան լեզու» լեզվաբանական ուսումնասիրությունը, Առաքել Դավրիժեցու Պատմոթյան առաջին տպագրությունը, որի ժամանակ հեղինակը դեռ կենդանի էր, և տեսավ իր տպագրված գիրքը: Ամստերդամում է տպագրվել առաջին հայ տպագրի քարտեզը՝ «Համատարած աշխարհացուց»-ը, որը պատրաստել է Բ. Վանանդեցին, Բ. Նուրիշան-յանի աշխատակցությամբ:

Հայ կուտուրալի օգախներից մեկն է եղել և նոր-Զուրան: Այստեղ ևս շաշտուր կեսարցու ջանքերով կազմակերպված տպարա-




Ուկան վարդապետ Երևանցի

նույն 1641 թվին լույս է տեսնում «Հարանց գաղտնիք» միծածավալ գիրքը:

Հայ բնաշխարհում առաջին հայկական տպարանը հիմնադրվել է Էջմիածնում Միմեն կաթողիկոսի օրով: Տպարանն ունեցել է նաև թղթի գործարան: Գևորգ Դ. կաթողիկոսի օրով ավելի ընդարձակվում և բարեկարգվում է տպարանը: Էջմիածնի տպարանում տպագրած գրքերից ցուցադրված են Միհիմար Գոշի «Դատաստանագիրք»-ը, Միմեն կաթողիկոսի «Զամբռա»-ը, «Զայնագիր շաղանան»-ը և ուրիշ շատ գրքեր:

Հայ տպագրության դրժի խոշոր օջախն է եղել նաև Հնդկաստանը: Կալկաթայի Հայկական ծեմարանի և Արարատյան ընկերության հրատարակություններից ցուցադրված են Մ. Թաղիալյանի երկերը, «Ազգական» շարաթաթերթի, իսկ Մադրաս քաղաքում Շ. Շահամիրյանի տպագրություններից՝ «Այրենարան», «Որոգայթ փառաց», «Յորդորակ» գրքերը, 1794 թ. Հարություն քահանա Շմավոնյանի կողմից լույս բնծարմած առաջին հայ պարբերականը՝ «Ազգարար»-ը:

Հայ տպագրության պատմության մեջ ոչ պակաս կարենոր դեռ են խաղացել Թրիեստի և Վիեննայի Միհիմարյան տպարանները, այնուհետև Երուաղեմի, Ջմլունիայի, Ս. Պետերբուրգի, Մոսկվայի, Թիֆլիսի, Նորնախիշևանի, Աստրախանի, Երևանի, Թեոդոսիայի, Վանի հայկական տպարանները:



Առաջին տպագրության Աստուածաշունչը

Ցուցահանդեսում առանձին-առանձին ցուցադրված են այդ տպարաններում լուս տեսած գրքերը (ինքնուրույն և թարգմանական), ժողովածուները, պարբերականներն ու ամսագրերը:

Երեանում առաջին տպարանը կազմակերպել է Գ. Զաքարյանը 1876 թվին, այս տպարանում էր տպագրվում Հայաստանում առաջին հայկական թերթը՝ «Պատահան»:

Ցուցահանդեսի երկրորդ ստորաբաժանման մեջ՝ 1850 թվից մինչև 1920 թ. ժամանակաշրջանում հրատարակված գրքերը ցուցադրված են ըստ բնագավառների: «Պատմական» բնագավառում ցուցադրված են բազմագավառական գիտական Դ. Ալիշանի պատմական տեղագրական երկերը, Այստեղ են՝ «Այրարատ», «Ծիրակ», «Սիմական» փառակազմ հատորները, նույնպես և «Հայապատում», «Տեղեկագիր Հայոց մեծաց», «Աշխարհագրութիւն» թանգարժեք գիտական գործերը, Թարգմանական պատմական գրականության շարքում կան Ռուբենի «Հռովմէական պատմութիւն»-ը, Թուլիդիտեսի, Սալուստի հայոց պատմութիւնը, Հուստիոսի, Կիսարի, Տակիտոսի պատմական երկերը, իսկ Հայոց պատմության գծով՝ Լուիի «Հայոց պատմութիւնը», Դարագաղացի կան Ռուբենի «Հռովմէական պատմութիւնը», Գյուտ քահ. Աղանյանցի «Թիւանը», Օրմանյանի «Աղջապատումը» և այլ գրքեր:

Հոյակապ շքեղություն է ներկայացնում «Հայ պատմիշներ» շարքը: Այստեղ ցուցադրված են Ռուկեղարի Հայ պատմիշներից մինչև 16—17-րդ դարի պատմիշների երկերը: Այստեղ են Աքաթանգեղոսուր, Խորենացին, Փարպեցին, Եղիշեն, Եղիշել, Սեբեոսը, Դրասիանանակերտցին, Կաղանկատուացին, Ասողիկը, Թովմա Արծրունին, Ռվաստանես եպիսկոպոսը և շատ ուրիշների պատմություններն ու ժամանակագրությունները:

«Բառարաններ» շարքում ցուցադրված են մեր նախորդների շքերազանցված աշխատանքները բառարանագրության ասպարեզում: Այստեղ են դրված Հ. Ավգերյանի «Անդերէն-Հայքին», Մ. Զախարիանի՝ «Հայ-իտարական», Ն. Բուղանդացու՝ «Ֆրանսահայ», Տիուզյանի՝ «Պատրիակահայ»— Դադաշյանի՝ «Ռուսերէնից հայերէն և Հայերէնից-ուսերէն» բառարանները:

Այս բոլորի պասակն է կազմում «Նոր բառագիրք Հայկագիրան լեզուի» պատկառելի 2 հատորը, որ կազմել են Գ. Ավետիքյանը, Խ. Այուրմելյանը և Մ. Ավգերյանը:

«Հայագիտական» բաժնում ցուցադրված են գլխագորապես Վիեննայի Միհթարյանների «ազգային մատենադարան»—մատենա-

շարքի գրքերը: Այստեղ կան Ա. Ալտընյանի, Ն. Ակինյանի, Հ. Տաշյանի, Հովնանյանի, Մենեկչյանի, Գալեմքեարյանի, Աճապյանի, Ն. Բյուզանդացու, Բ. Սարգսյանի, Կ. Կոստանյանի լեզվաբանական, բանասիրական և պատմական ուսումնասիրությունները, ելքրաբական գիտնականներ Կարիքերի, Հյուշշմանի, Պատերսոնի թարգմանված ուսումնասիրությունները հայերի և հայերենի վերաբերյալ: Հայ տպագիր գրքի պատմության գծով ցուցադրված են Զարբարացին, Դադիկյանի, Թևողիկի, Լևոնյանի աշխատությունները:

Հետաքրքրական է հատկապես «Հայկական հարցին» վերաբերյալ բաժինը: Այստեղ կարելի է գտնել գրականություն թուրքահայ կոտորածների և ընդհանրապես «Հայկական հարց»-ի վերաբերյալ: Ցուցադրված է նաև 1915 թ. հայկական կոտորածների քարտեզը,

Նույնպիսի հետաքրքրություն է ներկայացնում հասարակական-քաղաքական, մանկավարժական, արվեստի, բժշկական, փիլիսոփայական բաժիններում ցուցադրված հարուստ գրականությունը:

Ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական գրականության բաժինը ցուցահանդեսի ամենահետաքրքրական մասերից մեկն է: Դիտողը տեսնում է ողջ Հայ գրականությունը՝ Հ. Քուշակը, Սալյաթ-Նովա, Ալիշան, Նալբանդյան, Բաֆֆի, Շիրվանզադե, Թումանյան, Սունդուկյան, Պարոնյան, Դուրյան, Զոհրապ, Վարուժան... մինչև գլուխագիրներ՝ Զավախեցի, Ճուղուրյան, Բաշյան, Թվկատենցի և հայ աշուղները:

Ոչ պակաս բեղմնավոր է եղել և անցյալի՝ մի թարգմանական գեղարվեստական գրականությունը: Բնագրերից թարգմանվել են Հոմերոս, Վերգիլիոս, Տասոս, Շեքսպիր, Շիլեր, Գյոթե, Տոլստոյ, Խայմա, Ֆիրդուսի, Հարնե, Լամարտին, Գյումա, Շրուցը, Լաֆոնտեն և շատ այլ հեղինակներ:

Ցուցահանդեսի մի այլ բաժնում ցուցադրված է արտասահմանյան հայ գրականությունը: Այստեղ կարելի է գտնել նյու-Յորքի, Երևանակեմի, Վիեննայի, Վենետիկի, Գաճիքի, Թեյրութի, Պուլի, Փարիզի, Բուստի, Աթենքի հրատարակությունները:

Ուշագրավ են արտասահմանյան հայ բանաստեղծների՝ Կ. Սիտալի, Հ. Գույշեմճյանի, Զիթունիկի, Հ. Անտոնյանի, Վարժապետյանի, Կարագյուղյանի, Համբարձումյանի, Լևոն Մեսրոպի գործերը: Գիտական ուսումնասիրություններից ուշագրության արժանի են Գարեգին Ա. կաթողիկոս Հովսեփյանի պատմական և բանասիրական ուսումնասի-

րությունները, Եղիշե Արք. Դուռյանի, Կ. Բասմաճյանի, Ռ. Աբրահամյանի և այլոց ուսումնասիրությունները:

Հայաստանի սովետիկացիան հայ ժողովրդի առաջ գրականության ու կուլտուրայի դարձացման նոր հետամնաց տպարանների և աննշան հրատարակությունների փոխարքեն Սովիտական Հայաստանի մայրաքաղաքը այժմ դարձել է գրականության ու կուլտուրայի խոշորագույն օջախներից մեկը:

Ներկայումս Սովետական Հայաստանում գործում են ավելի քան 50 տպարաններ: Սովետական իշխանության 26 տարիների ընթացքում Հայաստանում լույս է տեսել ավելի քան 10 հազար անուն գիրք՝ մի քանի միլիոն տիրաժով: Բոլոր գրադարանների գրքային ֆոնդի 1946 թվին հասել է 2,600,000-ի:

Ներկայումս կանոնավոր գործող գրադարանների թիվը հասնում է 2,215-ի:

Սովետահայ տպագիր գիրքը դարձել է մասսաների ուսուցման ու դաստիարակման հզորագույն միջոցը: Ցուցահանդեսի երկրորդ խոշոր բաժինը ցուցադրում է հենց սովետահայ տպագիր հարուստ գրականությունը, մարքսիզմ-լենինիզմի կրասիկների երկերի հայերեն թարգմանությունները, մասսայական հրատարակությունները: «Արվեստ» բաժնում ցուցադրված են երաժշտության, նկարչության, ճարտարապետության վերաբերող սովետահայ ողջ հրատարակությունները:

Զափազանց մեծ աշխատանք է կատարել Հայաստանի Պետհրատը հայ կլասիկների վերահրատարակման ասպարեզում: Դրանցից ցուցադրված են Արովանի, Նալբանդյանի, Սունգովյանի, Բաֆֆու, Վարուժանի, Մեծարենցի, Պարոնյանի, Մուրացանի, Օսյանի, Թումանյանի, Խսահակյանի, Շիրլանգաղեթի, Տերյանի, Հովհաննիսյանի, Փափազյանի և այլոց երկերը: Ուշագրավ է նաև «Սասունցի Դավիթ» հորելիանական հրատարակությունը և «Հայ գրականության ընտիր էջեր» անթոլոգիայի հրատարակությունը:

Մեծ տեղ են գրավում սովետահայ գրողների ու բանաստեղծների ստեղծագործությունները: Ցուցադրված են Դեմիրճյանի, Արագու, Գորյանի, Զարենցի, Ն. Զարյանի, Գ. Սարյանի, Ա. Վշտունու, Սիրասի, Հովլ. Շիրազի և շատ ուրիշների գործեր:

Սովետական շրջանի թարգմանական գրականությունը ցուցադրված են Պու-

կինի, Լերմոնտովի, Տոլստոյի, Գրիբոյեդովի, Չերնիշևսկու, Կրիլովի, Շեշենկոյի, Մայակովսկու, Ֆուրմանովի գործերի թարգմանությունները: Եվրոպական գրականությունից՝ Հյուգոյի, Սերվանտեսի, Բալզակի, Ֆլորենտի: Ռոմեն Ռոլանի, Ժյուլ Վենտի, Զեկ Լոնդոնի, Լոնգֆելու, Բարբրուսի և ուրիշ այլ հեղինակների գործերի նոր ու արժեքավոր թարգմանությունները: Շատ մեծ աշխատանքներ են կառարված հայագիտության բնագավառում: Այս բաժնում ցուցադրված են ակադեմիկոսներ՝ Մանանդյանի, Աբեղյանի, Աճառյանի, Ղափանյանի, Տերտերյանի, պրոֆեսորներ՝ և Ամմիկյանի, Պիատրովսկու, Ա. Աբրահամյանի, Ա. Ղարիբյանի պատմական, իզզվաբանական և բանասիրական ուսումնասիրություններն ու աշխատությունները:

«Բառարաններ» բաժնում ցուցադրված է Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ի 7 հատորները, Ստ. Մալխասյանի «Հայերեն բացարարական բառարան»-ի 4 հատորները, ինչպես և Հայաստանում հրատարակված «Ուսումնական հայերեն նոր բառարան»-ը և բազմաթիվ տերմինարաննական բառարանները:

Հայ տպագիր գրքի պատմության ցուցահանդեսը հարուստ է բազմաթիվ հետարրաբրական իլլուստրացիաներով, որոնք պատկերում են մեր հին տպագրական օջախները, միաբանությունները, վանքերը, նշանավոր տպագրիչներին ու գրականության գործիչներին, գրողներին ու բանաստեղծներին:

Երեսնի Ալ. Մյասնիկյանի անվան Պետական Հանրային գրադարանի դիրեկցիան ու ողջ կողեկիրքը պատվով ու շնորհքով են կատարել այս բարդ ստեղծագործական աշխատանքը:

Ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն է առաջացրել Երեսնի ազգաբնակչության մեջ: Բազմահազար այցելուները մեծ գոհունակությամբ են դիտում հայ գրքի այլ հոյակապ ցուցահանդեսը:

Ցուցահանդեսն այցելած մեծանուն բանաստեղծ Ավետիք Բնահակյանը իր տպավորությունների մեջ գրել է «Հայ գիրքը մեր փառքն է, դարերի մեջ մեզ մեզ անուցող հացը»: Ակ. Հր. Աճառյանը ցուցահանդեսը դիտելուց հետո գրել է «Դարեր ամբողջ անցան իմ առջևից: Փա՞ռք մեր նախնյաց, որոնք այնքան տառապանքով այսքան արդիւնք են տիեզեւ: Պատիվ նրանց, որ գնահատեցին նրանց աշխատանքը, կազմակերպելով այս գեղեցիկ ցուցահանդեսը:»

Ցանկացի է, որ նա մշտական թանգարանի վերածվերա:



ԱՏ. ԼԻՍԻՑՅԱՆԻ „ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ“-Ը*

 այ ազգագրության պատմության մեջ, նախքան պլուֆ. Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարան»-ը լույս տեսնելը, մեզ հայտնի է երկու շրջադարձին մոմենտ: Առաջինը 1870-ական թվականներին Գ. Սրվանձտյանի «Գրոց ու Բրոց»-ի հրապարակ գալն է, երկրորդը՝ 80-ական թվականներին Գր. Խալաթյանի «Մրագիրը»:

Մինչև Սրվանձտյանը մեր ազգագրությունը խարիսխումների մեջ էր և պարզապես մինչև այդ մենք խական ազգագրություն էլ չենք ունեցել: Ամեն բան կրել է պատահական բնույթ և սուբեկտիվիզմը նկարագրական ազգագրության բնագավառում եղել է միակ իշխող ձեր:

Գ. Սրվանձտյանն այն վետերանն էր, որ ազգագրությունը գիտական ռելիեֆի վրա դրեց Նրա «Գրոց ու Բրոց»-ը հենց այդ նրա պատահին էր ծառայում իր հրատարակման (1874) օրից մինչև Գ. Խալաթյանի «Մրագիր» հանդես զարու «Գրոց ու Բրոց»-ը ազգագրագետ Սրվանձտյանի ձեռքով դրված այն նախածրագիրն էր, որից, ըստ հեղինակի, սետք է օրինակ վերցնելին ըստոր ազգագրագետները և ֆոլկորիստները՝ Սակայն, 1870 թվականներին հայ իրականության մեջ «Գրոց ու Բրոց»-ը անթերի ծրագիրը լինել չէր կարող, որովհետև նախորդող նման փորձ չկար, իսկ եվրոպական փորձը դեռևս տակալին անձանոթ էր Արևմտահայաստանի ազգագրագետներին: Նրա թերությունն այն էր, որ առաջադրվող հարցերը սիստեմի չէին վերածված և հրամցվող «Հարցարանի» մեջ ի մի էին ձուլվել նաև հեղինակի տրված պատասխանները: Մրագիրն ու նկարագիրը հանդես էին գալիս միաձուլլ կերպով: Այնուամենայնիվ, Հեղինակն իր նպատակին հասավաճ տեսակետից, որ նրան հետևեցին տասնյակ բանահավաքներ և մեկը մյուսի հետևեց

*) Ստ. Լիսիցյան, Ազգագրական հարցարան, Երևան, 1946 թ.

լույս ընծայլեցին բավականին հետաքրքրացարժ ժողովածուներ:

19-րդ դարի վերջերին ազգագրության զարգացման պահանջները խիստ մեծացան հենց Գարեգին Սրվանձտյանի «Գրոց ու Բրոց»-ի և նրա մյուս ժողովածուների, ինչպես նաև նրա անմիջական ազդեցության տակ լույս տեսած այլ նկարագրությունների ազդեցության շնորհիվ: Գ. Սրվանձտյանին ուղղված նամակներից մեկում Գր. Խալաթյանը շէր թագցնում, որ ապագա «Մրագիր» շարժադիմի նրա գործերն էին հանդիսանում:

Բացի Արևմտահայաստանում տեղի ունեցող ազգագրական փորձերից, Արևելահայաստանումն էլ այդ ժամանակները սկսվեցին նույնպիսի փորձեր, սակայն, նմանապես տարերայնորեն:

Այդ տարերայնությունը ներել շէր կարող Սոսկվայի կազարյան ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանն այն պարագայում, երբ նա ականատես էր այն հոյակապ աշխատանքին, որ կատարում էր ևլուպական և ուսական ազգագրությունը, ոչ միայն լույս բնածայելով ազգագրական նկարագրությունները, այլև ուսումնասիրելով և պատմականորեն վերլուծելով աշխարհի շատ ու շատ ազգերի, ինչպես և նախնադարյան վիճակն ապրող ժողովուրդների ու ցեղերի կյանքը՝ ազգագրության միջոցով: Այդ կապակցությամբ 1887-ին Գ. Խալաթյանը Սոսկվայում լույս ընծայեց «Մրագիր» հայ ազգագրության և ազգակին իրավաբանական սովորությունների վերնագրով շատ շահեկան աշխատությունը, որի կատարելապես գիտական բնույթի ծրագիր էր և ժամանակի տեսակետից անփոխարինելի: Այդ ծրագիրն իր կենսունակությունը շկորցքեց մինչև Հայաստանի սովորացումը: Դրանով առաջնորդվում էին գրեթե բոլոր հայ ազգագրագետներն ու բանահավաք ֆոլկորիստները:

Այս «Մրագիրը» Գ. Սրվանձտյանի «Գրոց

ու Թրոց»-ի մի նոր, իսկական գիտական փողոքն էր: Նրա անմիջական ցուցմունքներով ընթացավ 1890-ական թվականներին կազմակերպված «Ազգագրական հանդէս»-ի խրցրագրությունը և հնտագայում Հայ Ազգագրական Ընկերությունը, մեծ ազգագրակետ երկանդ լայալանի գլխավորությամբ: Բազմաթիվ ինտելիգենտներ գյուղական միջավայրերում հաւաթյանի «Մրագրով» առաջնորդվելով դարձան ազգագրության անխոնչ մշշակներ, գրի առան և հավիտենական կորուսից գրեկեցին մեր ժողովրդի մահացման ենթակա հին սովորություններն ու կենցաղը:

Բայց Գ. Խալաթյանը, ինչպես և նրան նախորդ Գ. Սրվանձտյանը ապրելով հասարակական այնպիսի պայմաններում, ինչպիսին էին ոռուսական կիսաճորտափակական և թյուրքական ավատական-ըռնապետական կարգերը ապրող ազգագրագետների պահանջները բավարարել, իրենց հարցարաններով չեն կարող այսօրվա՝ սովետական կարգերը ապրող ազգագրագետների պահանջները բավարարել: Խալաթյանի ժամանակվա ազգագրության բնանած դիրքը այսօր շատ պարագաներում անընդունելի է: Ուստի շատ պատճառաբանված էր ու ժամանակին, եղան Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի հրատարակությունը վերջին լույս տեսավ այժմ միակ նշանավոր հայ ազգագրագետ և գիտության վաստակավոր գործիչ պրոֆ: Ստ. Լիսիցյանի «Ազգագրական հարցարան»-ը:

Այս «Հարցարան»-ը բաղկացած է տասը պլիսավոր բաժիններից՝ անտեսական կենցաղ, նյութական մշակույթ, սոցիալական հարաբերություններ, հավատալիքներ և այլն: Սրտեմագործան տեսակետից այս իրենից ներկայացնում է միանգամայն ժամանակակից գիտական պահանջներին բավարարող հարցարան, որը կազմելու ժամանակ հեղինակը ձեռքի տակ է ունեցել հայկական և ոռուսական ազգագրական մի շարք համապատասխան ծրագրեր ու այլ աղբյուրներ, ինչպես և օգտագործել է իր բազմամյա ազգագրագետի ընդմանավոր ժործը:

Գր. Խալաթյանի «Մրագրի» հրապարակությունը հնտու ամբողջ վաթուն տարի հայ ազգագրագետներն ու այդ ուլղարթյամբ զրադարձ մասնագետները հրապարակի վրա ուրիշ ծրագրի շնորհած տեսելի թաղաքի մասնագետ ազգագրագետների համար Խալաթյանի «Մրագրը» ցյուրին էր օգտագործել, բայց մենք նկարագրական ազգագրության բնագավառում ոչ թե քաղաքի, այլ ամենից առաջ գյուղական այն ինտելիգենտներին ենք պարտական, որոնք ծնվելով և ապրելով ու աշխատելով գյուղական միջավայրում բնակության մեջ առանց այն առաջարկանական տեսակետից, կենդանի կերպով ապրում է մեր ժողովրդի մեջ: Այսպիսի դեպքերում ազգագրական, ազգագրանական ու մարդարանական տիւալներն են, որ պետք է թույլ տան վերծանել առեղջվածային համարլող պեղածո նյութերը: Խոկայստի այս տվյալները ծգրտությամբ գրի առնելի միանգամայն անհնարին կիներ առանց այն առաջնորդող ցուցմունքների, որոնք տրված են պրոֆ: Ստ. Լիսիցյանի «Հարցարան»-ում:

Իրենց հայրենի գավառի ու ընտանիքի նիստու կացին, քան քաղաքից գյուղ գործուղվող ազգագրագետները, որոնք շատ հաճախ Մուրացանի «Առաքյալի» հերոսին են նմանվել:

Բազմաթիվ գավառներում աշխատող հայ ֆոլկորիստ բանահավաքները, ծրագիր լուսնեալով ձեռքի տակ մեծ մասամբ աշխատել են առանց ցուցմունքների: Ուստի թե՛ լույս տեսած և թե՛ ձեռագիր վիճակում գտնվող հավաքածուները իրենց վրա կրում են պատահանության, շտապողականության և անսիստեմության կնիքը: Մեր օրերում եւ թիւ չեն այնպիսիները, որոնք գավառական կյանքի պալմաններում կազմել են ստվար ժողովածուներ. այս ժողովածուները, սակայն, հազիվ կարելի վինի համարել ազգագրական անխառն նյութ: Այստեղ կան վիպական տարրեր, ավելորդ դիալովներ, բանաստեղծական զեղումներ, որոնց մեջ ազգային սովորությունները գրեթե խեղդվում, կորչում են: Արտասահմանում լույս տեսած ազգագրական ու ֆոլկորային ժողովածուները նույնպես կազմված են անսիստեմ: Մրանց մեջ հաճախ նյութերն աղավաղված են և քահանանորդեն փոփոխված:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կազմակերպման օրից պահանջ առաջցավ Պետ. Պատմական թանգարանի ազգագրական բաժնի աշխատողների կազմն ընդլայնել, որովհետև հնագիտության մեջ զանազան մութ հարցերի ճշգրիտ լուսաբանությունը հաճախ մենք գտնում ենք աղգագրական անթիվ ու անհամար նյութեական կուտուրայի այս կամ այն մնացորդը, մինչդեռ նրա այժմէական տիպը, լինի այն արժեստի, արգեստի, տեխնիկայի ու թե մարդարանական տեսակետից, կենդանի կերպով ապրում է մեր ժողովրդի մեջ: Այսպիսի դեպքերում ազգագրական, ազգագրանական ու մարդարանական տիւալներն են, որ պետք է թույլ տան վերծանել առեղջվածային համարլող պեղածո նյութերը: Խոկայստի այս տվյալները ծգրտությամբ գրի առնելի միանգամայն անհնարին կիներ առանց այն առաջնորդող ցուցմունքների, որոնք տրված են պրոֆ: Ստ. Լիսիցյանի «Հարցարան»-ում:

Քննվոր «Հարցարան»-ի արժենքը խիստ բարձր է այն առումով, որ նրա մեջ, ինչպես զրում է պրոֆ. Լիսիցյանը, հակառակ նախորդ ծրագրերի, տեղ են գտել «Այժմէական պայմանները նկատի առնող բաժինները (օ-

րինակ՝ դասակարգային շերտավորման վերաբերյալ) և բազմաթիվ նոր հարցերը (էջ՝ 6): Խոշոր նշանակություն են ստանում կոլխոզային գյուղի նոր կենցաղին ու հայրաբերություններին հատկացված բազմաթիվ հարցերը, որոնց պատասխանները ամփոփ պատկեր կարող են ընձեռել նրա մասին: Հեղինակը «Հարցարան»-ում կոլխոզային կյանքին վերաբերող հարցերը չեն ամփոփել «Հարցարան»-ի մի առանձին գյուտմ, նկատի ունենալով, որ կոլխոզային կենցաղը մեր ժողովրդի նոր կյանքն է, որ այդ նոր կյանքը մի նոր աստիճան է հին հասարակական ֆորմացիայից հետո, ուստի և կոլխոզային կյանքին վերաբերող հարցերը հանդես են գալիս «Հարցարան»-ի ընդհանուր խնդիրների հետ միասին:

«Հարցարան»-ի հեղինակը փորձից փմանալով, որ մեր ժողովրդական հավատալիքները սերտորեն կապակցված են ժողովրդի կյանքի հետ և բխում են նրանից, այս թեմային վերաբերող բազմաթիվ հարցերը կապել է ժողովրդի առօրյա հարաբերությունների հետ: Ճիշտ է, այս բանը չեղ բացառված նաև Գր. Խալաթյանի «Ծրագրում», բայց շափականց քիչ էր և գրեթե թողնված էր մեծ մասամբ բանահավաքների հայեցողության:

Գիտական արժեքի տեսակետից ունալիյանքի մեջ զուգահեռաբար հանդես եկող հավատալիքները վերին աստիճանի հետաքրքրական են: Նրանցով կապելի է միայն բացատրել, թե ի՞նչ շափով վերաբրուկներ ունենք կենցաղային առողջություն նախնադադարյան համայնական կյանքով ապրող մարդու կենցաղից, թե ի՞նչպիսի հետքեր կան անհմիգմից ու տուտեմիզմից և թե ի՞նչ նշանակություն ունի դրանց հասկանալն ընդհանրապես:

«Ազգագրական հարցարան»-ի հրապարակ գալը կարեւոր նշանակություն է ստանում այս օրերին հենց այն պատճառով, որ Սըփյուրի հայերը, ծագումով Հայաստանի բազմաթիվ գավառներից, այժմ տեղափոխվում են Սովետական Հայաստան և ապրում մեր տերիտորիայի վրա: Սրանք իրենց հասուկ նիստ ու կացն ունենալով ընկեր են նորանոր միջավայրեր, որտեղ արագորեն փոփոխվել են սովորությունները, տեղ-տեղ կորցրել են իրենց ազգային դեմքը, փոխարենը վիթքցնելով նոր ապրելավայրերի ժողովուրդներից—հուկներից, արաբներից, բուզարներից, ուղիններից, եգիպտացիներից և այլն նրանց սովորությունները, նիստ ու կացի որոշ կողմերը: Այժմ ամեն մի ազգագրագետի պարտականությունն է՝ առաջնորդմիլով պրոֆ. կի-

սիցյանի «Ազգագրական հարսարան»-ով գրի առնել մեր նորագույն ազգագրությունը, թե Սովետական Հայաստանում և թե Սփյուրում:

Ինչպես նկատելի է, արտասահմանից ներգաղթող հայության մի մասը դեռևս պահպանում է իր ազգային տարրազը: Մեր պարտականությունն է ոչ միայն գրի, առնել այդ տարրազի նկարագիրը, այլև անհրաժեշտ է ձեռք բերել այն ու պահպանել մեր թանգարանում: Այս աշխատանքը կատարելիս ազգագրագիրը բանահավաքները պիտի համոզվին, որ պրոֆ. կիսիցյանի «զգեստ ու գարդարանք» բաժինն իր հարցերով սպասիչ չէ, որ բանահավաքին է մնում դատել այն հարցերի մասին, որոնք բխում են ներկայացված ընդհանուր հարցերից:

Այժմ զգեստն ուսումնասիրելու ամենալավ ժամանակն է, որովհետև ներգաղթող հայերի մեջ ծերերի մոտ պահպանված քիչ թե շատ ազգային տարրազը մեր կարգերում, շատ հասկանալի պատճառով, տեղի է տալու ժամանակակից կրոպականացված տարազին: Եթե մենք գտնում ենք, որ զգեստները պետք է ուսումնասիրվեն այնպիս, որ էվոլյուցիոն շղթայի բոլոր օղակները հնարավորության սահմաններում վերականգնվեն, ապա մենք չենք կարող երևակայել, թե սուկ քաղաքացին զգեստներով կարելի է բավարարվել: Մեզ, ուրեմն, անհրաժեշտ է ունենալ ամենախուզ անկյուններում ապրող ժողովրդի, ինչպես և նորեկ հայերի, ասմենահետամնաց» զգեստներից սկսած մինչև զարգացման ներկա ձևերը հասած զգեստները: Պահեստների (գավառական և կենտրոնական թանգարաններ) համար գուցե ամելի կարելու լինելը գյուղական բրդից պատճառության զգեստների հավաքումն ու պահպանումը, որի վրա նորագույն քաղաքակրթության աղեցությունը համեմատաբար նվազ է:

Ճիշտ այս ձևով պետք է վարպել նաև բնակարանը նկարագրելիս, որովհետև առանց ազգային ճարտարապետության պատմությունն իմանարու, առանց նախնական բնակարանների ձևերի ուրումնասիրման, չի կարող լինել հայ ճարտարապետության ճշգրիտ պատմություն: Բնակարանի ճիշտ, մանրազննին, բոլոր մանրումների նկարագրմամբ, ինչպես նաև նրա հետ կապված բազմապիսի ոպիների ու տնային երեմնի աստվածների ուսումնասիրմամբ: գիտությունն ի վիճակի է մասսամբ հասկանալու մեր ժողովրդի ծագումը, նրա կուլտուրական կայսր ալ և այլ ցեղերի հետ, և այն:

Այս է հետապնդում պրոֆ. կիսիցյանի

Հարցարանը գրեթե բոլոր ուսումնասիրելիք խնդիրների բնագավառներում, թեև նրա մեջ, որտեղ խոսվում է բնակարանի մասին, հեղմակը դարձրալ շատ հարցեր թաղնում է բանահավաքին, նրա մոտ կանխատեսելով աշխատանքի ինքնուրույնությունը:

«Հարցարան»-ում շատ անգամ դժվար է զանազանել, օրինակ «տուն» հասկացողությունը Այնտեղ թեև չի ասված, թե «տուն» ասելով պետք է հասկանալ որոշ գավառներում:

1. ընդհանրապես ամբողջ շենքը, որի հարկի տակ կան ախտոներ, փարախներ, թոնրատներ, օդաներ կամ սաքոներ և այլն,

2. «տուն», «թոնրատուն», «թնդրտուն», «տան տուն»,

3. գերդաստան, («իմ տունս ինձ լսում է մի մարդու պես», «իմ տունս նահապետական է», «մեր պապերի տունը...» և այլն և այլն), բայց բանահավաքը պետք է կուահի, բացահայտի, գտնի այն ամենը, ինչ որ յուրահատուկ է նկարագրվող օրեկտին:

Այսպես պետք է վարկել նաև ռապուան նկարագրելիս (սաքոն Վանում նշանակում է այդքնիքի վրանանման-աշտարականման հովանոց, Ախալքալաքում և այլուր՝ մի տեսակ թախտ, հարակից օդային, որ Ախալցիւայում կոչվում է «սաքի»):

«Հարցարան»-ում շատ քիչ տեղ է հատկացված «գուշակովուներ» բաժնին (էջ՝ 93), որի սահմաններում չի կարելի մնալ: Ազգագրագետ բանահավաքը պետք է այն


ընդամենի, եղներով այն հարցերից, որոնք ծագում են տեղն ու տեղը գրի առնելու ժամանակի:

Սրանով միայն կարելի է հասնել այն նըպատակին, որին ձգտել և ձգտում է հայ ազգագրությունը՝ Սովետական Միության ժողովրդների մեծ ընտանիքում ի ցույց հանելու իր ազգային մեծ ու դարավոր կուտուրան: Այս գործում մեծ անելիքներ ունի մեր գյուղական հնտերիգենցիան, որովհետև նա է մոտ կանգնած մեր գյուղական կյանքին: Մեծ են նաև գավառական թանգարանների անելիքները, որոնք պետք է ստեղծեն ազգագրական բաժիններ և հարցարանի ցուցմունքների համաձայն առաջին հերթին հավաքեն նոր կուլտուրայի ներարշավի շնորհիվ մեր կենցալից դուրս վանվող նյութական կուլտուրայի նմուշները՝ ամաններ, զըգեստներ, զարդեր, ծեռագործներ, զանազան արհեստներին վերաբերող գործիքներ ու նյութեր, ձիասարքեր, երկրագործական գործիքներ և այլն:

Բանահավաքները պետք է զարկ տան հայ հին ու նոր ֆոլկլորի հավաքման գործին, առաջնորդվելով պրոֆ. Լիսիցյանի հարցարանի համապատասխան ցուցմունքներով:

Սրանով մենք կատարած կլինինք «Հարցարան»-ի ծերունագարդ, բազմավաստակ գիտնական, պրոֆեսոր Ստեփան Լիսիցյանի բաղձանքը և հայ ազգագրության պահանջը:

Վ. ԲԴՈՅԱՆ



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԴԻՄԻՏՐԵՎԸ ԽՈՍԽԻՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՇՈՒՐԶ



երջերս, խոսելով Սոֆիայում,
Դիմիտրին անդրադարձավ
Հայկական պահանջներին։ Տա-
շով հայ ժողովրդի ամփոփ
պատմությունը, նա Հայտարարեց։

«Պետք է պարտադրել թուրք կառավա-
րությանը, որպեսզի Հայերին վերադարձնի
Հայկական բողոք նահանգները, և ոչ թե
միայն Կարսն ու Արգարանը։ Հայկական
բողոք նահանգները պիտի կցվեն Սովետա-
կան Հայաստանին, որպեսզի Թուրքիայում
և պրտաստահմանամ դառնվող հայերը նա-
րարություն ունենան վերադառնալու
հայրենիք։»

«Առաջին համաշխարհային պատերազմի
ընթացքում, դաշնակիցները չկարողացան,
կամ ամելի ճիշտը չուզեցին հայերին վե-
րադարձնել Թուրքիայի լծի տակ գտնվող
Հայկական հողերը, հակառակ հայ ժողովր-
դի ցացարերած հսկայական դռնողություն-
ների։»

«Երկրորդ համաշխարհային պատերազմի

ընթացքում, հայերը լայն կերպով մասնակ-
ցեցին դաշնակիցների հաղթանակին ընդդեմ
հիտլերականության և ֆաշիզմի։ Սովետա-
կան Հայաստանը տվեց Կարմիր Բանակին
իր լավագույն դավակները — 50 զորավար և
քառորդ միլիոն դժոնվոր։ Ամերիկա, Ֆրանսիա
և այլ Դաշնակից երկրներում դառնվող հա-
յերը մեծ մասամբ գորակուշի ենթարկվեցին։

«Մինչդեռ Թուրքիան, Գերմանիայի կող-
քին կռվեց առաջին պատերազմի ընթաց-
քում, իսկ երկրորդ պատերազմին չեզոքի
դիմակի տակ համակիր էր Հիտլերական
Գերմանիային և երբ առիթ ներկայանալը
նա չէր վարանի արշավել Սովետական
Միության և Հայաստանի վրա։»

«Ուրեմն հասել է ժամանակը, որ հայ
ժողովուրդը դուացում ստանա իր պահանջ-
ներին։ Միացյալ Ազգերի Ապահովության
և որոշուրդը պետք է արդար և անմիջական
լուծում տա Հայկական խնդրին։»

(«Հերածնունդ» նոկտեմբեր 11, 1946 թ.)

ՄՈՒՀԻՏՏԻՆ ՆՈՒՐԻ

Ա Ռ Ա Զ Ի Ն Կ Ա Ր Ա Վ Ա Ն Ը

Մոմիտոին նուրիի գերզայուն գրչեն իլած «Առաջին կարավանը» ներշնչված է
Հայերեն դեակի Սովետական Մայր Հայաստան մեկնող հայ գաղթականներու Ա կարա-
վանեն, երբ Մոհաֆրզ Պելը, լիազօր պատվիրակները, Առաջնորդ Հայր Սուրբ, հայա-
նա, հայեր, ներզարողներ և ողջերի գացող բազմահազար հայ և արաք եղբայր-
ներ այցելեցին Առաջին ազատացրույան ռահվիրա հանդիմ Պել Հանանոյի
շիրիմը։

Ի՞նչ ծովածակալ բազմություն մարդոց...
ծաղկեփունջերով ծանրաբեռնված։

— Ու՞ս կ'երթան անոնք։

— Շրջապատելու դամբարանն ազգային
հերոս Հանանոյին։ Անոնք կզարդարեն չի-

րիմը բուրումնավետ ծաղիկներով ու բարձ-
րազաղակ ու լիաշուրմին կ'ոգեկոչեն հիշա-
տակը հայրենասեր Մեծ Հերոակին՝ սրտա-
բուխ, անկեղծ ու հարգալիր ողջույններով։
Անոնք զավակներն են Սուրբո, ու կմերա-

դառնան իրենց հնադարյան ու պատմական Հայրենիքը՝ որուն կապված են կարուտի, արցունքի և արյունի կապերով:

Անոնք, բաժնվելի առաջ այս հողեն, որտես տառացան սնումնին իրենց ֆիզիկական ու հոգիկան, ուր կերտեցին լույս կրազնիք հայրենական, հարգանքի իրենց տուրքը կուտան մատուցանել զամբանին առջև այս Մեծ Մարդուն, որ խորհրդանշիշն եղավ աղդամին ազատագրական պայքարներուն ու Մեծ Պաշտպանն Հայրենիքին:

Եվ իրենց պիս ու իրենց շափ, ո՞վ կարող է գնահատել ու հասկնալ վեհությունն ու մեծությունը բարդ անոնց, որոնք ինկան հերոսաբար, Հայրենիքի փառքին համար: Չէ՞ որ անոնք, ուր որ գացին ու գաղթեցին, Հայրենիքի սերն անաղագի՞ դիտցան պահել վառ ու անմաշ, իրենց սրտին ու հոգիու մեջ միշտ ծրաբած:

Այս ոգեւոր ամբոխներուն ժպիտին մեջ, ես կտեսնեմ վիշտ մը խորունկ ու համակող ու իրենց խնդրուքն արցունքներով է թրցված, որովհետև անոնք սիրելի Հայրենիքի մը կը հեռանան, երազներու Հայրենիքը ողջունելու, կրածնվին, իրենց անկեղծ ու սրտակից բարեկամներեն՝ կարոտակեց արենակիցներ վերապնելու Արցունք կա անոնց աշբերուն մեջ ու հոգվույն մեջ թալսիծ անհուն... ու հետապարձ նայվածքներով խորասույց, վերցին անգամ կդիտեն հողն օրհնաբեր, որ տվավ իրենց ավիշ ու կյանք ու ապրումներ, ուր մանկություն մ' անդորր, խաղաղ կյանք ու աշխատանք վայելեցին ապահով, ուր

սրտերն իրենց բարախեցին ու թոթուացին զգացումներու բաղմապիսի լարերով:

Այս օրն, ուր, ո՞վ հեռացող եղբայրներ, ձեզմե միայն հիշատակներ պիտի մնան, մի՛ մունաք, մի՛ մոռնաք, որ տակավին, ձեզի համար կարուակեզ սրտեր անվերջ պիտի բարախին, ձեր սրտերու բարախումին կը ռուցնով:

Այս, որբան պիտի փափաքի սեղմեն ձեռքը յուրաքանչյուր մեկնողի, ողջագուրինի, ու կուրծքն անոր սեղմել կուրծքիս հրատաշոր...

... Ու ծառին տակ այս մենավոր, հուզումներու անձնատուր, արցունքներ հորդ կուսին՝ զորս անկարող ևմ զապելու:

Զեռքս՝ անծանոթ ուժե մը պրկված, խանդագին կրածքանա, ո՞վ հեռացող ու սիրելի եղբայրներ, ողջերին անկեղծ մաղթանքներով:

Ողջե՞րթ, ողջե՞րթ, ո՞վ սրտակից բարեկամներ, ու բարի՛, հազա՞ր բարի ճանապարհ, զեպի փառավոր ու լուսազող Հայրենիքը ձեր բազմաթեմ կյանք մը խալազ ու երջանիկ ձեր բոլորին, ձեր զավակներուն ու թոռներուն, ինչպես նաև զալիք սերունդներուն:

Պիտի պահենք մեր սրտին մեջ հիշատակը, որ ձեզմե մեզի կմնա. պիտի պահենք զայն անաղարտ, մի՛ շտ, մի՛ շտ, մի՛ շտ...

Արարերենն բարզմ. Պերձ ՍՍՊՊԱՂՅԱՆ («Եփրատ» թիվ 2791, 1946 թ.)

ԱԼՃԵՐԸՆ ՊԼԵՔ

P E T I T I O N T O T H E U N O*

Պրեն. Պլեք Հայ Խրավանց Պաշտպանուրյան Ամերիկյան Հաճճախումբի անդամներն մին է, Սոսայրի Ֆոր երիշլ Քըլշըր Ընկերուրյան առաջնորդը Նյու-Յորքի մեջ, և շատ գործն դեր կկատարե հաղանական և ընկերային բարեկաման շարժումներու և հարցերու մեջ:

Միացյալ Ազգաց Կազմակերպության Համաժողովը, որ գումարսկեցաւ լուստոնի մեջ, ստացած է բաշմաթիվ պատգամներու այս շարթվան ընթացքին: Ոմանք կվերաբերին միջադարյան սպառապինման և Հայութեական ոռումբի գործածության: Եվ ոմանք, ալ կշռշափին մասնավոր ժողովուրդներու կենաց հանգամանքը, որոնք կը մերժեն որ այժմ հարմար ժամանակն է մարդկության խղճին դիմելու: Մարդիկ իրավամբ կնային Միաց-

յալ Ազգաց Կազմակերպության վրա, որպես պաշտպանության և դիմումի համաշխարհային կեզրու մը, իբրև ապրյուր մը արդարության և կարեկցության:

Ժողովուրդը մը, որ թվով շատ փոքր է, մոտափորապես շորս միիհոն, դիմում կատարած ըլայում անոր, ոմանք անկարենոր պիտի գտնեն: Բայց մենք ըստած չենք, որ ամեն մարդ, կին, երեխա կարևորություն ունի, թե ամեն ժողովուրդ պետք է պաշտպանվի, նկատողության արժանանա և զնահատի:

Կիսումիմ ժողովրդի մը մասին, որ երբեմն

*) Սույն ուղերձը հազորդված է Միացյալ Նահանգներու բազմաթիվ ուղերձակայանների:

ուներ պատմական և ավանդական արժատական ներ, մշակութային և հոգեկան հայրենիք մը Կիսուիմ Հայոց մասին:

Հայաստան երկիր մըն է, որ կանվի Սև և Կառավից ծովերու միջև: Ան բերդի երկիր մըն է պատուներու և բրնձի, բամբակի և ծխախոտի, անտառներու և արջառներու և պղնձի: Արգասավոր ձորերու երկիր մըն է: Դարպաս մըն է Արևելքի և Արևմուտքի միջև, — ընդմեջ Պարսկական ծոցին, Հնդկական օվկիանոսին և Միջերկրական ծովունավաճանգիստներուն: Երկիր մըն է, ուր Եվրոպա և Ասիա իրարու կմիանան, և ուր կայսրություններ մաքառած են ի խնդիր տիրակալության, ասպատակած են անոր ժողովորդը, թողելով մոխիրներու ավերակներ և բեկորներ, անոթություն, գերություն և մահ:

Հայաստան առ նվազն 3500 տարվան պատմություն մը ունի: Քանինքոն Քրիստոսի առաջ 401 թվականին այս երկրեն անցած է: Մեծն Աղեքսանդր՝ Քրիստոսի 331 տարի առաջ, գրավեց զայն Պարսկական կայսրութենեն: Հոռվմացեցիք նվաճեցին զայն: Բայց հայեր շարունակ անկախության և ազատության ժամանակաշրջաններ ունեցան: Ան առաջին առգն է եղած, որ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած է 303 թվան: Երկիրը արշավոր ասպատակներու կարգեն են արարներ, պարտիկներ, բյուրտներ, մոնկոններ և թուրքեր: Վերջնագույն դարուն մեջ ցարական թուսիան և Թրքական կայսրությունը տիրապետության ներքո հայերը չեղացին և կրոնական հալածանքներու երթարկված են, — հարստացարություն, հափշտակություն, խտրողական հարկանություն, և վերջապես, — կոտրած և տեղահանություն: 1894—1896-ի կոտորածներու բնթացքին առավել քան 300.000 հայեր բնաջնջվեցան: 1909-ին անոնք դարձյալ առաջնական երիտասարդ թուրքերու վարչաձևելներու 1915 մինչև 1916, երբ թուրքերը տարակուսեցան անոնց հավատարմության վրա, և եղբ Դաշնակիցները իրենց պատերազմական նպատակները հայտնեցին, ըստ Դերկոմս Պրայսի, միլիոնի մը մոտ հայեր չարդվեցան: Հատուցությամբ կմոռնանք: Մերունդ մը առաջ, ամերիկացիք մեծապես հողավեցան հայոց կաֆութենեն: Այս իրողությունները կրնանք քաղել հրիտանական Համայնագիտարաններն և կամ Փոքր Ասիր որևէ արժանահարացաւական նպատակ կամ կապահանդիսական մը: Ասոնք ադամ և ամոթալի պատկերի մը մասն են, թե ինչպես մարդիկ կվարվին իրարու հետ: Ըլլա-

լով փոքր ժողովուրդ մը, ո՞չ այնքան հզոր ուժգնորեն դիմադրելու, և ո՞չ ալ բավականաշափի հարուստ՝ իր անկախությունը դնելու փոխարինացար բան մը տալով, և ո՞չ ալ ըստ բավականի ծանոթ, որպեսզի Դաշնակիցներու և իր դրացիներու սրափի դիմեր, այս պատճառով անիկա անսասելիորեն տառապած է:

Այս աշխարհիս մեջ փոքր ազգերու համար ապահովություն չկար: Ոչ մեկ ժողովրդի գոյության իրավունքը ապահովուած էր, մանկանց ոչ մեկ սեփառնդ կարող էր մեծանալ առանց ականատես ըլլարու բարբարու անգության և բանության՝ այնպիսի բաներու համար, որոնք նվիրագործված էին իրենց հայրերու կողմե:

Եթե ակնարկ մը տանք իրանացիներուն և կամ ճամփացիներուն, կորեացիներուն կամ եթովպահցվող, որևէ տեղի փոքր ազգության մը, հարդ հարուցված չէ, թե ո՞նչնշաբես կրնանք արդարություն ի գարծ դիել այս ժողովրդոց համար: Ի՞նչպես կրնանք հաստատել ապահովության դրություն մը, որուն մեջ ամեն ժողովուրդ ապահովություն գտնեա: Բայց առավելապես հարց եղած է, թե ո՞նչնշաբես պիտի նպաստե մեր ազգի գորության կամ մեր կայսրության: Թե ի՞նչպես մեր հարաբերությունները պիտի ազդվին մեր թշնամություն՝ Ֆրանսիայի կամ Ռուսիո կամ Թուրքիո և կամ Ճապոնի վերաբերմամբ:

Քիրու ուժի բաղաքանությունը պատուհասած է հայերը, որով ելքուրպական և ասիսկան պետությունները սակարկած և պայքարած են իրարու հետ, գործածելով հայ ժողովուրդը իրբե գրավ: Քաղաքակիրք մարդու պատմության մեջ ասիկա անարդար մըն է: Ասիկա տիսուր մեկնաբանություն մըն է թե քրիստոնյա և թե մահմեդական ազգեցության վրա, և միայն նորհրդալին Միությունը իրավացի և քաղաքականապես փափաքելի և ողջմիտ նկատած է, այս ժողովուրդին տալու հովի պատառ մը, ապահովություն և մշակութային ինքնուրիտիւն, և դաստիարակություն, աճման ու հառաջիմության միջոցները: 1920-ին, երբ հազիկ երկրամաս մը խոստացված էր, թուրքերը դարձյալ հարձակեցան և ահա այս միջոցնին էր որ նորհրդապային Հայաստան հիմնարկվեցավ:

Նորհրդապային Հայաստան իրավես նպաստած է հայ ժողովուրդի կյանքին: Ան վայելած է Սովետական Միության պաշտպանությունը: Նույնիսկ անոնք, որոնք կրնանադատեն համայնավարությունը, կրնդոմին զայն: Սովետ դրության մեջ ապահովուած են զանազան ժողովուրդներու, մեծ և փոքր, սե-

փական լեզվի գործածությունը, անոնդ դպրոցները. կրթության քաջալեռությունը ու միայն պիտի զարգացնե երիտասարդ և բնիկ առաջնորդներու ձիրքերը, այլ նաև քաղաքական պատասխանատվությունը տեղային կառավարության գործին մեջ,— և փոխադրարձ օգնություն՝ փոխադրության և տնտեսական փոխանակության գործերու մեջ; 1920-ին ի վեր, հայեր այս հանրապետության մեջ վայելած են մշակությալին ինքնալարություն:

Սակայն ասիկա չի լուծեր միշագույն հարցը: Այսօր, ավելի քան մեկ միլիոն հայեր ցան ու ցիր եղած են ամբողջ Եվրոպայի և Փոքր Ասիր մեջ,— Իրանի, Իրաքի, Սուրբու, Լիբանանի, Եգիպտոսի, Պուլզարիո, Հունաստանի, Ֆրանսայի և Ամերիկայի մեջ: Անոնք տարագրյալներ են, որոնք տառապած են անոթությամբ, աղքատությամբ, հիգինդությամբ, հարստահարությամբ, հափշտակությամբ և կոտորածով: Անոնք ճաշակած են քաղաքական իրավանց զրության և ամեն տեսակ հալածանք: Ի հենուկս այս ամենուն, անոնք վերապրած են:

Տրամաբանական չէ՝ անոնց համար սպասել և պահանջել, որ հին անիրավությունները ուղղվին և նոր կարգադրությունն ըլլա իրենց համար: Անոտարակույս Միացյալ Ազգաց Կազմակերպության պատասխանատվությունն է նվասի առնել՝ որ ժողովուրդ մը կարենա այս աշխարհին վասարեղանության մը ունենալ, որ նվիրականացած է իր անցյալով, նշանակալից դարձած իր պատմությամբ և իրագործություններով, տե՛ղ մը, ուր ամեն ինչ հարազատ ըլլալով իր հոգեկան և մշակութային կյանքին, կարողանա բնական աճման և արտադրության բարիքները վայելել: Հայոց հանգամանքին մեջ, գոնե կարեի է մեկուսացնել այն վայրերը, ուր որ ավանդական և պատմական տարածությունն ու սահմանները հստակ են: Եվ ուր բնակիչները կխոնվին, կարող են գաղթել սահմաններեն անդին, — մասնավորապես ուր հողը, պատմությունն ու բնակչությունը կմատնանշեն որ Հայկական է, — և ուր իշխող ազդին կարեի չէ վստահիլ, որ ուղղամտությամբ վարվի հայ փորածանության հետ:

Հայեր կուգեն հայրենիք մը, որ ըստ բավականի հզոր ըլլա, որպեսզի կարենան երաշխավորել իրենց սերունդներու, իրենց սեփական ձիրքերու և մշակութային կյանքի վերապրումը: Ժողովրդապետությունը մը կուզեն, թեև փոքր, բայց ատակ՝ ժողովրդավար աշխարհի մը մեծագույն կառուցվածքին մասը կազմելու: Պատրաստ են պա-

տասխանատվություն մը տանձնելու միշաղային ապահովության, տնտեսական և մշակութային փոխանակության նոր գործության մը մեց: Անոնց ազգայնականությունը նեղմիւ կամ չենուասական չէ: Ազգայնամու կամ զինվորապաշտ չէ: Իրենց երկիրը սիրելով հանդերձ անոնք կարիք չեն զգար ուրիշներու վրա վերակայություն հաստատելու: Եվ ոչ այ պիտք կզգան ուրիշները ատելու: Այս ոգին է, որ կմզկ Ամերիկայի համբարը ի մի գալու և իրենց դառը հարիադրելու: Միացյալ Ազգաց Կազմակերպության:

Հայ ծագումով բազմաթիվ հայեր կան, սրոնք մտադիր են Ամերիկայի մեջ ապրելու: Անոնք մեծ տպագա մը կնախատեսեն Ամերիկայի համայնքագիւ կամաց անոր մասնակցիւ. անոնք կիփաքին, որ իշենց զավակները մեծնան և ընդունակ ըլլան վայելելու անոր ժառանգությունը և հարստացնելու հասարակական կյանքը, որուն մաս կիազմեն: Պատշաճ է, որ հայերը սովորեցնեն իրենց զավակներուն հայրերու ժառանգության բարեմասնությունը, պարծելու ապահովությունը, սովորենությունը, հալածանքներեն վերապրելու և նոր Աշխարհին մեջ հաստատվելու:

Առժամանակ տարագրության մեջ ապրող հայերը, և հայկական ծագումով ամերիկացիները, ընդամենը 200,000 հոգի, որ այժմ կապրին Միացյալ Նահանգաց և Քանատայի մեջ, ունին որոշ պատասխանատվություններ այն երկրներին և այն մարդոց հանդեպ, որոնցին սերած են, ինչպես նաև այն ազգին հանգեպ, որուն մեկ մատն են: Այդ պատասխանատվության և պարտականության անունով անոնք իրենց պարտականությունը կատարեցին: Ամերիկահայ Ազգային Խորհրդուրը և Հայ իրավանց Պաշտպանության Հանձնախումբը խոսելով միլիոններու անունով, որոնք ցրված են աշխարհի ամեն կողմի, ինդրադրիներին մատուցին Միացյալ Ազգաց Կազմակերպության: Անոնք հիշեցուցին Միացյալ Ազգաց Կազմակերպության իրենց պատմությունը և տվյալատանքները, իրենց հավատարմությունը ուղղվագրապահության գատին հանդիպաշտական և երկրորդ համաշխարհային պատերազմներու, առաջին համաշխարհային պատերազմին պատերազմիներու, իրենց կրած տառապանքները թուրքերեն, որոնք անվա-

նապես շեղոք մնացին և սակայն Համագործակցեցան ֆաշիստներուն հետ: Անոնք մատնանշեցին թուրքիո տիրապետության լնթակա երկիրներու մեջ այն ոչ-դեմոկրատիկ դավադրությունները, որոնցը ովզ զլացված է իրենց ապահովություն և քաղաքացիական իրավունքները, թույլ տալով թուրքերուն, որ վերադառնան այն շրջանները, որոնք ի սկզբանն Հայաստանի մասն ըլլալով խոստացված էր անոնց, և թուրքիրե գրավիայ երկիրներու մեջ հաւոց դեմ ի դրծ դրված իսլամական դավերը:

«Մենք, ներկայացուցիչներս, երկրագնողի դանագան մասերու մեջ ցիր ու ցան մեկ միջնորդ ամենի հայ ապաստանյալներուն, կիմնդրինք Զեր բարձրութենեն, որպես միջնորդ պարտուածուած միջոցները, Սովոր Հայաստանի վերադարձնելու թուրքիո կողմե գրավյալ Հայկական Նահանգները, գեթ ամ հողամասերը, որոնք պարունակված էին նախագարեանի հիմնական կողմե գծված սահմաններուն մեջ, և անոնց վրա վերաբանակեցներու երկրագնորդի վրա ցան ու ցիր մեր տարադիր Հայրենակիցներո...»:

«Թաղում երկիրներու մեջ հայք տակալին ապաստանյալներու փոյսավիճակ ունին, կներկայացնեն միջազգային հարց մը և ծանրորեն կճնշեն քաղաքակիրթ աշխարհի խիղճը: Արդարության պահանջ մըն է, որ անոնք վերաբանակեցվին աղտառության և ապահովության պայմաններու մեջ: Հմուտ անձինք ամենուրեք կհավատան, որ առապայմանները կարելի է իրագործել՝ միացնելով թուրքիայի գողմե գրավյալ Հայկական Նահանգները Սովետ Հայաստանի հետ, ուր քանի հինգ տարվան կարծառել ժամանակի մը մեջ ազգ մը փրկված է բնաշնորհան անդունդին, և ուր տնտեսական, ընկերային և մշա-

կութային վերազարթնում մը Հառաջացած է, որ եղական է հայ պատմության մեջ»:

Ի՞նչ կխորհիք այս դիմումի մասին: Բազում ամերիկացիներ աննկատ կընեն Հայոց դատը: Փոքր ժաղովուրդ մըն են, փոքր թվով: Բազում ամերիկացիներ նախադաշտումներ ունին, այսօրինակ զանազան հեռանկարներով ժողովրդի մը գեմ, որոն պատմութենեն, բնութիւննեն և հարցերեն անտեղյակ ենք:

Սակայն, եթե կհավատանք ժողովրդավար ընկերության մը և խաղաղ աշխարհի մը, պետք է ճանշնանք, որ ամեն փոքր ազգ մտահոգություն մը կպատճառե: Ամեն մեկ արգի մեծամասնության համար հրամայական է, որ ամեն մարդ ապահով և ազատ ըլլա իրարականի դրամակամք մը: Միացյալ Ազգաց Կազմակերպության փորձաքարը կկայանա այս փոքր ազգերու հարցերուն նկատմամբ անոր ցուցանանած վերաբերումին մեջ: Մեր պատվիրակներու փորձանիշը, անոնք իմաստությունը, անվեհերությունը և դիվանագիտությունը կկայանան նաև այս տեսակ հարցերու զեկավարության մեջ: Սակայն լուսունի մեջ գումարված Խորհրդաժողովի մեր պատվիրակներուն վրա չի ծանրանար ամբողջ պատասխանատվությունը: Ինչ որ կընեն, փոփոխութիւն կախումն ունի մեզմեն: Ընդունակ ենք ազտառության, Ընդունակ ենք իսաղաղության: Ցույց տանք մեր արժանավորությունը, ու Միացյալ Նահանգաց և աշխարհի գիտակցությունը իրականացնենք Միացյալ Ազգաց Կազմակերպության միջոցով, որ խաղաղության և արդարության մեր նորագույն գործակալությունն (*):

Թարգմ. Եղիշե Տեղական
(«Գրաբեր» թիվ 106, 1946 թ.)

ՆԵՐԳԱՂԵՒ ՀԵՏՔԵՐՈՎ

Ել ՀԱՎԱՏԻՍԻ-ի մեջ կկարդանք. սեփականութիւն ել Ահրամ թերթեն առնված լուր մը, ըստ որուն Գահիրեի, Ներդաղթի կոմիտեի անդամներեն մեկը Հայտարարություն մը ընկով ել ԱՀՐԱՄ-ի թղթակցին, ըստ է թե Սովորու և կիբանանի 170 հազար Հայերուն 135 հազարը, իսկ Պաղեստինի 15 հազար հայության 12 հազարը, արդեն արձանագրված են ու կիֆափաքին Սովետական Հայաստան վերադառնալ:

Մեկնի փափաքողներուն մեջ կա կարելոր թիվ մը բարեկեցիկներու, որոնք հայրենասիրութենե ատրված էն որոշած հն հեռանալու արար

Միշին Արևելքի երկրներեն հաստատվելու համար իրենց Մայր Հայրենիքին մեջ:

Հայրենիքի հանդեպ այս կարուտի զգացումներեն զատ ո՛չ մեկ պատճառ պիտի մղեր զիրենք հեռանալու արար երկրներեն, ուր տարիների ի վեր գտած են եղբայրական և բարեկամական անկեղծ ընդունելություն մը»:

(«Եփրատ» թիվ 2767, 1946 թ., Հալեպ)

(*) Տպագրվում է որոշ կրթառումներով:
ԽՄԲԱԿԲ.



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀԱՀՈՒԹՅԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ առաջին գումարման Գերագույն Սովետի լիազորություններն ավարտվելու կատակեցոթյամբ, «Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների կանոնադրության» 62-րդ հոդվածի հիման վրա Հայկական Սովետական Սոցիալիստական Բնապուրահիկայի Գերագույն Սովետի նախագահությունը որոշում է.

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունները նշանակել 1947 թվի փետրվարի 9-ին՝ կիրակի օրը:

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահուրյան նախագահ՝ Մ. ՊԱՊՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահուրյան

Քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

28 Հունվարի 1946 թ.

բաղ. երեկոն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀԱՀՈՒԹՅԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների կանոնադրության» 35-րդ և 36-րդ հոդվածների հիման վրա հաստատել Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ կազմված հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների հետեւյալ ներկայացուցիչներից.

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ՝ Միքայել Գալստի Թումանյան ուսապուրիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական հիմնարկությունների աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Արտաշես Սարգսի Մատինյան—Երևանի Զերժինսկու անվան գործարանի բանվարների, ծառայողների և ինժեներաստեխնիկական աշխատաղների կողմից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար՝ Նիկոլայ Պավլովիչ Շերակով—ուսապուրիկայի Քաղաքացավորական հիմնարկությունների աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներ՝

Գուրգեն Թադոսի Ղազանշան — Երևանի գյուղգործիքների գործարանի բանվորների, ժառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների կողմից:

Վարդուշ Տիգրանի Նալչաջյան — ուսապուրիկայի լրիվ միջնակառակ և միջնակառակ պարոցների աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Ռուբեն Ղազարի Հակոբյան — ուսապուրիկայի Խճուղային և հիդրոտեխնիկական շինարարության աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Գեղամ Բագրատի Ալեքյան — Լենինյան Կոմունիստական Երիտասարդության Միության կողմից:

Աշխեն Տիգրանի Խշանյան — ուսապուրիկայի Պետհիմնարկությունների պրոֆեսիոնալ միության կողմից:

Մամեդ Սալմանիկի Խսկենդերով — ուսապուրիկայի Քաղուսավորական հիմնարկությունների աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Ժենյա Բաղիջի Եղիազարյան — Սիսիանի շրջանի Ուղղ գյուղի «Կարմիր նոյեմբեր» կուլտուրի կողմանինիների կողմից:

Սովուն Մելիքնի Հարուրյունյան (Արագի) — Հայաստանի Սովետական գրողների միության կողմից:

Անդրանիկ Միսակի Խաչարյան — Լենինականի շոգեքարշային տնտեսության չորրորդ բաժանմունքի բանվորների, ժառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների կողմից:

Գևորգ Վարդանի Գյոլեցյան — Ա գորամասի զինծառայողների կողմից:

Երևան Սմբատի Ղարիբյան — Նոր Բայազետի շրջանի Սարուկան գյուղի Բերիայի ամփան կողմանի կողմանիների կողմից:

Վաղինակ Թևոսի Գուրգենյան — ՄՏ կայանների և Հողային օրգանների աշխատողների պրոֆեսիոնալ միության կողմից:

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության նախագահ՝ Մ. ՊԱՊՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության

Քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

6 դեկտեմբերի 1946 թ.

բաղ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐ

Մի տարի առաջ ՍՍՌՄ կառավարությունը արտասահմանում ապրող հայերին թույլ տվեց վերադառնալու իրենց Հայրենիքը՝ Սովետական Հայաստան։ Այս տարրվա սկզբից արդեն սկսվեց ներդադիմունների առաջին խմբերի ժամանումը։ Ամառը և աշուննը, համարյա թե ամեն օր, նաև բոլով ու երկաթուղով Բաթումինի կամ սահմանակից ջուկքա կայարանին վրայով Սովետական Հայաստան էին ժամանում Ելրոպայի և Մերձավոր Արևելքի զանազան երկրներից ներդադիմունների նորանոր խմբեր։

Ամառվա ընթացքում Սովետական Հայաստան են ներդադիմել Սիրիայից և Լիբանից մոտ 20 հազար հոգի, իսկ Իրանից՝ ավելի քան 20 հազար հոգի։ Հայրենիք են վերադարձել երկար տարիներ Բալկանյան երկրներում՝ Ռումինիայում, Բուլղարիայում, Հունաստանում ապաստանում գտած շատ հայեր։ Ներդադիմունների թիվը նշանակալի կերպով գերազանցում է 1946 թվա-

կանի համար նախատեսված թվին։ Ընթացիկ տարում արտասահմանից Սովետական Հայաստան վերադարձած հայերի ընդհանուր թիվն է՝ 51.000։

Ներդադիմունների մեջ կան շատ գյուղացիներ, կառուցող բանվորներ, մետաղագործներ, տեքստիլագործներ, զանազան արհեստի տեր անձններ և ինտելիգենցիա։

Աշխատումակ բոլոր անձններ, առանց բացառության տեղավորվել են աշխատանքի՝ ըստ իրենց մասնագիտության, թե՛ արդյունաբերության մեջ և թե՛ գյուղատնտեսությունում։ Այդ հնարավոր էր անել միայն սովետական երկրում, որտեղ Սովետական Կոնստիտուցիոն ամեն մի սովետական քաղաքացու վերապահված է, աշխատանքի իրավունքը։

Լենինականում, էջմիածնում և աղուր նորիկ արհեստավորների համար կազմակերպվել են կարուղների, փոխադրուների, ուկերիչների և մետաղագործների արտել-

ներ: Բուզոր արտեղներին տրամադրված են արտադրական շենքեր և արտեղներն արդեն աշխատանքի են անցել:

Հագարավոր ընտանիքներ՝ ըստ իրենց ցանկության ընդունվել են կոլխոզների մեջ: Նոր կողմուղնիւնները եռանդով աշխատում են կոլխոզներում: Էջմիածնի, Արտաշատի, Ախուրյանի և յոյա շրջաններում կազմակերպվել են խմբակներ, որտեղ նորեկներն ուսումնասիրում են գյուղատնտեսական արտեխիստական կանոնադրությունը: Նորին երիտասարդների մի խումբ սովորում է տրակտորիստների դասընթացներում:

Սովետական կառավարությունը ամեն տեսակի օգնություն է ցույց տալիս նորեկներին իրենց տնտեսությունը կազմակերպելու գործում:

Ամենակարիքավորներին տրվում է Հագուստ, վառելիք և տնային իրեր: Դպրոցական հասակ ունեցող բոլոր երեխաներն ընդգրկվել են դպրոցներում: Նվազաց գերակշռական մասն առաջին անգամն է Հնարավորություն ստանում ուսումնասիրելու մայրենի լեզուն ու գրականությունը: 600 պատանիներ ընդունվել են արհեստավորական և ֆաբրիկա-գործարանային տևառմարտաներուց: Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական Համալսարան, Պոլիտեխնիկ ինստիտուտ, Կոնսերվատորիա և Երևանի մյուս բարձրագույն դպրոցներն են ընդունվել հարյուրավոր նորեկ սովորողներ:

Տար տարի առաջ ոեսպութիկայում

փակվել էին անպատճիտության վերացման կայանները, քանի որ նրանց կարիքն այլիս չեր զգացվում: Հայրենիք վերադարձած հայերի մեջ կան շատ անդրագետներ, նրանց համար կարիք եղավ նորից բաց անել այդ կայանները և կազմակերպել գիշերանին հանրակրթական դպրոցներ:

Ներկայում Սովետական Հայաստանը պատրաստություններ է տեսնում գալիք տարրում ընթացնելու նոր հազարավոր արտասահմանյան հայերի: Քաղաքներում ու գյուղերում կառուցվում են 2400 տներ: Մինչև տարվա վերջը պատրաստ պիտի լինի 135 հազար քառակրուտի մետր բնակելի տարածություն:

Վերադարձած հայերից շատերն երևանում իրենց համար սեփական տներ են կառուցում: Երևանի քաղաքային Սովետը հողամասեր է հատկացրել 1500 ընտանիքի: Արտաշատի, Բասարգիշարի և մյուս շրջանների վերաբնակները տեղավորվել են նոր տներում: Սեփական տուն կառուցողներից յուրաքանչյուրին տրվում է 25-ից մինչև 30 հազար ոռուրի վարփ, ինչպես նաև շինանյութեր ու փոխադրական: Ցույց է տրվում տեխնիկական օգնություն:

Հայաստանի Կ(բ)Պ ԿԿ-ին հասցեագրված բազմաթիվ նամակներում ներգաղթածները իրենց խորը երախտագիտությունն ու զերմ շնորհակալությունն են Հայտնում ՍՍՌՄ կառավարությանը և անձամբ ընկեր Ստալինին՝ ամբողջ աշխարհում ցրված արտասահմանյան հայերի նկատմամբ ցուցարեած հայրական հոգատարության համար:

ՀԱՐՍՁԱՏ ՀՈՂԻ ՎՐԱ

ԱՂԻՆ.—Մարագիկի գյուղատնտեսական արտելը մեծացավ 11 ընտանիքով, որոնք ժամանել էին Սիրիայից: Նրանք բոլորը տեղափոխեցին նախօրոք պատրաստված ընակարաններում ու դարձան կոլխոզի հավասարաղոր անդամներ: Նոր կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները եռանդով են աշխատում հայրենի հողի վրա՝ գիտակցելով, որ այսուհետև իրենց աշխատանքը ոչ թե տերերի հարստացման պիտի ծառայի, այլ ողջ սովետական ժողովրդի բարօրությանը:

Նրանցից Տ. Պողոսյանն աշխատում է որպես տրակտորավարի օգնական և սոց-

մըրցման մեջ գոտնվելով՝ իր օրվա առաջադրանքը կատարում է 200 տոկոսով: Մեծ ոգերությամբ է աշխատում Ա. Անտոնյանը, աշխատելով կալսիչի վրա նա օրվա առաջադրանքը կատարում է 165 տոկոսով: Պլանները գերակատարում է նաև կոլխոզնիկուհի Մ. Փշյանը: Նոր կոլխոզնիկների ու կոլխոզնիկուհիների աշխատանքային գրգուկներում, ինչպես հայելու մեջ, արտացոլում է նրանց կատարած աշխատանքը: Նոյեմբեր ամսում նրանց յուրաքանչյուրը գրանցված ունի 30—35 աշխօր:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ

Նոր Խարբերդի Ա. Միկոլանի անվան Մանգածքագործվածքային գործարանում հիացմունքով են խոսում վերջիրս Ռումինիայից հայրենիք վերապարձած սովետական նոր բաղաքացի Հմայակ Ստեփանյանի ընտանիքի մասին։ Սովետական Հայաստան զայռացի մի քանի օր հետո Ստեփանյանի ընտանիքը, որ բաղկացած է 15 հոգոց, աշխատանքի

անցավ այս գործարանում։ Հմայակ Ստեփիան յանը հյուսն է, նրա որդիները՝ Ստեփանը, Հարովիտինը, Արմենակը, Համբագասպը, աղջիկները և կինը հմուտ մանողներ ու կարողներ են։ Ստեփանյանների ընտանիքը մտել է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրաթիւունների պատվին ծավալված մցության մեջ և ստանձնած պարտավորությունները գործ է դարձնում։

,,ՊՈՂՄԱՏ“ ՄԵՏԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԵԼԸ

Բուղդարիայից Սովետական Հայաստան վերադարձած հայերի մի խումբ, 53 մարդուց բաղկացած, Լենինականում հիմնեց մետաղագործական արտել, որն ընդհանուր ժողովի որոշմամբ կոչվեց «Պողպահու»։

Լենինականի Քաղսովետի գործում արտելի համար հատկացրել է հատուկ շենք, որն ունի բոլոր հարմարությունները։

Լրիվ կարողությամբ գործում են փականագործական, խառատի, նիֆելի, դարրանցի, մահճակալի, ամանեղենի և ձովող ցեխներ։ Այստեղ արտադրվում են վառարաններ, որոնք պիտանի են վառելիքի բոլոր տեսակների համար և ունեն բարձրագույն հարմարություններ։ Արտադրվում են մահճակալներ ու մահճակալի ցանցեր, որոնք նույրը են, թեթև ու դիմացկուն։ Արտադրվում են նաև բարձրորակ բազմաթիվ ամանեղեններ, անկիցելի արկղներ, դռների, լուսամտաների երկաթե մասեր, փականներ, մեխեր և այլն։

Արտելի Վարչության նախագահ Կարապետյան ասում է. «Թերթիքի ու ուստիոյի շնորհիվ մենք լավ ծանոթ էինք մեր հայրենիքում։ Սովետական Հայաստանում եղած հասարակական, տնտեսական և արտադրության կազմակերպման ձևերին։ Մենք գիտեինք, որ արհեստագորն այսուեղ ապահովուած է մշտական աշխատանքով, որ նա կարող է աշխատել իր ցանկացած տեղում։»

Արտելականներից աշքի են ընկնում Վ. Ռուբենյանը, Օ. Խաչյանը, Հ. Միմոյանը, Թ. Թերզյանը, որոնք արտադրական առաջարանները կատարում են 150-200 տոկոսով։

ՆԵՐԳԱՂԹԱԾ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԿՈՆ

Օրերս Գրողների անանը տեղի ունեցավ արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթած հայ գրողների ստեղծագործություններին նվիրված երեկո։

Երեկոյին ներկա էին գրողներ, արվեստագետներ, ուսանողներ և քաղաքի ինտելիգենցիայի ներկայացուցիչներ։

Երեկոն բացեց Հայաստանի Սովետական Գրողների Միության նակագահ, Ստալինյան մրցանակի լարութեատ Ավ. Խահակյանը, Գրողների Միության անունից ողջունելով երկարամյա տարագրությունից հայրենիք վերապարձած գրչի եղբայրներին՝ ընկ. Խահակյանը ցանկացավ նրանց նորանոր հաջողություններ սովետաշահայ գրականության հետագա վերելքի, մեր հերթական առօրյան պատմկերող բարձրարմեր գեղարվեստական գործեր ստեղծելու բնագավա-

ռում։ Նա շեշտեց, որ հայ ժողովրդի զավակ ները գտնվերով օտարությամ մեջ, միշտ վաս են պահել հայրենիքի սերը, ապրել և ուրախացել են նրա հաջողություններով։ Ընկ. Խահակյանն ասաց, որ միայն բաշխելիների մեծագործ պարտիայի, սովետական կառավարության և մեծ առաջնորդ ընկեր Ստալինի հոգածարության շնորհիվ հնարավոր դարձավ սիրութիքի հայության վերագրածը մայր հայրենիքի։ Ներգաղթած հայ գրողների ստեղծագործությունների մասին գեկոցեց Հայաստանի Սովետական Գրողների Միության քարտուղար ընկ. Գ. Բորյանը։

Ընկ. Բորյանն ընդգծեց, որ գաղութահայ, գրականության պրոգրամիվ—դեմոկրատական ներկայացուցիչները ստեղծագործել ու մաքառել են միշտ հուսալով, որ իրենց

երազած ազատությունը կարող էն գտնելի միայն Սովետական Հայաստանում, որտեղ վերածնված հայ ժողովուրդը տերն է իր կյանքի ու բախտի և կերպում է իր երջանիկ ապագան: Ընկ. Բորբանը հայրենիք վերադարձած բանաստեղծների գործերից բերելով մի շարք օրինակներ՝ ցույց տվեց, որ նրանք ժամանելով օտարության մեջ անսահման սիրով ձգտել են դեպի մայր հայրենիք և գովերգել են Սովետական Հայաստանը, մեր հերոս ժողովրդին և մեծ Ստարինին: Զեկուցողը կարդաց հատվածներ Վահան Թերզյանի, Արամ Արմանի, Հրանտ Հրահանի և ուրիշների բանաստեղծություններից՝ ցույց տալով առաջադիմական գաղափարներ այդ հեղինակների գործերում:

Զեկուցողը նշեց, որ հայրենիք վերադառնալուց հետո արտասահմանյան հայ գրողների քնարը հնչում է նոր ուժով: Նրանք իրենց ամբողջ ձայնով եղանով են Սովետական Հայաստանը, սովետական ժողով-

վրացի սիրավարժությունները, ստալինյան նոր հնգամյակը: Այսուհետեւ ընկ. Բորբանը մանրամասն կանգ առնելով առանձին գրողների վրա, ընդդեց, որ նրանք այսուհետեւ գովելով սովետական գրողների ընտանիքում կտան նորանոր բարձրորակ գործեր:

Զեկուցումից հետո հայրենիք վերադարձած գրողներին ողջույնի խոսք ասացին ընկ. Ստ. Զորբյանը և Ս. Տարոնցին:

Իրենց առեղանդագործությունների ընթերցմամբ հանդես եկան ներգաղթած գրողներ Վ. Թագեսյանը, Գ. Գյուլյանը, Ա. Արմանը, Վ. Դարբինյանը, Հ. Հրահանը, Հովհ. Ղուկասյանը, և Ստ. Ալաջալյանը:

Վերջում հանդես եկավ բանաստեղծ Սարմենը, որը կարդաց արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթած գրողներին նվիրված իր բանաստեղծությունը:

Երեկոն անցավ ջերմ և բարեկամական մինուղինում:

ՌՈՒՄԻՆԱՀԱՅԱՅՐԵՐԻ ՆՎԵՐԸ

Բովուարեստում բնակվող Խոչա Հարությունը երևանի Հանրային գրադարանին նվիր է ուղարկել 395 գիրք: Հիմնականում դա պատմական և գեղարվեստական դրականություն է հայերեն և երոպական զանազան լեզուներով: Ուղարկված գրքերի մեջ է գոնվում ամենահին հրատարակություններից՝ 1596 թվականի, այսպես կոչված «Paradignata»-ը, որտեղ ներկայացված են մեծ թվով ազգությունների գրերի նմուշները: Հայկական գիրք ներկայացված է ավելացրանից բերքած փոքրիկ հատվածով: Գրքերից շատերը վերաբերում են հայ ժողովքորի կուլտուրային, կենցաղին, պատմական ճակատագրին: Նրանց մեջ է գտնվում ֆրանսերեն լեզվով՝ 1760 թվին հրատարակված «Համաշխարհային պատմությունը»՝ կեց հատորով: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում է Ա. Ա. Վասիլիկի «Բյուզանդական կայսրության պատմությունը»-ի ֆրանսերեն թարգմանությունը՝ հրատարակված 1936 թվին Փարիզում:

Արևմտա—հյուրապական գրականությունից ուշադրություն են գրավում Շերսպիրի սփառ-շելի հրատարակությունը 21 հատորով:

ԱՐՏԱՍԱՀԱՅԱՆԻ ՀԵՏ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ

Դեկտեմբերի 9-ին Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության շենքում տեղի ունեցավ անդիշական մեծ գրամատուրդ Վիլյամ Շերսպիրի դա-

անգիրենն և գերմաներին լեզուներով, Շիլերը՝ 12 հատորով, Գյութեն, Հայնեն և այլն: Շատ շքեղ են Հոմերոսի երկերի լրիվ ժողովածիվ չորս հատորներով՝ բնագրով և գերմաներին լեզվով:

Ուզարկված է նաև չափազանց շատ նկարչական ալբումներ հայտնի նկարիչներ Սանդրո Բուոնուչչի, Վանհովի և այլոց աշխատանքներունքում: Երկու ալբումներում զետեղված նրակարներով կարելի է ծանոթանալ հայ ինքնաշխարհիչ կայսրի: Զամբախյանի հարուստ ստեղծագործության հետ, նրանք պարունակում են 150 աշխատանք՝ պորտրեններ, պերզամեներ, հատուրմանքություններ:

Հայաստանի հնագործյան մանրանկարչությունը ներկայացված է մի առանձին ալբումով:

Հայաստանի պատկերասրահը ուսումնական հայերից ստացել է նկարիչ Բ. Վարդանյանի 50 և նկարիչ Գ. Ավագյանի երկու նկարները: Ավագյանի աշխատանքներից մեկը ուղարկված է հատուկ՝ Ավետիք Իսահակյանի համար:

Ստացված է նաև 60 մահճակալից բաղկացած հիվանդանոցի սարքավորում:

ԿԱՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

րաշրջանին, կյանքին ու ստեղծագործությունը նվիրված ցուցահանդեսի բացումը: Ցուցահանդեսի էքսպոնատները ուղարկված են ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի

անդիքական ընկերության կողմից:
 Եքսպոնատների թվում կան թատերական զգեստների էսֆիզներ, դպրակների, եկեղեցիների լուսանկարներ, Շեքսպիրի դարաշրջանի քաղաքացիների լուսականի, ապառագինության և տնային գործածության առարկաներ, Շեքսպիրի պիեսների հուշարարական նմուշը, Խոնդոնի 16-րդ դարի հատակադիմքը և քարտեզը:

Ցուցահանդեսը Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության արմեստի սեկցիայի կողմից լրացված է «Շեքսպիրը հայ բեմում» բաժնում, որը

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԵՏ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՄԻ ՀԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՄԵՍՏԻ ՍԵԿՑԻԱՅԻ ԿՈՂՄԻ ԼՐԱՑՎԱԾ Է ՇԵՔՍՊԻՐԻ ՀԱՅ ԲԵՄՈՒՄ»

Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությանը կից կազմվել են գրականության, ժողովրդական առողջապահության, և արվեստի սեկցիաներու նրանք կոչված են կուլտուրական կազմականության և արտասահման առաջադիմական ընկերությունների և կազմակերպությունների հետ:

Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության սեկցիաների մեջ մտնել են Հայկական ՍՍՌ գրականության, թատրոնի, երաժշտության, կերպարվեստի և ժողովրդական առողջապահության գործիչների:

Գրականության սեկցիայի բյուրոյում ընտրված են Ավ. Խաչակրյանը, Դ. Դեմիքյանը, Սո. Զորյանը, Ն. Զարյանը, Գ. Արգյանը, և ուղարկված է ընտրված Դ. Դեմովյանը:

ՍՍՌ գրականության սեկցիայի բյուրոյում ընտրված են Ավ. Խաչակրյանը, Դ. Դեմիքյանը, Սո. Զորյանը, Ն. Զարյանը, Գ. Արգյանը, և ուղարկված է ընտրված Դ. Դեմովյանը:

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԱԼ. ՍՊԵՆԴԻԱՐՈՎԻ ԾԱՆՐՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ

Երևանի հասարակայնությունը արժանավայել կերպով նշեց անվանի կոմպոզիտոր Ալ. Սպենդիարովի ծննդյան 75-ամյակը:

Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի

պատկերում է պլխավորապես Շեքսպիրի դրամաների բեմադրությունները Սովետական Հայաստանի թատրոններում:

Ցուցահանդեսը բաց արեց Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության արվեստի սեկցիայի փոխնախագահական արվեստի վաստակավոր գործիչ Արա Սարգսյանը, որից հետո «Շեքսպիրը հայ բեմում» թամարով հաղորդում արեց արվեստի սեկցիայի փոխնախագահական պետի պատրիկայի ժողովրդական արտիստ Գ. Զանիբեկյանը:

ԿԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՒՄ

ված Դ. Դեմիքյանը, փոխնախագահներ՝ Դ. Աբովյը և Սո. Զորյանը:

Առողջապահության սեկցիայի բյուրոյում ընտրված են՝ Ա. Մելիք-Աղամյանը, Ռ. Յովանյանը, Գ. Ղենդյանը, Ա. Հակոբյանը, Ն. Հակոբյանը, Բ. Ֆանարջյանը և ուղարկված ժողովրդական առողջապահության սեկցիայի նախագահ է ընտրված Գ. Ղենդյանը, փոխնախագահներ՝ Ա. Մելիք-Աղամյանը և Ռ. Յովանյանը:

Արվեստի սեկցիայի բյուրոյում ընտրված են Մ. Սարյանը, Հ. Դանիելյանը, Դ. Զանիբեկյանը, Ա. Գուլակյանը, Վ. Վաղարշյանը, Հ. Բեկնազարյանը, Ա. Սարգսյանը, Ք. Քուշենարյանը և ուղարկված Հ. Դանիելյանը, Փառական կամաց արվեստի սեկցիայի նախագահ է ընտրված Հ. Դանիելյանը, փոխնախագահներ՝ Ա. Մելիք-Աղամյանը և Ռ. Յովանյանը:

Արվեստի սեկցիայի բյուրոյում ընտրված Ա. Վ. Սարյանը, Հ. Դանիելյանը, Դ. Զանիբեկյանը, Ա. Գուլակյանը, Վ. Վաղարշյանը, Հ. Բեկնազարյանը, Ա. Սարգսյանը, Ք. Քուշենարյանը և ուղարկված Արվեստի սեկցիայի նախագահ է ընտրված Հ. Դանիելյանը, փոխնախագահներ՝ Գ. Զանիբեկյանը և Ա. Սարգսյանը:

ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅ ԹՂԹԱԿԻՑ-ԱՆԴԱՄՆԵՐ

Ա. Ի. Ակիխանյանին. — Գիղիկո-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի գծով:

Ի. Լ. Կենևյանցին. — քիմիական գիտությունների բաժանմունքի գծով:

Ա. Ա. Ավագյանին. — բիոլոգիական գիտությունների բաժանմունքի գծով:

Ա. Գ. Բարխուդարովին. — գրականության և լեզվի բաժանմունքի գծով:

Ապահովականին. — գրականության և լեզվի բաժանմունքի գծով:

Ապահովականին. — գրականության և լեզվի բաժանմունքի գծով:

Ապահովականին. — գրականության և լեզվի բաժանմունքի գծով:

գործունեության մասին ներածական խոսք ասաց ուսպուբլիկայի արվեստի վաստակավոր գործիւն երաժշտագետ Ս. Գասպարյանը:

Այդ օրը Երևանի և Մոսկվայի ուղիղությաններից հաղորդվեցին նաև Հայուկ Համերգներ:

ՆՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՎԱՌԱՐԱՆ

Երևանի Կաբելի գործարանում շահագործման հանձնվեց էլեկտրալար պատրաստող ցեխի նոր խոշոր էլեկտրական վառարանը: Վառարանում էլեկտրական շիկացման է ենթարկվում լարը, որի հետեւ վաճառք նաև փափկանում և շիտորմենքու հատկություն է ստանում:

Մինչև այժմ գործարանը էլեկտրալար էր ստանում Միության զանազան գործարաններից: Նոր վառարանի շահագործումը վերևանի Կաբելի գործարանը կտա էլեկտրալարերի սեփական արտադրանք:

(224)

ՄԱՆՐ ՀԻԴՐՈՏՈՒՐԲԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Մանր հիդրոտուրբինների գործարանը ստալինյան նոր հնգամյակի նորակառուցաներից է: Այդտեղ կատարվելու է մոտավորապես 17 միլիոնի շինարարություն, և երբ գործարանը լրիվ կարողությամբ շահագործման հանձնվի, առարեկան կտա 300

հիդրոտուրբին: Ցեխների կորպուսներն արդեն բարձրացել են: Մեխանիկական ցեխն արդեն լիովին պատրաստ է: Սարքավորումներն ստացվել ու տեղադրություն են: Սարքավորումների տեղադրումն ավարտվեց Սովետական Հայաստանի 26-րդ տարեդարձի օրը:

Թ Ա Լ Ի Ն Ի Զ Ր Ա Ն Ց Ք Ը

Թեսպոբիկայի նոր հնգամյա պլանի կառու խնդիրներից մեկը թալինի ջրանցքի չինարարությունն է, որի աշխատանքներն սկսվել են վաղուց:

Հայաստանի հողա—կլիմայական պայմաններում գյուղատնտեսության զարգացումը մեծապես կարգված է ոռոգման ցանցի ընդարձակման հետ: Այդ տեսակետից թալինի ջրանցքի կառուցումը դառնում է առաջնակարգ խնդիր:

Նախատեսված է այդ ջրանցքի միջոցով ոռոգել և ջրով ապահովել թալինի ու Հոկտեմբերյանի ջրանների ձմեռային արոտավայրերը՝ 76 հազար հեկտար տարածությամբ: Դրանից՝ 34 հազար հեկտարը հատկացվելու է տեխնիկական թանկարժեք կովառության համար, առողջապահ մշակության և բանջարաբուծության համար, իսկ 42 հազար հեկտարը (որն առահովվելու է գործածական ջրով)՝ կերաբույսերի մշակության և անասնաբուծության զարգացման համար:

Թալինի ջրանցքը ռեսպոբլիկայի ժողովրդական տնտեսառության մեջ բացառիկ է ինալարու Ֆրանցքը ընդունվող օգտա-

կար տարածության վրա նախատեսված է կազմակերպել երկու խոշոր շրջան, որոնք տնտեսական տեսակետից ետք չեն մնա Արտաշատի կամ Հոկտեմբերյանի շրջաններից Ապահով ջրանների աշխարհագրական պայմանները լայն հնարավորություն են տալիքի լիովին մեքենայացներու գյուղատնտեսական աշխատանքները, աճեցներու բազմատեսակ կուլտուրաներ, զարգացներու պահածոների դինու—կոնյակի արտադրությունը:

Այդ տերիտորիայի զգալի մասը, որը բնում է 42 հազար հեկտար տարածություն և կազմում է ռեսպոբլիկայի ձմեռային արոտավայրերի 30 տոկոսը, ապահովվելու ջրով և ծառայելու է անասնապահությանը Այստեղ լայն նախադրյալներ կան կերպ հղոր բազա ստեղծելու և անասնաբուծությունը լայն թափով զարգացնելու համար Զրի պակասության հետևանքով, այժմ այտարածության վրա ձմեռելու համար պահվում են ոչ ավելի 30 հազար գլուխ և զգայուրավոր անասուն, իսկ ջրով ապահովելու գեղքում այդ վիճականակը կհասնի ավելի քան 150 հազարի:


Վերոհիշյալ տերիտորիաների ջրամատա-

կարարման աղբյուրը հանդիսանում է Ախուրյան գետը՝ Դարսալայ վտակով։ Դրանց ջրերը ռացիոնալ օգտագործելու համար նախատեսվում է կառուցել Ախուրյանի ջրամբարը։

Պատկերացնելու համար, թե ջրանցքի կառուցումը ինչպիսի ջանքեր և պահանջում, բավական է նշել, որ միայն հողային աշխատանքների ծավալը կազմելու և մեկ միլիոն խորանարդ մետր։ Կառարվելու է ավելի քան 250 հազար խորանարդ մետր բետոնային և քարային շարվածք։ Արդեն մոտ 800 դամետր տարածության վրա հանվել է

116 հազար խորանարդ մետր հողային փորվածք։ Նախապատրաստություն է տեսնված մեքենայացնելու խորը շերտի հողի հանումը։ Սարքավորվելու է հզոր կաբել կրան, որով հնարավոր կլինի 16 մետր բարձրության և 600 գծամետր երկարության վրա, ցանկացած տեղում իշեցնել զանազան շինանյութեր։

Ավարտովում են կենտրոնական էլեկտրակայանի, ենթակայանների սարքավորումը և բարձր լարման հաղորդման գծի անցկացումը, որոնք շինարարությունը կապահովեն էլեկտրական էներգիայով։



ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿՑԱՆՔ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

ՄՈՍԿՎԱ-ԿՐԵՄԼ

Հայ ժողովրդի լավագույն բարեկամ

ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ

Զեր նախաձեռնությամբ, Սովետական Կառավարության ընդունած պատմական որոշ-շումը՝ Սփյուռքի հայությունը իր Հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձնելու առթիվ, իրանում ապրող հայերի կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ և ըստեղծեց հայրենասիրական աննախընթաց մի վերելք:

Սովետական Կառավարության այդ մէջուր բացեց հայ ժողովրդի պատմության մէջ մի նոր և փայլուն էջ: Առաջին անգամ Սովետական իշխանության օրոք սկսեցին իրադրություն հայ ժողովրդի դարավոր իղձերը, ամբողջ աշխարհում ցրված հայերի միացումը իրենց Մայր Հայրենիքում, Սովետական Հայաստանում:

Այդ պատմական ակտոի իրագործման համար, հայերի ներգաղթի Օժանդակ Կեդրոնական Կոմիտեն, իրանի հայկական առաջադիմ քաղմաթիվ կազմակերպությունների աջակցությամբ, ճենարկեց հայերի ուղղումանը դեպի Սովետական Հայաստան:

1946 թվի հունիսի 14-ից մինչև հոկտեմ-

բեր 20-ը Սովետական Հայաստան են ուղեւ վորմել 20,700 հայեր:

Հայերի ներգաղթի առաջին տարվա աշխատանքների ավարտման կապակցությամբ իրանի ներգաղթին Օժանդակող Կեդրոնական Կոմիտեն իր անկեղծ շնորհակալությունն է հայտնում Ձեզ, հայ ժողովրդի ազատագրող՝ Մեծ Ստալինին:

Իրանի հայերը երբեք չեն մոռանա Զեր հոգատար խնամքը սփյուռքի հայության վերաբերմամբ, որոնք երկար թափառումներից հետո Զեր հանճարի շնորհիվ կարելիություն ստացան վերադառնալ իրենց Հայրենի երկիրը և լծակցվել իրենց փառահեռ հայրենիքի, Սովետական Հայաստանի մեծ շինարարությանը:

Իրանի ներգաղթին Օժանդակող Կեդրոնական Կոմիտեն հավաստիացնում է Ձեզ, սիրելի հոսկի Վհսսարինովիշ, որ նա կլարի իր բոլոր ճիկերը ափելի ևս հաջողությամբ կազմակերպելու համար 1947 թվին հայերի ներգաղթը դեպի Սովետական Հայաստան:

Նախագահ՝ ԽՈՄՍԱՆ ԽՍԱՅԿ
(«Վերածնունդ» թիվ 246, 1946 թ.)

ԺՈՂՈՎ ԲԲՅՈՒՍՍԵԼՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ԲԲՅՈՒՍՍԵԼ— 11 դեկտեմբերի (ՏԱՍՍ)՝ Բելժ գործակալությունը հաղորդում է. Հայաստանի Սովետական Սովետական Ռեսպոբլիկայի 26-րդ տարեդարձը՝ դեկտեմբերի 7-ին նշվեց Բրյուսելի Գեղարվեստի պալատում կայացած ժողովով, որին ներկա էր Սովետական Միության դեսպան Պավլով:

Ճառերով հանդիս եկան Սովետական Հայաստանի բարեկամների ընկերության նախագահ Մուրադյանը, Ֆրանահայի հայազգացին ճակատի գլխավոր քարտուղար Ասատրյանը, Բրյուսելի համալսարանի սեկտոր պրոֆեսոր Վան Դեն Դունդենը:

ՀՐԱՄԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ Ի ՆՊԱՍՏ ՆԵՐԳԱՂԹԻ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՏՈՒԱՐԻ

Հ. Բ. Ը. Միության Մեծագույն նյութ-թորթի և Շրջակալքի ներգաղթի Հանգանակի Հանձնախումբի կողմեն սարքած էր Հրապարակային համագայլին ժողովը որ տեղի ունեցակ սեպտեմբեր 29-ին, Թառևն Հոլի մեջ:

Ժողովը բացվեցավ Տիրայր Սրբազնի մաղթանքով:

Տ. Տ. Տոնելլան ներկայացուց Հանգանակության կեդր. Հանձնախումբի նախագահ Տ. Լ. Կերտանը, որը շեշտեց հանգանակության կարևորությունը:

Հ. Բ. Ը. Միության կեդր. Վարչության նախագահ Տ. Արշակ Գարակեովյան ուղերձով մը շեշտեց ներգաղթի հանգանակության կարևորությունը, երախտագիտություն հայտնեց և Հայաստանի կառավարության, որ իր դռները բացավ գաղթական համերու առջև և հաղողության թե Վարչությունը առանց հանգանակության արդյունքին սպասելու, ափեկի քան կես միլիոն տոլար հարկացուցեր է նպատակին:

Հ. Բ. Ը. Միության Վարիչ-Պատվիրակ Տ. Վահան Մալեցյան դարձյալ շեշտելով քանից կրկնած իր դավանանքը, թե հայոց համար ապատաք Հայաստանի շիք փրկություն, հարեց թե դարերի ի վեր ավագ կարևորություն ունեցած է ցեղային գոյության հարցը, և թե՝ մեր ազգը, հակառակ թշնամիների շրջապատված, հաղածված ըլլալուն և աքսորական դառնալուն ապրած է, շնորհիվ փր ինքնապահպանման բնադրին, շնորհիվ երեք գլխավոր ազդակներու, — նախ՝ Հայ եկեղեցին, Ֆրկորոր՝ Հայ լեզուն, և այժմ այ՝ հայ հայրենիքը:

"I Ask You, Ladies and Gentlemen" -ի և ակուս Զուարթ քերթողությանց հեղինակ Տ. Առն Զավեն Սյուրմելլան (առաջինը հաստատու համբավ մը ապահովեց իրեն ամերիկյան բանիմաց լայն շրջանակի մեջ, իսկ երկրորդը, որ 1924-ին հրատարակված

